


7442  
7443  
7444  
7445  
7446  
7447





660  
52  
piano

Printed in Turkey

Ա-69 Ալեքանց չորթոցի  
Հայոց Հարքութան համար

# ԿՈՏՐՎԱԾ ՍԻՐՏ

891.99

Ա-66 ՎԵՊ

Մ

Էկզումար

100

ՅՈՎԱԿԻՄ ՍՈԼՈՎԵԱՆԻ.

ՄՈՈԿՈՒԱ

ՏՊԱՐԱՆ Բ. ԲԱՐԽՈՒԹԱՐԵԱՆԻ.

1898.

(106)

Printed in Turkey

3856

ՅԱԴՐԱՅԻՆ

ԲՈՒԺ

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 4 Декабря 1897 г.



732

39

2003

Tipografija X. Barxudarjan, Moscow, Mjasnitskaya, d. Ermakova.

## ԿՈՏՏՎԱԾ ՍԻՐՏ

Ա Է Պ

Ա.



Քաղաքի աղայոց գպրոցի հնաձեւ և տաղակալի գահը մոռամ, սեղանի առաջ, երեկոյեան ժամանակ, նստած էին երկու մարդ, որոնք սպասում էին մէկին, որպէս զի անցնեն հերթական գործերին։ Մրանք էին գպրոցների հոգաբարձու Առիւծեանը և քարտուղարի պաշտօնակատար՝ Ղաղար Մժեղեանը, իսկ բացակայողը հոգաբարձութեան միւս անդամ՝ Մկրտում աղան, որ սովորաբար միշտ սիրում էր սպասել տաւ իրան։

Այդ պաշտօնական գահին վճռվում էին ապագայ սերնդի յառաջադիմութեան գործերը: Քանի - քանի խեղճ ուսուցիչների վիճակն է որոշվել այստեղ:

Եատ չարն ու բարին է տեսել իր դրյութեան ընթացքում Ա. քաղաքի տղայոց դպրոցը: Նա իր պատմութեան էջերում բազմաթիւ յուղիչ գէպքեր է արձանագել, գէպքեր, որոնք յայտնի են եղել իրանց աղմկալից և դրգոիչ բնաւորութեամբ, որին զոհ են գնացել շատ ուսուցիչներ և որից կաղել է ուսման գործը:

Տարիների ընթացքում այդ գործոցն ենթարկվել է փոփոխութիւնների՝ երկդասեանից գարձել է միդասեան և հակառակը. աշակերտների թիւն էլ ըստ այնմ տարբերվել է: Թէ այսպէս, թէ այնպէս՝ այդպէս եղել է, այդպէս էլ մնում է: Մի քանի յոռետեսների բամբասանքների վրա ուշադրութիւն դարձնող չի եղել չնայելով որ սրանք ամեն մի յարմար ժամանակ իրանց մաղճը թափել են «իննամատարների» զլիին:

Մանաւանդ այդպիսի բամբասանքների առաջ իր ականջները փակել գիտէ Առիւծեանը, որի ուղղութեան կուրօքէն հետեւում է Մկրտում աղան: Մրանք այսօր հրաւիրված են հերթական նիստի:

Քանի - քանի տարի է, որ այդ մարդիկ մէկ-մէկու վրա վերընտրվում են իրանց պաշտօնի մէջ: Միայն այդ վերջին օրերս, նոր ընտրութեան ժամանակ, մի քիչ ամպեր կուտակվեցան ընտրողական ֆօնի վրա, բայց նրանք չունեցան ոչ մի վտանգաւոր նշանակութիւն և այդ մարդիկ կրկին վերընտրվեցան ահագին ցոյցերով:

Այդպէս տարիների ընթացքում Առիւծեանն ուղղութիւն է տալիս կրթական գործին, իր ետե ունենալով Մկրտում աղային: Միայն կրթական գործերը չեն, որ պարտական են իրանց ընթացքով այդ մարդուն: Առիւծեանի հասարակական պատուաւոր դիրքին դա մի աննշան գիծ կարող է համարուել: Նա միենոյն ժամանակ եկեղեցու երեսփոխ է, քաղաքային վարչութեան իրաւասու է: Պէտք է ասած՝ Առիւծեանը գիտէ իր գիրքը և հեղինակութիւնը բարձր պահել: Նրա բնաւորութիւնն է իր ուղածին պէս գործել և անպատճառ արգէն վաղօրօք իր չափած ու ձեած ուղղութիւնը տալ գործին: Այդ բանին նա կարողանում էր այնպիսի ձեւ տալ, որ շատ քչերի համար էր այդ նկատելի: Երեսանց, մինչեւ անգամ, նա միշտ աշխատում էր ցոյց տալ թէ յարմարվում է և լսում է ուրիշի կարծիքները, եթէ նոյն իսկ այդ կարծիքները մութն էլ արտայայտվելիս լինէին:

Այդպէս էլ վարվեց և այդ անգամ: Առիւծեանը տնտղում է իր առաջ թափթափած թրղթերը և առանձին ուշաղրութեամբ նուիրվում նրանց էական կէտերին, բայց վճիռներ կայացնելու դեռ չի շտապում քաղաքավարութիւն համարելով մի քիչ էլ սպասել իր ընկերին: Իսկ քարտուղար Ղազարն առանձին քծնութեամբ ծառայութիւն է ցոյց տալիս իր «իշխանաւորի» իւրաքանչիւր աինարկին, նրա ձեռքի ամեն մի թեթև շարժմանքին:

Առիւծեանն այսօր մեծ հաջոյքով է թերթում գործերը: Այդ բանը նկատվում է նրա երեսի ծալքերից, որոնք նրա լիք երեսի զանազան կողմերից գնալով կենտրոնանում են նրա կեռակոր քթի թաւամաղ ստորոտի տակ:

— Հօրեղբայրդ շատ ուշացաւ, — բարձրացրեց նա զլուիր թղթերից, — երեւի թէ չի դաւ... .

— Խոստացաւ գալու, մինչև անգամ հագնված էր և պիտի ինձանից յետ իսկոյն դուրս գար... տեսնեք թէ ինչ է պատահել...

— Ուրեմն կդայ—քիչ էլ սպասենք...

Յետոյ Առիւծեանը զրչակոթը տանելով քըթին և, մի խորհրդաւոր հայեացք ընդունելով, հարցրեց.

— Դու չիմացա՞ր, արդեօք ձշմարիտ է, որ ուսուցիչ Մնակեանը պրօպագանդա է արել մեր դէմ անցեալ օրվայ ընարութիւնների ժամանակ:

— Ոչ դեռ ես չեմ իմացել:

— Միթէ քեզ չի աջողվում: Դու աշխատիր քեզ մօտ պահել նրանց և այդպիսով կարող ես իմանալ... Քո յարաբերութիւններդ ի՞նչպէս են ուսուցիչների հետ:

— Վաստ չեն:

— Ուրեմն:

— Կարծում եմ նա մասնակից լինի, առհասարակ բանից այնպէս է երեսում: Ժողովում, կանգնած՝ ամբողջ ժամանակ, երբ խօսք էր բացվում ձեր վրա, նա ծիծաղում էր... Բայց ես, 'ի հարկէ, կիմանամ—առ այժմն քանի օր է անցել որ՝ երկու օր դեռ չկայ, ոչ ոքի հետ դեռ չեմ պատահել...

— Իմացի՛ր, իմացի՛ր, այդ շատ հարկաւոր է մեղ համար: Ես վաղուց եմ նկատում, որ նա մեղ գէմ է: Այդ բանն աշխատիր քըքրել... Բայց, երեւի, հօրեղբայրդ չի դաւ—յանկարծ փոխեց նա խօսքը, — կարդա գործերը, արձանագրութիւնը գրենք, պատրաստենք, եթէ ոչ ես կուշանամ... Նա հանեց իր ժամացյցը և մի շատաղական շարժում գործեց իր տեղում:

— Մանկավարժական ժողովը, — կարդաց Ղազարը, — խնդրում է, որ գպրոցի մատենադարանը յանձնվի իրան, որպէս զի կարողանան աշակերտներին զիրք բաժանել...

— Մերժել. թող իրանց դասերով պարապեն. զրբեր կարդալով դասերից յետ կընկնեն: Էլլի ի՞նչ է... .

— Երկրորդ գործը... խնդրում են ուսումնարանը ստանայ հայոց և ոռւսաց լրագիրներ և մանկական ամսագիրներ... .

— Նյոնպէս մերժել, փող չկայ: Էլլի... .

— Մանկավարժական ժողովը յարմար է դատել կազմել մի մանկական ներկայացում առաջիկայ: . .

— Զի հարկաւոր, չի հարկաւոր, աւելորդ բաներ են. շատ շուտ են ուղում երեխաների մոքերը բացել: Էլլի ի՞նչ է... .

— Այլ ևս ոչինչ:

— Ուրեմն զրիր օրագրութիւնը, որ այժմն էլ վերջանայ, գնայ իր բանին:

Ղազարը զլիսի շարժումով պատրաստականութիւն յայտնեց և սկսեց կազմել օրագրութիւնը:

Առիւծեանն արդէն մոքում կազմում էր ծրագիրներ ուրիշ գործերի վերաբերմասր, ինչ պէս ներս մտաւ Մկրտիչ աղան:

— Ներողութիւն, որ մի քիչ ուշացայ, — վսիսաց նա, պարզելով ձեռքը և իր յաղթանգամ մարմինն իջեցնելով աթոռի վրա, — մի ժամ է, ուղում եմ գալ բայց չի աջողվում: Բանը միշտ թարս է գալիս, երբ գործ ունեցար մի բան պէտք է պատահի: Պատրաստվում էի գուրս գալ արդէն ոտս դրել էի շեմքի վրա, տեսնեմ՝ Գուսարօվը ձի է բերում... Ուղիղն ասած՝ սև ձիս շատ պառաւել է, վաղուց է, որ մի լաւ ձիու աչք եմ ման ածում: Գուսարօվն ասում էր, որ մի լաւ ձի ունի — և հակառակի նման այսօր չի բերել — բայց չհաւանեցի՝ քամակի ոտով մի քիչ լաւ չի վերառնում, գոյնն էլ ձերմակ էր... ձերմակ ձի չեմ առնում... Բայց, Օսէփ, ամման շատախօս է այդ Գուսարօվը, մի ժամ է, ցանում եմ, ձեռ չի վեր առնում էլլի... .

Առիւծեանն արդէն ձանձրացել էր այդ մասնաւոր անտեղի պատմութիւնից, բայց չկամենալով իր զինակցին վերաբերել աշխատում էր ամեն կերպ զապել իր անհամբերութիւնը: Նա գիտէր ծածկել իր զգացմունքները: Բայց սրան պատասխանեց Ղազարը:

— Դուք, հօրեղբայր, այնպիսի բաներ էք պարտում — մէջ ընկաւ նա, պարզելով զրչա-

կոթը դէպի թանաքամանը,—որ երբէք ձի ջոկել չք կարող:

— ԲՇ, —մի արհամարհական շարժում արեց Մկրտում աղան, —ինչ է ասում, Օսէփ, —ջահիլ է ախր, ձայնը տաք տեղիցն է գուրս գալիս, Էնդուր է այդպէս խօսում: Ինչ շատապելու բան ունեմ, ուե ձիս դեռ ծառայում է, այս բոպէ այնպէս այստեղ բերեց, որ չես ասիլ թէ 17 տարեկան է: Ճերմակ ձի ինչի եմ առնում, քանի որ այդ գոյնը բազիս հողին չի գալիս...

— Հողին չի գալիս որն է, նախապաշարմունք միայն, — էրկին փորձ արաւ Ղազարը հերքելու իր հօրեղըօր յետամնաց հայեայքները:

— Դուք ջահիլներդ չէք հաւատալ — աշխատեց առաջ տանել իր միտքը Մկրտում աղան, — բայց զա փորձած բան է: Երեակայիր, Օսէփ, յիշում ես, որ մի ճերմակ ձի ունեի, հէնց որ տանում էին ախոռ, զիշերները խեղձ կենդանուն կանգնել չին թողնում՝ չարչարում էին ու չարչարում... Խեղձ կենդանին երկու շաբաթվայ մէջ այնպէս լղարեց, որ վերջը կէս զնով ծախեցի: Մէկ այս, — մէկ էլ եթէ մի բանի վրա աչք դրին, զին տուին, այն բանը ծախիր, թէ չէ իմացիր — այն բանի գլխին մի փորձանք կը-դայ... Միտքդ է, թէ չէ, չգիտեմ, այդ ճերմակ

ձիուց առաջ մէկ կապոյտն ունէի, 400 արծա-թով էի առել — այնպիսի ձի էր որ, մի կեր, մի խմիր, նրանով հիացիր: Առածիս էքսի օրը դալալը գալիս է, էլի այդ Գուսարօնն էր, 100 մանէթ զուտ աշխատանք է տալիս, թարավի, չտուի — ինչ եղաւ վերջը՝ մի շաբաթից գոզաւ ձիս ափախ - չափախի եկաւ՝ սատկեց...

Առիւծեանն այլ ևս չէր լսում իր պաշտօ-նակցի պատմութիւնը և նայում էր Ղազարի զրելուն: Այդ ժամանակ Ղազարը վերջացրեց զրելը, Առիւծեանը վերջացրեց թերթը, զրեց Մկրտում աղայի առաջ և առաջարկեց ստո-րագրել:

— Այդպէս իմացիր... — հանելով ակնոցները գեռ չէր գագարում իրատել Ղազարին Մկրտ-տում աղան: — Այ գրելու բան եղաւ, խօսի՛ր, տե՛ս ես այդ բանում կվիճեմ... փաս...

— Այստեղ պէտք է ստորագրել — կրինեց Ա-ռիւծեանը, հանելով ժամացցը:

— Ստորագրենք, ինչ կայ որ, — Մկրտում ա-ղան թամբեց իր քթածայրը պէնսնէով և սկսեց թղթի վրայ դողդոջիւն ձեռքով ձետիերպել իր աղգանուան տառերը:

— Էլի բան կայ. — հարցրեց նա, զրչակոթը ցած զնելով:

- Ո՞չ, —պատասխանեց Առիւծեանը:
- Նտապում ես ի՞նչ է, տեղ ունե՞ս զնալու, —հարցրեց Մկրտում աղան, Առիւծեանի շարունակ ժամացոյց հանելը տեսնելով:
- Ոյն, էլի գործ ունեմ, —ասաց նա:
- Ո՞վ է քեզ ասում ամեն տեղ զլուխոդ կոխիր, —հանաք արեց Մկրտում աղան, —համ երեսփոխ ես, համ հոգաբարձու, համ էլ դումայի իրաւասու, այստեղ Սօկրատի զլուխն է պէտք, որ մարդ կարողանայ տակից դուրս գալ:
- Ինչ անես, եղբայր, չի լինում, ես ինքս ուզում եմ ո՞ր. —ընտրում են, ինչ ես անում... Տեսնում ես, մէկէլ օրը որքան էի հրաժարվում, էլի ընտրեցին. . .
- Հանաք եմ անում, հանաք եմ անում, առաջի խնդրողն ինքս էի խօ: Աստուած շնորհ ու առողջութիւն տայ. ծառայենք, ինչու չէ, հարկաւոր բան է. . .
- Տեսնում ես... Այժմ առնս ճարտարապետը սպասելիս կլինի:
- Ի՞նչ կայ որ, —ղարմացաւ Մկրտում աղան:
- Մի լաւ բան եմ մտածել, տեսնենք, եթէ զլուխ եկաւ, քար էլ հարկաւոր կլինի:
- Այ այդ զօլայ բան է, քար կծախենք: Ի՞նչ ես շնում:

— Ժամկոչների համար տուն եմ ուզում շենել: Խեղձերը նկուզում են ապրում, բայց սրանից քրեհ են տալիս... Ուզում եմ, լաւ տուն շինեմ, որ իւրաքանչիւր ժամկոչն այդպէս, մօտաւորապէս, երկու երեք սենեակ ընկնի, և ձրի նրանց տալ: Նրանք էլ եկեղեցուն են ծառայում, աղքատ մարդիկ են, պէտք է օգնել... Տարիներով եկեղեցու գումարները խօ չեն պակասում—աւելանում են, պէտք է եկեղեցիները պայծառ պահել թէ չէ:

— Ասար ու թողար... Այնքան լաւ բան ես մտածել, որ տաել չի ուզել:

— Քարը քանով կտամ:

— 17 մանէթ:

— Թանգ է:

— Ինչ ես ասում, հաղարը 17 մանէթ թանգ է, —քաղաքում քար չկայ: Ինչ անում ես, չսա անում, շուտ արա — քարը զլուխ է խփում, երկու շաբաթից էլի մի-երկու մանէթ զին կառնի. . .

— 15-ով:

— Զեռք չի տալ, աւել իմ վրաս է. . .

— Լաւ 16 լինի, 6 ամիս էլ ժամանակով:

— Տեսամր—այդ էլ նոր ցաւ: Լաւ, լաւ, դու զործը զլուխ բեր, մեր վրա բանը չի մնալ մի

բան կանենք, ինչ անենք՝ եկեղեցու համար է,  
եօլա կպահնք. . .

— Բանեը զլուխ եկած է համարեա: Այսօր  
տեր Մակարի մօտ էի, եկող շաբաթ ժողով է  
նշանակված... կառաջարկենք ու վերջացաւ:

Առիւծեանր վեր կադաւ:

Այդպիսով «ազգային խնամատարները» դուրս եկան ուսումնաբանի դահլիճից:

**Բ**աժանվելով Առիւծեանից Մկրտում  
աղան հրամայեց կառապանին քը-  
շել ձիուն սուն: Կառքը սլանա-  
լով տարաւ Մկրտում աղային և  
Ղազարին: Այդ ժամանակ նրանց մէջ խօսք բաց-  
մեղ. սկսողը Ղազարն եղաւ:

— Թուք զարձեալ ոչինչ չասացիք, — յուղվելով ասաց նա:

— Ի՞նչ բան... Հա, քո կործիդ մասին ես  
ասում, — տեսնում ես, չեղաւ, տեղ է շտապում:  
Ուրիշ անգամ չի կարելի ի՞նչ է:

— Այսօր ամենայարմար ժամանակն էր, մինչեւ  
անդամ ես ինքս էի ուզում խնդրել բայց ա-  
սացի, որ ձեր միջամառթիւնն աւելի լաւ կը-  
լինի. . .

— *LwL*, *Ubstoffj:*

— Յետոյ այն որ կարող ենք ժամանակը բաց թողնել։ Շուտով տէր Պօղոսի տարին լրանումէ, ինչ անում ենք, չենք անում, պիտի շտապել...

Մկրտում աղան լրեց և կարծես սկսեց մի  
ինչ որ մտքի մէջ խորասուզվել . .

Վաղուց է, որ մի միտք Ղազարին շատ մտա-  
տանջութիւնների մէջ է դցել: Նա քանի տարի  
է, որ իր համար մի պաշտօն է որոնում;—բայց,  
տարաբախտաբար, չի գտնում: Կօնսիստորի ծա-  
ռայութիւնը և քարտուզարի պաշտօնակատա-  
րութիւնը նա պաշտօն չի համարում, նախ այն  
պատճառով, որ այդ երկու պաշտօնի ռոճիկն  
էլ միասին գումարած չէր հասնում նրա ամե-  
նատարրական պահանջներին և երկրորդ, որ այդ  
պաշտօններով այդ հիմնարկութիւններում նա  
առաջանալու ասպարէզ չունէր: Իր ազգականի  
հովանաւորութեան տակ գտնուող ուսումնա-  
րանում ուսուցիչ լինել նշնպէս չի կարող  
ցենդ չունենալու պատճառով:

Ընկերները գրգեցին նրան հոգեոր կոչումն  
ընդունելու: Այդ բանը նրա խելքին նատեց. նա  
պատրաստ էր յանձն առնել այդ լուծը և այդ  
ոչ թէ իր սրտի ձգտման աղփեցութեան տակ,  
այլ այն շահի, որ կապված էր տեսնում այդ  
կոչման հետ:

Նա բոլորովին չէր էլ մտածում այն ծանր  
պաշտօնակատարութիւնների մասին, որ գնում  
է այդ վեհ կոչումը ընծայվածի վրա, նա չէր

էլ գտնում իր ուսման պաշարի մէջ թերու-  
թիւններ: Եւ ովէ մեզանից իրան անընդունակ  
համարում քահանայական կոչումն ընդունելու  
ժամանակ. . .

Այդպէս էր և Ղազարը. նա ձգտում էր հաս-  
տատ հետեղութեամբ իւր «եսին»: Այդ անձնա-  
կան փառասիրութեան և շահին նա պատրաստ  
էր զոհ բերել և ոտնակոխ անել հասարակական  
կարծիքն և համակրութիւնն:

Եւ ի՞նչն է մեզանում տմենից շատ ոտնակոխ  
և անտես եղած, քան հասարակական կարծիքը...

Ահա նա սկսեց գործ գնել իր բոլոր ձար-  
պիկութիւնն իր փայփայած միտքն առաջ տա-  
նելու համար: Նա զիմեց իր հօրեղբօրը, իբրև  
Հեղինակաւոր հասարակական նժարին, որ ա-  
ջակցի և պաշտպանի «ուժեղների» առաջ, բայց  
Մկրտում աղան իր կատարեալ անվճռակա-  
նութեամբ ոչ մի որոշ պատասխանի չէր ար-  
ժանացնում նրան: Միշտ, երբ այդ խնդրի մասին  
խօսք էր բացվում: Մկրտում աղան խօսքն  
ականջի ետեն էր զցում կամ, ինչպէս ասում  
են, չլսելու ու չիմանալու էր դնում:

Այժմ ևս կառըի մէջ նստած, երբ Ղազարը  
խօսք բացեց այդ խնդրի մասին և կրկին ու  
կրկին յիշեցրեց իր հօրեղբօրը և նրա աջակցու-

Թիւնը խնդրեց, Մկրտում աղան նրան վերաբերվեց շատ սառն ու անտարբեր:

— Ինչո՞ւ ևս շտապում, զեռ ջահիլ ես, կհասնես, — ասում էր նա, բոլորովին չկասկածելով, թէ ինչ ծանր հարուած էր տալիս այդ խօսքերով իր հօրեղբօր որդուն: Բայց Ղաղարն այն մարդկանցից չէր, որ յուսահատվէր անաջողութիւններից: Նա մի քիչ նեղացաւ հօրեղբօր խօսքերի վրա, բայց և այնպէս ոչ մի ցոյց չարեց և իր վերաւորանքը ծածկեց:

— Ես վեց ամիս է, որ խնդրում եմ քեզ, — զրդովելով շարունակեց նա, — և միթէ ձեզ համար դժուար է մի քանի խօսք ասել: . . .

Այդ խօսքերն ունեցան իրանց բարերար աղդեցութիւնը Մկրտում աղայի վրա: Ղաղարի գովեստները, որ վերաբերում էր հօրեղբօր առաւելութիւններին, շատ դուր եկան Մկրտում աղային: Այդ եղաւ պատճառներից մինը, որ նա սկսեց լուրջ կերպով վերաբերվել Ղաղարի նուիրական զգացմունքներին:

— Խօսք ասելու զժուար չէ, — ասաց նա, — բայց պէտք է լուպէն, ժամանակը յարմարեցնել: Յետոյ դու հաստատ ուղղում ես քահանայանալ... յանկարծ իր խօսքին մի ոյլ ուղղութիւն տուեց Մկրտում աղան:

— Այդ ինչ խօսք է, — քիչ տաքայաւ Ղաղարը, — ինչով ենք ուրիշեց պակաս: Տէր թենեամինն ինչով է ինձանից աւել, ինչ է նա տէր ունէր և կարողացաւ ինձանից երկու տարի առաջ ձեռնադրվել, չնայելով, որ հասարակ մաղթանքներն առանց սխալվելու չի կարողանում ասել:

— Խօսք չկայ, այդ յետ ու առաջ լինելու է, բայց. . .

— Ես տասը տարի է, որ եկեղեցում մոնթութիւն եմ անում:

— Կաւ, դու հիմա ինչ ես ուղում որ — ում պէտք է ասել. . .

— Ես քանի անզամ ասել եմ ձեզ:

— Մի անգամ էլ ասա՛, տեսնենք:

— Հարկաւոր է ասել Առիւծեանին, նա իբրեւրեսփոխ կաղաշտպանէ և կխօսի, կամ թէ չէ, ուղում էք ինքններդ անձամբ խօսեցէք տէր Մակարի հետ:

— Բայց ի՞նչպէս... Այդ այժմ կարելի՞ է, երբ մենք առաջնորդ չունենք... Սպասիր մի քիչ:

— Այժմ աւելի քան յարմար ժամանակն է, մինչև առաջնորդի դալը հրամանը կարելի՞ է ձեռք բերել:

— Կարելի՞ է:

— Ես ձեզ հաստատ աղբիւրներից եմ ասում,  
որ կարելի է:

— Լաւ, լաւ, մի բան կանենք, —ընդհատեց  
Մկրտում աղան, աշխատելով կարծ կապել այդ  
խօսքը:

— Խնդրում եմ, գոնէ այս անդամ յետ մի  
զցեցէք:

— Ախր պէտք է առաջ պսակվես. . .

— Ի՞նչ կայ որ, ես պատրաստ եմ, պսակվելն  
ինչ դժուար բան է որ... Սյդ բոլորը հեշտ է,  
եթէ միայն, հօրեղբայր, գուշը ուղենաք ինձ օդ-  
նել: Ես դարձեալ խնդրում եմ... ձեր ձեռքից  
է կախուած իմ բախտը:

Սյդ շռայլութիւնները Մկրտում աղայի սրտի  
խորքերը թափանցեցին: Նա մտքում արդէն  
վճռել էր օգնել:

Կառքն այդ միջոց կանդ առաւ տան առաջ:  
Ղաղարը շտապ ցած իջաւ և առնելով հօրեղօր  
ձեռքը՝ կառքից դուրս բերեց նրան: Մկրտում  
աղան իր փափոցն արձակելով՝ պատրաստվում  
էր մտնել բազը, երբ Ղաղարը մի անդամ էլ  
փորձեց խնդրել:

— Լաւ, լաւ, —ասաց Մկրտում աղան, —եթէ  
մոռացայ, միտքս զցիր, միտքս զցիր. . .

¶.

**Բ**աւականի ուրախ տրամադրութեան  
տակ Ղաղարը տուն եկաւ: Այժմ  
նա մի առանձին հետաքրքրու-  
թեամբ և հպարտութեամբ ապա-  
գայի մասին սկսեց կազմել ծրագիրներ:

Նրա զզուելի դէմքը արտայայտում էր մի  
խնքնահաճութիւն, խորամանկ աչքերը փայլում  
էին և լայնատարած բերանը մի անորոշ շար-  
ժում էր գործում, իսկ շարժական գլուխը ծառ-  
կոտիկի նման յետ ու առաջ տանելով կարծես  
տարածութեան մէջ պտուում էր փառասիրու-  
թեան սերմերը: Այժմ նա իր սրտի մէջ մի  
վերին առախճանի ուրախութիւն էր զգում:  
Ուրախութեան սահմաններն աւելի ու աւելի էին  
տարածվում, երբ նա մտածում էր, որ քահա-  
նայանալով որքան շահեր ձեռք բերած կլինի:  
Եւ տունը, սենեակը սկսեցին ուրիշ կերպ երեսել  
նրա աչքին: Ղաղարը չափազանց ուրախ էր,  
ուրախ էր իր ապագայի համար, որ վերջապէս  
խնքն էլ կմտնի օրինաւոր մարդկանց շարքը,  
որպիսին նա համարում էր քահանայութեան  
միաբանութիւնը:

Յանկարծ նրա ուշադրութիւնը մի ինչ որ  
ձայն գրաւեց: Դուռը բացվեց, ներս մտաւ Գէոր-  
գի Միխայլիչը՝ կօնսիստօրի քարտուղարը:  
Գէորգի Միխայլիչը կրում էր կարծ մազեր,  
որոնք արգէն, ի դէպ ասած, բաւականին սպի-  
տակել էին, իսկ նրա՝ մայեասիլով բոնվածներին  
յատուկ երեսի գոյնը պարգևում էր նրան մի  
Ճնշված տեսք, ինքը նիշար էր — և ի լրումն  
ամենայնի մի ոտով էլ կազում էր, իսկ սու-  
րաթի աչքերը սպիտակ ակնոցների տակից փայ-  
լում էին մի անմիտ հայեացքով: Հազին ունէր  
կեղտոտ և անձև պիտիակ:

— Ա՛, Գէորգի Միխայլիչ բարի եկաք, որքան  
ուրախ եմ, որքան ուրախ եմ — համեցէք, հա-  
մեցէք...

Հազարը վերցրեց քարտուղարի կօկարդաւոր  
գլխարկը ու հաստ ձեռնափայտը և առնելով  
իր թանգարին հիւրի բազուկը նստեցրեց նրան:  
Գէորգի Միխայլիչը սիրում էր Հազարի հետ  
պարապ ժամերին նստել - վեր կենալ. զրեմէ ա-  
մեն օր նրանք մէկմէկու մօտ են լինում:

— Դէ ուր է, օղի ունի՞ս, եթէ ոչ գոյ, երթ  
և գնեա, — ակնոցների տակից չափեց իր ընկե-  
րոջը Գէորգի Միխայլիչը. յետոյ հանեց գրա-  
նից կարմիր թաշկինակը, տարաւ քթին և մի

ուժգին վնչոցով թեթևացրեց իր քիթը ծան-  
րաբեռնող հեղուկից ու նստեց, կանխապէս վեր  
քաշելով իր կարծ - կոլոդ բրիւկները:  
— Ունեմ ունեմ, նստէք, Գէորգի Միխայլիչ,  
այդպիսի հիւրերի համար կդտնվի... Ես ինքս  
ուզում էի այսօր ձեզ մօտ գալ բայց նիստ կար,  
չկարողացայ...

— Խէ՛ր լինի, ի՞նչ կայ, — բարձրացրեց իր  
քիթը քարտուղարը և կտրված ուշադրութիւն  
ձևացաւ:

— Առանձին ոչինչ, նստեցինք, ջուր ծծեցինք  
ու ցրվեցինք: Գործ էլ չկայ: Է՛, Գէորգի Մի-  
խայլիչ ինչ ուզում են՝ անեն, մեզ ի՞նչ մենք  
պէտք է մեր զլիսի ճարը տեսնենք, նրանց գեօրա  
ինչ... .

— Հա՛, հա՛, ձիշտ է, ձիշտ, — ծիծաղեց քար-  
տուղարը:

Հազարը բայց պահարանը, հանեց այնտեղից  
մի շեշ օղի և երկու ըմպանակ, մի կտոր պա-  
նիր, հաց և զրեց իր հիւրի առաջ:

— Խնդրեմ, — լցնելով բաժակները, առաջար-  
կեց Հազարը:

Գէորգի Միխայլիչը մի յախուռն արձակում  
գործելով՝ դատարկեց բաժակը մի անգամից, յե-  
տոյ իր երկու մատի ծայրերով վերցրեց մի

կոռը պանիր և, մեքենայաբար, թափ թալով,  
մօտեցրեց պատառն իր բերնին:

— Ե՛հ, Ղազար, ծերայանք, բանից պրծանք,  
ատամնիրս բանի պէտք չեն, — մրժմրժաց քար-  
տուղարը, — կովի նման արոջ ենք անում:

— Ի՞նչու շինել չէք տալիս, հիմա լաւ ա-  
տամնաբօյժեր կան:

— Թանգ է նստում, Ղազար, թանգ — փող  
կայ որ... Հարկաւոր բանի չի հասնում, ուր  
մնաց որ... Ով ասի, չասի, դու խօ զիտես մեր  
կօնսիստօրի ռոճիկները: Ե՛հ, Ղազար, 15 տարի  
է, որ այդ գործումն եմ, շարադրողն էլ ես եմ,  
պատահածի արտագրողն էլ — տեսնում ես էլի,  
ամբողջ օրը շան քթէն ջուր եմ խմում, —  
բայց ով է գնահատում: Աչքից, արելց ընկած  
ենք... Տեսնենք՝ նոր եպիսկոպոս դայ, ինչ կլինի,  
միտք ունեմ խնդրեմ, որ մի քիչ աւելացնի...

— Ճշմարիս, աս ի՞նչ տեսակ բան է, որ  
մինչև օրս մէկը չի նշանակիում... Ես չեմ հաս-  
կանում, ի՞նչ են մտածում եջմիածնում — երկու  
տարի էլ թեմը թափուր թողնել կլինի... .

— Եհ, հէ, հէ, — քրքջաց քարտուղարը, —  
խելքիդ ձիւն դայ, դեռ ջահիլ ես, մեղ համար  
այդպէս աւելի լաւ: Գիտես, — լուրջ կերպով  
շարունակեց նա, — ինչ տեսակ եպիսկոպոսի ձեռ-

քի տակ կծառայես... Տեսնում ես, մազերս ձեր-  
մակել են այդ գործում, մէջքս էլ ծռվել էլի որ  
կողմը զցում ես, զրանց եղածը լաւ է, բայց  
չեղածն աւելի լաւ... և նա այդ վերջին նախա-  
դասութիւնը մի այնպիսի շեշտադրութեամբ  
արտասանեց, որ կարծես սրանով կամենում էր  
բացատրել իր ներքին անբաւականութիւնը:  
Հաւատացնում եմ քեզ ազնիւ խօսքով, —  
կրկնեց նա:

— Տեսնում եմ, տեսնում, — մսիթարեց Ղա-  
զարը քարտուղարին, — այժմ կառավարվում է  
էլի... .

— Դէ էլ ինչ... Այ, անցեալ շաբաթ մէկին  
մետրիկական էր պէտք, տունս էր եկել, հար-  
կաւոր էր մի քիչ հին մատեաններ քրքրէի,  
ձեռաց տուինք, Ճշմարիտ է, սրա համար երե-  
քանոց ձեռքիս ձխտեց, բայց որքան բանը թե-  
թեւացրի... Եպիսկոպոս լինէր, չէր կարելի, Ճաշեց  
յետ էր, դէս - դէն — քարտուղարը ձայնի ելւ-  
էջով կամենում էր գործը չեղած տեղից ծան-  
րացնել — մենք էլ Ղազար, այդ տեսակ մարդկանց  
ձեռքին ենք նայում: Եթէ այսօր սրա քէֆին,  
վաղը մի ուրիշի խաթրին կկպչես, քաղցած  
կմնաս: Մենք էլ մարդ ենք՝ տուն, տեղ կնիկ,  
երեխաներ, ութը բերան ենք, կերակրել է հար-  
կաւոր... .

— Ճիշտ է, ճիշտ է, ես մենակ հոգի եմ, ռոճիկս չի հասնում:

— Տեսնում ես... Բայց որ Աստուած կարժանացնի, կպսակվես, երեխաների տէր կդառնաս, այն ժամանակ անունս կտաս... Այդ բարաքաթը վկայ, որ խօսքումն սուտ չկայ... Նա վերցրեց հացի կտորը:

— Ինչ անես,—Աստուած ողորման է:

— Աղքատ մարդու զրութեան մէջ թշնամիս չլինի... Սուտ չի ասած՝ «շատը շատին, էշի ոտերն աղքատին»:

Քարտուղարը չէր կարողանում հանգստանալ: Ղաղարը, որպէս զի հանգստայնի Գէորգի Միխայլիչի զայրոյթը, ածեց բաժակների մէջ օղի. նրանք խմեցին: Քարտուղարը կրկին զլուխը թափ տուեց:

— Աստուած ողորման է,—աճապարեց սկսել Ղաղարը, որպէս զի մի քիչ փարատի ընկերոջ տիրութիւնը,—եպիսկոպոս կնշանակվի, ռոճիկդ կլաւացնի: Աղօթենք, որ լաւ եպիսկոպոս նշանակվի... .

— Ուր է, Աստուած բերանիցդ լսի, տեսնենք: Սուտ թէ ուղեղ, — մի քիչ հանգստանալով շարունակեց Գէորգի Միխայլիչը, — տէր Մակարն այսօր ասում էր, որ իբր թէ լուր կայ՝ Ոխարակերեանն է նշանակված. . .

— Ո՞վ:

— Ոչխարակերեանը: Դու չես ճանաչիլ:

— Չեմ լսած:

— Տէրտէրն էր ասում, տեսնես, որ ծանօթ եպիսկոպոսը զրել է:

— Բայց ի՞նչ տեսակ մարդ է:

— Ճանաչում եմ, եթէ սա լինի, լսւ է: Քսան տարի սրանից առաջ նա սարկաւագ եկաւ այստեղ: Ազիս մարդ է, հոգեռորականների զաղոն իմացող: Երանի թէ այդ լուրը ձշտվէր. ուր է, բախտ ունենք որ. . .

Ղաղարը մի բաժակ էլ ածեց: Երկուսն էլ անխօս գատարկեցին բաժակները և կրկին շարունակեցին իրանց խօսքն ու զբոյցը: Գէորգի Միխայլիչը հանեց իր գունաւոր բաժկոնակի աջ գրանից մի փոքրիկ տուփ, խփեց իր ձախ ձեռի կողքով, որպիսի գործողութիւնից յետոյ բացվեց տուփի բերանը և մի բոռնցք քթի թամբաքու վերցնելով, սկսեց լցնել իր քիթը այնպէս, ինչպէս լցնում են կանաչ դղումի տօլման, սրա հետևանքն այն եղաւ, որ Գէորգի Միխայլիչը սկսեց շարունակ փոշտալ:

— Եթէ Ոչխարակերանը լինի, շատ լսւ է, — փոշտալով կմկմաց քարտուղարը, — այ, Ղար, այն ժամանակ քո բանը գլուխ կգայ. . .

Գիտես, Ղաղար, — յանկարծ լուրջ կերպարանք ընդունեց քարտուղարը, — ևս այսօր յատկապէս հենց սրա համար էլ եկել եմ. ինչպէս խնդրել էիր, այնպէս էլ խօսեցի տէր Մակարի հետ...

— Յետոյ... ի՞նչ է ասում, — ընդհատեց Ղաղարը:

Գէորգի Միխայլիչը մի զոյտ լաւ փոշտաց, ապա խօսեց.

— Տեսնում ես, որ լինում է, իմ ջախտս ջախտ է հան, իմացիր նրա բերանի եղանակն այն էր, Ղաղար, որ եթէ մէջ տեղ օրինաւոր մարդ ընկնի, բան դուրս կդայ: Զե՞ս իմանում նրա փորացաւը... Այս բանն ունի՞ս, ես քեզ համար խօսեմ և զլուխ բերեմ... Քարտուղարն այս ասելով բոյթ մատը տարաւ ցուցամատի ծայրին, շփելով նրանց, կամեցաւ տեսականապէս լրացնել իր միտքը: Այդ միջոց նրա ձախ աչքի կոպը փակվեց, իսկ աջինը լայնացաւ և նրա հայեացքն ընդունեց մի խորհրդաւոր արտայայտութիւն: Այս էլ ասեմ, — շարունակեց նա, — խօսքը մեր մէջ մնայ՝ ամեն բան նրանից է կախված հան...

Եւ Գէորգի Միխայլիչն ուժգին կերպով զկըռտաց, յետոյ հանեց իր թաշկինակը և նորից դատարկեց իր բաղմապարունակ քիթը:

— Այո՛, այո՛, այդ ես գիտեմ, և այժմ միտք ունեմ օրինաւոր կերպով գործը սկսելու: Բայց ես ձեզ դարձեալ կխնդրեմ, վրաս չեմ թողնիլ աշխատէք, աշխատէք...

Ղաղարը ծածկեց իր հօրեղքօր հետ խօսածը քարտուղարից: Նա կամենում էր, որ սա ևս նրանից անկախ իր օգտին աշխատի: Նա համոզված էր, որքան շատ կողմից և զանազան մարդիկ խնդրեն, այնքան լաւ: Մասլուծ կասյ ու սովորտաւ, — անցաւ նրա մաքով ռուսական առածը: Յետոյ նա կրկին լցրեց բաժակները:

— Ինչ ե՞ս անում, շատ կլինի, — թաշախուստ արեց քարտուղարը:

— Խնդրեմ, խնդրեմ, Գէորգի Միխայլիչ, մի ասա թէ շեշը դատարկվում է, ևս մէկն էլ ունեմ:

— Դէ, Աստուած գործդ աջողեցնի, — բարեմաղթութիւններ անելով վերցրեց ըմպանակը քարտուղարը:

— Բայց մի բան ես, Գէորգի Միխայլովիչ — ցած դնելով բաժակը խօսեց Ղաղարը, — ախր պէտք է պսակվեմ, լաւ աղջիկ չունի՞ս...

— Էհ, զու էլ բան ասար, ես էլ սպասում էի, թէ ինչ պիտի ասես... Երկնքում այնքան

աստղ չկայ, ջրումն էլ՝ ձուկ, որքան մեզանում  
աղջիկ կայ... Քար զցես, աղջկայ վրա է ընկնում,  
ասում ես աղջիկ չկայ, ի՞նչ տեսակ մարդ ես...  
Եւ նա սկսեց ցինիկական կերպով քրքջալ:  
— Բայց դարմանալի է, որ ես ոչ մի աղջիկ  
չեմ ճանաչում:

— Բերանդ բաց տղայ ես, դու ինչ մարդ ես  
որ, ես քո ժամանակ, իմանում ես, ինչ էի՞ օհ,  
հօ, հօ, շախմախի քար, աչքից պեծ էի թրո-  
յնում, աղջիկերքը ձեռքիցս զար էին եկել... Ի՞նչ  
ես քնում... Այնքան ման ես գալիս, աղջիկ չես  
տեսնում:

— Որտեղ եմ գնում ո՞ր...

— Ը, ինչ ասեմ՝ այ աղջիկ Առիւծեանի  
տանը, Վարդուհին, նրանից էլ լաւ աղջիկ, առ  
էլի... .

— Նրան չեն տալ:

— Ինչ կասեն, որ չեն տալ:

— Այնպիսի տեղ ձեռք ձգել... .

— Իր աղջիկը խօ չէ... .

— Ճշմարիտ, դա ո՞ւմ աղջիկն է որ... .

— Ես նրա հօրը ճանաչում էի, — Համարեա  
թէ շարունակեց նախկին նախադասութիւնը  
Գէորգի Միխայլիք, — բողէ օրհնող իսայ կա-  
սէին... Այդ աղջկայ մօր մահից յետոյ Առիւծ-

իանը վերցրեց իր մօտ: Այդքան նրանց տուն  
դնում ես, չե՞ս իմանում:

— Որ ասեմ՝ մուշտարիի աչքով չեմ նայել...  
Շատ անգամ նա չի էլ դուրս գալիս... .

— Հա, հա, նա համեստ աղջիկ է... . Մօրը  
տես, աղջկան առ, մայրը, ողորմի իրան, աղքատ  
էլ է լինէր, պատուական կին էր, իր ժամանա-  
կին լաւ ապրած, օրինաւոր տուն ու տեղի տէր:  
Յետոյ՝ մարդից յետ՝ տները խեղճի ձեռքից  
քաշեցին—այդ անիծած վաշխառուների ձեռք  
մարդ ոչ ընկնի, վերջին շապիկդ հազիցդ կհա-  
նեն. աները զրաւ էր դրած Զինաստանեանի  
մօտ և հենց այնպէս ճաքեց—վերջերս այնպէս  
նեղութիւն էր քաշում, որ ասեղ-թել քաշե-  
լով էր ապրում, խեղճ կինը այդպէս նեղութեան  
մէջ էլ մեռաւ... . Այդ շատ տարվայ բան չէ,  
սուտ չասեմ՝ երեք տարի, աւել պիտի չլինի  
մօր մահը... Զարմանալի մարդ ես, մի՞թէ մի օրից  
մի օր չես հարցրել, թէ արջ ե՞ս պարացնում,  
զի՞ն ես հանում... .

— Զէ, յարդգ վկայ, որ չգիտեմ, միայն այս-  
քանը զիտեմ, որ աչքի լուսով աղջիկ է երեսում:

— Հա, մայրն էլ տեսուք կին էր, իր ժամա-  
նակին հարիւրի մեջին մի հատ աղջիկ էր:  
Խփի՞ր, Ղաղար, զլսին, առար... .

- Բայց փող բան հաւատա չի լինիլ . . .
- Այս չեմ իմանում, — բարձրացրեց իր աշքերը Գէորգի Միխայլիչը, — հօրից, ինչպէս ասացի, բան չի մնացել բայց թէ որ Առիւծեանը կտայ, չզիտեմ:
- Սա զրա ի՞նչն է ախր. . .
- Եշեկիմ զուրդ դայիսի, հեռաւոր ազգականի աղջիկն է, այն էլ կնոջ կողմից, բայց փող տալ ուղենայ՝ կարող է, սա էլ որ կայ՝ լաւութիւն է. . . Կարծում եմ, կտայ, նա այն տեսակ մարդ չէ, լաւութիւն անող, աղով-հացով մարդ է: Ինչ խելքի մարդ ես, փորձիր, տես, չեղաւ՝ ուրիշ տեղ ձեռք կձգենք. . .
- Այս, կփորձեմ, հօրեղբօրս կասեմ. . .
- Այ լաւ բերար, տես կասեմ չէ, շատ լաւ է, շատ լաւ:

Ղաղարն ընկաւ խոր մտածմունքների տակ: Գիշերվանից արդէն բաւականին անցել էր, փողօցներում աղմուկը դադարել պատուհանի տակից մէկ-մէկ լվագում էին գիշերապահների չնկչնկոյցը և աշնանային քամու մոնչոցը: Զնայելով այդ տարաժամին, երկու նիզակակիցները դեռ շարունակում էին նստել օղու շշի առաջ և կեանքի խնդիրներ շօշափում:

¶

¶

¶

**Ա**ռիւծեանը բնակվում էր մի մեծ տան մէջ, որ գտնվում էր քաղաքի յայտնի փողոցներից մինում: Սա մի մեծ քարեայ շինքս էր, որ աչքի էր ընկնում իր արտակարգ ճարտարապետութեամբ: Տան անկիւնները, պատուհանները զարդարած էին զանազան նախշերով: Տան մէջ տեղում գլխաւոր գռան առաջ, արձանանում էին երկաթեայ սիւները, որոնց վրա յենվում էր մի գեղեցիկ բալկոն: Ընդհանուր ճաշակաւոր համախմբման մէջ մի մռայլ զիծ կազմում էր նրա տան առաջեւ հոսող վտիտ առուակը, որ, իսկապէս ասած, նմանում էր մի ցամաքած Ճահճի: Քիչ չէր զրգուում մարդու ճաշակը և նրա տան կողքում փուփած պարտէզն իր թողած դրութեամբ: Առհասարակ, քաղաքացիները մի տեսակ անտարբերութեամբ են վերաբերվում բուսականութեան: Նատ շատերի բազում չէք գտնիլ մէկ հատ ծառ, հղածներն էլ համար-

Կոտրված սիրտ:

վում են մի տեսակ բան, որ կարող է լինել, կարող է և չլինել։ Այդպիսի մի ծառայութիւն էր անում և Առիւծեանի պարտէղը։ Գյուռթեան օրվանից նա գրեթէ մի աննկատելի բան է համարվել։ Առհասարակ Առիւծեանի տունը, ընդհանուր առմամբ, չնայելով իր փարթամութեան և հյակապութեան, մի ծանր և ձնշող տպառութիւն էր գործում մարդու վրա իր կատարեալ խորհրդաւոր արտաքինով։

Մի կիրակի օր էր. Առիւծեանն ինքը բացակայում էր տանից։ Նրա փառաւոր գահին նստած էին երկու կին։ Մինք՝ ա, Արքուհին, ուրախ և աշխուժով խօսում ու ծիծառում էր, իսկ նրա առաջ նստած օրիսրդ Վարդուհին լուս էր և հոգսոտված։ Արքուհու խրաքանչիւր ժպիտը մի առանձին զեղեցկութիւն էր պարզեւում նրա մոյզ զուրեկան երեսին։ Այդ սիրալիր ժպտի մէջ արտայայտվում էր մի ինչ որ հրապուրող, դրաւող և գէպի իրան քաշող ոյժ։ Իսկ Վարդուհու վռշանած երեսն արտայայտում էր վիշտ, երբեմն յուղմունք, որի հետքերն աշխատում էր նա ծածկել ուրախ, բայց շինծու ժպտով։

— Ես չեմ կարողանում հասկանալ, թէ ինչու համար դու չես ուզում մասնակցել մեր ներ-

կայացման։ Ես կարծում եմ, որ դա մի այնպիսի գործ է, որին մենք պիտի ամենայն սիրով և պատրաստականութեամբ աջակցենք, — ասում էր Արքուհին և ոգմորփած կերպով աշխատում էր նկարագրել թատրօնի նշանակութիւնը և համոզել Վարդուհուն, որ սա յանձն առնի մասնակցել իր կազմելիք ներկայացման։

— Այո, այո, գիտեմ, բայց ես չեմ կարող մասնակցել — միենցն հաստատակամութեամբ մերժեց Վարդուհին ընկերուհու խնդիրը։

— Դասակարգային հայեացքներին, դարեօր փտած շրջաններին մենք պէտք է ուշադրութիւն շրարձնենք, եթէ որ մեզանում որոշ շրջանի օրիորդները չեն մասնակցում։ Նրանք ունեն իրանց հայեացքները, այդպիսիների վարմունքը մեղ օրինակ լինել չե կարող, մենք պիտի . . . Տիկինը լոեց, նրա ձայնը, կարծես թէ, հատվեց, բայց այդ միայն մի բռագէ. նա ուզում էր շարունակել ինչպէս Վարդուհին սկսեց։

— Գիտեմ, գիտեմ — ասաց նա, — և միթէ դու կարծում ես, որ ես եթէ չեմ մասնակցում և այդ այն պատճառով, որ նախապաշարված եմ. . .

— Այդ չէ, — ուրախացաւ Արքուհին, — ուրիշն. . .

— Այնպէս, ինքս էլ չգիտեմ, չեմ կարող տրամադրված չեմ:

Վարդուհին երկիւղով նայեց Սրբուհուն և կարծես թէ կամեցաւ յայտնել նրան պատճառները, բայց կրկին լոեց:

Սրբուհին այն կանանցից էր, որոնց համար բաւական են թեթև առիթներ, որպէս զի չվրիպին նրանց նկատողութիւնից մարդուս հոգեկան տատանումները: Նա խսկոյն նկատեց, որ Վարդուհու սրտում կայ մի բան, որ չի տրամադրում նրան մասնակցել բայց թէ ի՞նչ էր «այդ», նա դեռ չէր կարողանում հասկանալ:

Այդ միջօց ներս մնաւ Առիւծեանը:

— Ես ինքս կխնդրեմ,—բարձրացաւ իր տեղից Սրբուհին, տեսնելով Առիւծեանին:

— Ի՞նչումն է բանը,—բարեկեց Առիւծեանը, Սրբուհու վրա մի խորհրդաւոր, իւղալի հայեցք դցելով:

— Բանը նրանումն է, որ ես խնդրում եմ օրիորդին մասնակցել մեր ներկայացման... .

— Ինչպէս, դուք ներկայացում եք կազմում; — մի առանձին հետաքրքրութեամբ հարցրեց Առիւծեանը:

— Այո՛, բարեգործական նպատակով կաղմանում է ներկայացում, և ես խնդրում եմ Վար-

դուհու մասնակցութիւնը, բայց նա մերժում է:

— Ինչո՞ւ,—հարցրեց Առիւծեանը, մի փորձնական հայեցք դցելով Վարդուհու վրա:

— Չեմ ուզում;—պատասխանեց օրիորդը մի այնպիսի յուզմունքով, որ Սրբուհին նկատելով այդ անքաղաքավարութիւն համարեց առարկել:

— Խոզրեմ դուք սրան մի քիչ շարժեք, տ. Սրբուհի, զարձաւ Առիւծեանը տիկնոջը, — չգիտեմ ի՞նչ է եղել այդ աղջկան, մանաւանդ այդ շաբաթ, ոչ խօսել է ուզում, ոչ տանից է դուրս գալիս: Մի քիչ սրան շարժեցէք, դուք կանայք մէկ-մէկու լեզուն աւելի լաւ կհասկանաք, քան թէ մենք տղամարդիկս:

— Ծիծաղէք, ծիծաղէք... նեղացաւ Վարդուհին և շուռ տուեց իր երեսը:

— Զէ, ծշմարիտ, սրան ծանաչել չի լինում; մեր առաջվայ Վարդուհին որտեղ, հիմիկվանն որտեղ... Դուք զբաղվեցէք, համոզեցէք մասնակցել խսկ ինձ ներեցէք, ճարտարապետը զուրսը սպասում է, ես մի բոպէով եկայ տուն մի քանի հարկաւոր թղթեր վերցնելու... .

— Դուք խօ դէմ չէք,—հարցրեց Սրբուհին:

— Ինչ էք ասում; տիկին, ես ինքս եմ խընդրում, որ համաղէք մասնակցել... Ի՞նչպէս կարելի է այդ տեսակ կանանց խնդիրը մերժել... .

Եւ Առիւծեանը կրկին մի իւղալի հայեացք գցելով Սրբուհու երեսին դուրս եկաւ դահլիճից:

— Ճեննում ես, նա թոյլ է տալիս, — ասաց Սրբուհին Առիւծեանի դուրս գալուց յետոյ:

— Դու նրան չես ճանաչում... Եւ նա այդ արտասանեց մի այնպիսի շեշտագրութեամբ, կարծես, կամենում էր այդ ձեռվ արտայայտել բառերի անորոշ իմաստն և իր սիրտը յուզող գաղտնիքը, բայց տեսնելով Սրբուհու խիստ զարմացական հայեացքը, Վարդուհին աշխատեց իր յուզմունքը ծածկել շինծու աշխուժով:

Նա մինչև անդամ ժպտաց:

— Դու, ծշմարիտ որ, Վարդուհի, մի ինչ որ անբաւականութեամբ ես վերաբերվում քո ազգականին, մինչդեռ նա քեզ հետ այդպէս սիրով է վարդում:

— Այո, այո, սիրով է վարդում; — ինչպէս արձագանդ կրկնեց Սրբուհու ասածները Վարդուհին:

— Վարդուհի, մի բան ունես, որ ծածկում ես ընկերուհուցից: Ասա՛, գուցէ ես կարող եմ օգնել...

— Օգնե՞լ... ոչ ոչ... Ի՞նչ կայ, որ դու կարողանաս օգնել...

— Բայց քո խօսքերի մէջ մի տեսակ խորհրդաւոր ակնարկներ է նկատվում — և այդ բա-

ները տեսնելով, ես գալիս եմ այն եղբակացութեան, որ դու իսկապէս ունիս մի ինչ որ վիշտ, բայց և ծածկում ես ինձանից... Դու ծածկում ես ինձանից քո գաղտնիքը... Դու սիրահարված ես. — ամաչում ես յայտնել աղգականիդ, այն ժամանակ ես կխօսեմ քո տեղը...

— Ես սիրահարված... և Վարդուհին դառն կերսղով ժպտաց: Այդ անյօյս ժպիտն աւելի զրաւչութիւն, աւելի դիւրեկանութիւն պարզեւեց նրա չքնաղ երեսին:

— Ես քեզ հաւատայնում եմ, — յանկարծ բացականչեց նա, — հաւատայնում եմ, որ այդպիսի բան չկայ... Դու էլ՝ նրա խօսքերի վրա հիմնվելով, ի՞նչ եղբակացութիւնների ես գալիս...

— Բայց քո ձայնը, քո երեսը բոլորովին ուրիշ բան են ասում: Չէ, դու սիրահարված ես, — բացականչեց Սրբուհին, — լաւ ի՞նչ կայ որ, միթէ սա դատապարելի երկոյթ է... Ես ինքս էլ սիրահարված եմ մարդու գնացել... Մինչև անդամ, եթէ ուզում ես իմանալ, ես ընդունում եմ, որ սա է միակ ուղիղ ձանապարհն, որ մարդուս խօստանում է ամուսնական երջանկութիւն, մի բան, որ մեր ժամանակ այդպէս ոտնակոխ է եղած... Ասա՛, ով է քո սրտի ընկերը...

— Ո՞վ է իմ սրտի ընկերը — ոչ ոք...

Սրբուհին շատ զարմացաւ նրա կամակորութեան վրա: Նա մինչեւ անգամ այդ վարմունքը համարեց դաւաճանութիւն դէպի ընկերական զգացմունքները:

Տիրեց միջոց լռութեան:

— Այդ թող: Պատմիր ինքդ, թէ ինչպէս եղաւ քո ամուսնութիւնը: Մեր պատահելուց յետոյ, չնայելով որ անցել է երեք ամիս, և դու ինձ քո մասին ոչինչ չես պատմել, մինչդեռ իս քեզանից քանի անգամ հարցրել եմ. . .

Վարդուհին շատ ուրախացաւ, որ գտաւ խօսքի նիւթ, որով կարող կլինի Սրբուհու հետաքրքրութիւնն ուրիշ կողմը գարձնել:

— Ես եմ ծածկել օ, ոչ— ես, երեխ, չեմ հասկացել որ քեզ այդ բանը կհետաքրքրէ. . . Ուսումնարանից յետոյ մենք քեզ հետ այնքան երկար ժամանակ չենք պատահել և այդքան ժամանակում այնքան բան է պտտվել որ ինչ պէս մեր պատաւներն են ասում, մի օր, մի դիշեր պատմես, պատմելու բան կայ. . . Ասեմ, ասեմ, թէ ինչպէս ես պատահեցայ ամուսնուս հետ: Դա շատ սովորական կերպով եղաւ: Դու գիտես, որ գիմնազիօնում արդէն շատ սէր ունէի դէպի մանկական թատրոնը և ես մեծ սիրով մասնակցում էի դպրոցական հանդէսներին ու ներ-

կայացումներին: Աւարտելուց յետոյ ինձ առաջարկեցին մասնակցել ներկայացման: Ծնողներս թոյլ տուին... Այսաեղ կար մի երիտասարդ, որ նոյնպէս մասնակցում էր ներկայացումներին..: Մենք, ինչ ասել կուզի, ծանօթացանք: Յետոյ, ինչպէս որ լինում է սովորաբար, մենք տեսութիւններ ունեցանք. . .

— Եւ դու չէիր վախում. — ընդհատեց Վարդուհին մի առանձին հետաքրքրութեամբ:

— Ինչի՞ց:

— Զէ որ կարող են խարել. . .

— Խաբել... Հա՛, Հա՛, Հա՛... ծիծաղեց Սրբուհին, — իմ ամուսինը... դու նրան գեռ չես ձանաչում, Վարդուհի:

— Զգիտեմ, բայց տղամարդկանց հաւատալ...

Սրբուհին մի փորձնական հայեացք զցեց Վարդուհու վրա, յետոյ շարունակեց.

— Այո, խարվելն այդպիսի դէպքերում զըժուար չէ, բայց մինչեւ տեսութիւն նշանակվելը չէ որ կարելի է մարդուն ճանաչել: Զգիտեմ ով ինչպէս, բայց ես կարողանում էի նկատել... Վերջապէս, սիրոը սիրու է ճանաչում. . . Ես, կարծում ես, կվճռվէի տեսութեան, եթէ չհամոզվէի նրա ճշմարիտ զգացմունքների մէջ. . . Վերջապէս, մեր տեսութիւններն ուրիշ բնաւո-

բռւթիւն ունէին։ Մենք միայն խօսում էինք,  
ծիծաղում էինք... Զգիտեմ, ի հարկէ, ես ինչպէս  
կվերաբերվէի, եթէ նա այլ կերպ վարվէր ինձ  
հետ, բայց նա ինձ հետ վարվում էր շատ աղ-  
նիւ, շատ քաղաքավարի, ոչ մի աւելորդ խօսք,  
ոչ մի ակնարկ ես նրանից չեմ լսել։ Մի անգամ  
միայն մնաս բարեկը ժամանակ նա իմ ձեռքս  
սեղմեց, բայց և այդ ես այնպէս աղնիւ կերպով.  
որ ես տեղիք չգտայ նրա այդ արտայայտած  
գգուանքին հակառակել։ Մրանից յետոյ նա շու-  
տով առաջարկութիւն արաւ. . .

Եյդ պատմութեան ժամանակ Վարդուհին  
հաղիւ կարողացաւ զսպել իրան։ Նա քիչ մնաց,  
որ լաց լինի. . .

Վերջերս մի ինչ որ վեշտ ընկճում է նրա  
սիրտը և ամեն մի այդպիսի ըստէում նա որ-  
քան տանջանք, որքան կսկիծ է զգում իր մէջ։  
Մրանով աւելի ու աւելի է նա տապակվում,  
երբ պատահում է իր ընկերուհու հետ։ Նա  
յիշում է — Մրբուհին զիմնաղիօնում համար-  
վում էր հասարակ գեղեցկութեան տէր աղջիկ  
և նա այժմ այդպէս աջող ընտրութիւն է ա-  
րել իսկ ինքը, որ գեղեցկութիւնով յայտնի էր  
դասարանում՝ մինչև այժմ մնացել է օրիորդ...  
Վարդուհին նախանձու չէր, բայց այդ ինդրի

առաջ որ օրիորդն է անտարբեր մնում։ Արդեօք  
կարող է Վարդուհին երբ և իցէ ամուսնանալ  
և ամուսնական քաղցրութիւնը նշնպիսի եր-  
ջանիկ կերպով վայելել ինչպէս Մրբուհին։  
Վարդուհին առաջ այդ բանի վրա չէր մտա-  
ծում, բայց Մրբուհու հետ մօտենալուց յետոյ  
նրա գլխում այդ խնդիրը մի պատկառելի տեղ  
է բռնում։ Տարիներով բաժանվելուց յետոյ,  
իրեք ամիս սրանից առաջ նա պատահեց Մրբու-  
հուն թատրօնում — և ահա այդ օրից տիկնոջ  
իւրաքանչիւր այցելութիւնից յետոյ նա զգում  
է իր սրտում մի տեսակ խեղզոյ... ինչպէս սա,  
Մրբուհին, ուրախ է, երջանիկ և գոհ իր վե-  
ճակից... իսկ ի՞նքը... Մանաւանդ այսօրվայ  
խօսակցութիւնից յետոյ նա այնպէս ընկաւ  
հոգւով, այնպէս յուսահատվեց, որ քիչ մնաց  
արտասվե... Նա առաջին անգամ նայեց իր ետեւ,  
աչք գցեց անցեալին... մի հատ մխիթարական  
իրեղյթ, մի փայլուն գիծ նա չյիշեց անցած-  
գնացածից... բացի որ այդ անցեալը դառնում  
է պատճառ նրա օրէցօր աճող վշտին, օրէցօր  
սպանող հոգսին. . .

Նա չասաց իր ընկերուհուն պատճառները,  
բայց թեթևացրեց արգեօք սրանով իր սիրտը:  
Նա տեսնում է, որ իր ընկերուհին մինչև ան-

գամ վերաւորվում է այդ բանից, թէև ձե ցոյց  
չի տալիս, բայց և այնպէս Վարդուհին մասնա-  
կից չի անում նրան իր վշտին, չի բացում իր  
սիրտը: Նա միայն յանձն առաւ գնալ Արքու-  
հու հետ փորձ և այդ ևս արաւ մասամբ այն  
մոքով, որ կարծում էր, թէ սրանով մի քիչ  
կփարատի իր տիրութիւնն ու վիշտը:

6.



Պաղաքի մէջ աղքատութիւնն օրէ-  
ցօր հսկայական քայլերով կաղ-  
մալուծում էր հասարակական  
կեանքը:

Աղքատութիւնն—այդ սարսափելի թշնամին,  
որին ենթարկված է մեր եղբայրների մեծամաս-  
նութիւնը, ըմբռնելի՞ է արզեօք նրանց համար,  
որոնք բախտի բերմամբ հրաւիրված են աւելի  
բարեկեցիկ վիճակի մէջ ապրելու, աւելի բախ-  
տաւոր աստղի տակ երջանիկ օրեր վայելելու:  
Արզեօք սրանք ուզում են հասկանալ թէ որքան  
ծանր ու աղքատութան աճուրդը Այս պա-  
հան ու սկզբան նորմա սիրան ու աղքատու-  
թանը անձնական ու անհանդառ չէ այս այլ  
համար ուրաքանչ ու այլ պայման ու այլ պայ-  
մանը անձնական ու այլ պայման ու այլ պայ-  
մանը անձնական ու այլ պայման ու այլ պայ-  
մանը անձնական ու այլ պայման ու այլ պայ-

մանը անձնական ու այլ պայման ու այլ պայ-  
մանը անձնական ու այլ պայման ու այլ պայ-  
մանը անձնական ու այլ պայման ու այլ պայ-  
մանը անձնական ու այլ պայման ու այլ պայ-  
մանը անձնական ու այլ պայման ու այլ պայ-  
մանը անձնական ու այլ պայման ու այլ պայ-  
մանը անձնական ու այլ պայման ու այլ պայ-

մանը անձնական ու այլ պայման ու այլ պայ-  
մանը է իր բախտաւոր եղբօր վրա, նախան-

ձում նրա վիճակին, բայց ինչով նա կարող է դուրս գալ իր նեղ զրութիւնից:

Նա, այդ մարդկութեան աչքից ընկած եղ-  
բայրը, բանում է, նա գործում է, տարի - տա-  
րիներով արիւն-քրտինք է թափում — բայց  
դարձեալ իր ամբողջ կեանքի մէջ մի օր, մի  
ժամ աչք չի բացում իր թշուառ զրութիւնից  
և շատ անգամ ընկնում է նրա կործանիչ հա-  
րուածների տակ:

Աղքատն ունի զաւակներ, աղքատն ունի  
աղջիկ և նա, այդ աղքատը, ուզում է իր որ-  
դուն կրթութիւն տալ, — որքան զառն աշխա-  
տանքով է նա այդ ձեռք բերում. իր աղջկան  
պիտի մարդու տայ, բայց ով է գնահատում  
նրա աղջկայ գեղեցկութիւնը, խելքը, նոյն իսկ  
պատահական կերպով ձեռք բերած ուսումը,  
քանի որ նա չունի փող, չունի օժիտ... Եւ  
քանի-քանի այդպիսի խեղճեր իրանց յցսերը  
կարած՝ իրանց ապագան օրինական ձանապար-  
հով անօրինելուց ընկնում են ասպարիդից,  
ընկնում են ուղեղ ձանապարհից, ընկնում են  
մարդկութեան աչքից:

Իսկ հասարակաց կարծիքը:

Նա իր խիղճը մաքրելու համար մի քանի  
կոպէկներ շպռում է սրանց առաջ, որպէս զի

սրանք նրա զլուխն ազատ պահեն: Նա հանգըս-  
տանում է նրանով, որ ունի զիցուք մի ինչ որ  
հիմնարկութիւն, իրան զլուխ ունենալով աղ-  
քատների զրութիւնը քիչ մանող հարուստ  
«խնամատարներ», բայց սա որքան է արդա-  
րացնում ներկայի բարդ պահանջները, — մենք  
հետաքրքրվում ենք արդեօք:

Բաւական է արդէն, որ այդ տեսակ հիմնար-  
կութիւնները գործեն խնայողութեամբ, անտե-  
սաբար և որքան կարելի է քիչ թունաւորեն  
մեր հանգիստ ժամերն իրանց նեղութիւններով...  
Բայց անգութ թշնամին տարի - տարիներով  
զոհելի է որ կլանում է:

Աղքատութիւնն օրէցօր սասականում է:

Ահա այդ տեսակ թշուառութիւնների զոհ  
եղած է և օրիորդ Վարդուհին, Առիւծեանի  
հեռաւոր ազգականի աղջիկը: Երեք տարի սրա-  
նից առաջ Վարդուհին զրկվեց իր մօրից (իսկ  
հօրից զրանից էլ առաջ): Ահա այդ օրվանից  
որքան արկածներ, որքան պատահարներ է գալիս  
Վարդուհու զլիին: Նա աեղափոխվում է իր  
միակ ազգականի՝ Առիւծեանի տունը: Բնդհա-  
նուրի հետաքրքրութիւնը բաւականացրած էր  
նրանով, որ Վարդուհու համար սա մի կատա-  
րեալ բախտաւորութիւն էր: Ո՞վ զիաէ ով

նրան կհասնէր օգնութեան, ով զիտէ ինչ չափով մեր հիմնարկութիւնները մարդկութեան արժանի ձեռք կկարկառէին նրան: Իսկ այդ տանը նրա ապագան նախանձելի կերպով ապահոված է: Այդպիսի վարդագոյն յօյսերով էր տոգորված և Վարդուհին... և այդպիսի յօյս նո իր մէջ փայփայեց մի ամբողջ տարի:

Բայց Երբ է թշուառը դիւրութեամբ օգնութիւն ստացել ունեորից, Երբ է անզօրը պաշտպանվել իր ուժեղ եղբօրից, Երբ են աղքատի յօյսերն արդարացել:

Այդպէս եղաւ և Վարդուհու վերաբերմամբ: Մի տարի անցած նա ստիպված եղաւ իր արդար յօյսերը ցնորքների սահմանը դցել: Իսկ այժմ Վարդուհին համազված է, որ նրա զրութիւնը ներկայում աւելի քան անտանելի է: Միակ առաւելութիւնը, որ նա այստեղ գտնում է, այդ այն արտաքին փարթամութիւնն է, որով շրջապատել է նրան Առիւծեանը, բայց նա ամենայն ուրախութեամբ կփսին այդ արտաքին շքեղութիւնը մօր տան նախկին չքաւորութեան հետ...

Բայց արդէն ուշ է, անցածը անցած է:

Այժմ մի ճիճու կրծում է նրա սիրտը, մի ինչ որ ներքին անբաւականութիւն տակն ու վրա է անում նրա հոգեկան անդորրութիւնը:

Ոչ ոք չզիտէր Վարդուհու տիրութեան պատճառները, նշյն իսկ նրա մօտ ընկերուհին՝ տիկին Սրբուհին: Բայց որ մի ցաւ, մի գաղտնիք կար նրա սրտում, այդ երեսում էր նրա մշտական վշտալից աչքերից և մտածողական հայեացքից: Նա մի անորոշ երկիւղով է վերաբերվում թէ այն տնին, որտեղ ապրում է և թէ իր անձին: Վարդուհին մի վախկոտ աղջիկ է: Նրա անորոշ վիճակը և որք մնալը փշրեցին նրա մէջ ամեն մի կամք և այժմ, ընայելով իր 18 տարեկան հասակին, նա շատ վաղաժամ մաշված և աւելի հասակաւորներին յատուկ հոգսով բռնված է երեսում:

Մանաւանդ նրա վրա շատ վատ է ազդում Առիւծեանի ներկայութիւնը: Այդ մարդու սիրալիր վերաբերվելը նա տանել չի կարողանում: Վարդուհին քանիցս անզամ կամեցել է այդ մարդու դէմ մի մերժողական ցոյց անել բայց լինելով բնութիւնով հանդարտ և երկչոտ, ուստի և խիստ վախենալով չի վստահացել: Մի շաբաթ սրանից առաջ, երբ Առիւծեանը վերադառնալով տուն ընտրութիւնից, ուրախ-ուրախ մօտեցաւ նրան և սկսեց համբուրել, Վարդուհին հենց այդ ժամանակ մտածեց դիմաղրել բայց քաջութիւն չունեցաւ այդպիսի քայլ անելու

և, ինչպէս միշտ, ենթարկվեց նրա գգուանքնեներին և գուրզուրանքներին:

Բայց այժմ ամեն մի այդ տեսակ ըստէները, տեսարանները Վարդուհու հոգեկան աշխարհում մի տեսակ սարսափ և ցնցում էին առաջ բերում... Այս, որքան ծանր, որքան անտանելի էին թւում այն բուկները, երբ մօտենում էր Առիւծեանի տուն գալու ժամանակը: Ամեն մի պատահական ձայն, ամեն մի դուռն ձռնչոյ լսելուց յետոյ Վարդուհին ցնցվում էր և դողդողում: Նրան թւում էր, որ իւրաքանչիւր շարժումից յետոյ կգայ նա, որին նա տեսնել չեռողում, որից նա դողդում է և որին նա համարում է իր թշուառութիւնների պատճառ: Եւ ամեն երեկոյ, երբ Առիւծեանը լինում է տանը, Վարդուհին ամբողջ ժամանակ անցնում է երկիւդով և գիշերները լուսացնում է ահ ու դողով: Բայց ոչ մի գիշեր այնպէս վշտացած չվերադառնաւ տուն Վարդուհին, ինչպէս փորձի գնացած երեկոն, Գնալուց նա կարծում էր, որ այնտեղ մի քիչ կբացվի, մի քիչ կփարատի իր տիրութիւնը, բայց եղաւ հակառակը. մասնակցողների ուրախ երեսները, ընկերուհու սիրուն կցողների սուրախ երեսները, վատ արամադրութեան...

Նա յուսահատված անց ու գարձ էր անում իր ննջարանում իր երեակայութիւնը, իր ուշագրութիւնը սրած... իւրաքանչիւր բոպէ յետ էր դառնում և ինչպէս վտանգի առաջ վայր թռչում:

Ահ ու զողով նա հանեց իր լիֆը և պատրաստվեց քնելու: Նա հազիւ նստեց մահճակալի վրա, ինչպէս բացվեց դուռը և ներս մտաւ Առիւծեանը:

Վարդուհին ցնցվեց և մի զող անցաւ նրա մարմնով:

Առիւծեանն առանց տատանվելու նստեց մահճակալի վրա և պատրաստվեց վերցնել օրիորդի ձեռքը: Վարդուհու ձեռքը բաց էր մինչեւ կըռները և նրա սպիտակութիւնը ու լի կեանք արտայայտող թարմութիւնը այն աստիճան շանթեցին Առիւծեանին, որ արիւնը նրա զլուկը տուեց և նա իրան մոռանալով սկսեց համբջրներ զրոշմել օրիորդի ձեռքի վերին մասի վրա:

Վարդուհին յետ քաշեց ձեռը: Նա կարծես նոր զգաց իր անյարմար գրութիւնը: Նա վեր կացաւ, վերցրեց ապրշումի շալը և պինդ փաթաթվեց նրանով:

— Այդ ի՞նչ է նշանակում, սիրելիս,—բոլբոքված և խղված ձայնով հարցրեց Առիւծեանը,— դու ինձանից քաշվում ես ու ծածկվում...

— Թողէք, ի սէր Աստուծոյ, թողէք... մըր-  
մընջացին Վարդուհու շրթունքները: Եւ օրիորդը  
սկսեց աւելի կուչ գալ և աւելի փաթաթվել:  
Նա իր շալից, կարծես, ապաստարան էր որո-  
նումի, ինչպէս խխունջն իր պատճենից կամ ինչ-  
թէս կրեան իր ոսկրեայ կեղեից:

— Սյդ ինձ զարմացնում է, սիրելիս, և շատ  
է զարմացնում: Երբ է եղել, որ զու ինձանից  
փախչես... Միթէ չգիտես, որ ես քեզ սիրում  
եմ և ով կարող է մեզ արգելել...

— Օ՛, թողէք, շատ բան է եղել այժմ թո-  
ղէք ինձ և գնացէք այստեղից:

— Դու քում ես ինձ մինչև անգամ այս  
սենեակից: Ես չեմ ուզում հաւատալ ականջ-  
ներիս, իմ քաղցր, իմ հրեշտականուման Վարդու-  
հիս... Միթէ այդ խօսքերը ես լսում եմ նրա-  
նից, որն իմ կեանքիս մէջ ամենաերջանիկ, ամե-  
նաբախտաւոր օրերիս պատճառ է եղել: Ոչ ոչ,  
Վարդուհի, թող այդ համբոյրը հաշտեցնի մեզ...

Եւ նա ձգվեց ու, չնայելով օրիորդի դիմա-  
գրութեան, համբուրեց նրա ձակատից:

— Դու իմ դէմ նեղացած ես:

— Ես ձեզ դէմ նեղացած չեմ: — Ետ քաշ-  
վելով ասաց Վարդուհին, — ես միայն խնդրում  
եմ թողնել ինձ ու մոռանալ...

— Ինչպէս, — ընդհատեց Առիւծեանը, — մին-  
չև անգամ մոռանալ... Վարդուհի, ի՞նչ է եղել  
քեզ, ինչու համար միայն այսօր... Կարելի է  
զու տրամադրված չես...

Առիւծեանը կորցրել էր իր խօսքերի կապը:  
— Ոչ ոչ — կրկնեց միւնոյն հաստատակա-  
մութեամբ Վարդուհին, — ոչ թէ միայն այսօր,  
այլ և վաղը և ընդ միշտ ուզում եմ մոռացվի...

— Դու ուզում ես ինձ թողնես, զու երեխ  
թէ... Օ՛, իմացիր, որ զու սրանով ինձ համար  
ամենասարսափելի վատանդ ես սպառնումի իմա-  
ցիր, որ քո ամեն մի խօսքը, ինչպէս օձի մահա-  
բեր թոյն, տարածվում է երակներիս մէջ և  
սպառնում է իմ ներքին անդորրութեան: Ես  
այժմ հասկացայ քեզ — ես քեզ ձանձրացրի,  
զու ուզում ես մոռացութեան տալ մեր փո-  
խագործ սէրը, ուզում ես մոռանալ ինձ, ինչպէս  
մոռանում են հին շորի հետքը, երբ կարում  
են նորը: Հասկանում եմ և չեմ մեղաղրում  
քեզ բայց — եթէ իմանաս, թէ ինչպէս դժուար  
է ինձ բաժանվել քեզանից, այդ եթէ իմ լիզուս  
չասի, բայց իմ կիւրքը, զգացմունքը մարմնացած  
բողոք է այդ փոփոխամութեան դէմ...

Մի բոպէ Վարդուհին կարծես կորցնելու վրա  
էր իր հաստատակամութիւնը, բայց նա քա-

ջութեամբ կարողացաւ հաստատ մնալ իր դիմագրութեան մէջ:

— Միթէ այդ տեսակ բան չի պատահում, — սկսեց պաշտպաննել իրան օրիորդը, — մարդ ու կին թողնում են միմեանց, ինչ զարմանք, որ ես ձեզ ասում եմ՝ մոռացէք անցեալը: Այժմ ես տեսնում եմ, որ սխալված եմ եղել, և թէ իմ վերաբերմունքը և յարաբերութիւնը երիտասարդական անփորձ ուղեղի շուտ բռնկվող ցնորք է եղել: Դուք ձեզ անբախտ էք համարում, բայց միթէ ես աւելի անբախտեցրած չեմ... Միթէ իմ ապագան աւելի մութ, աւելի մառախլապատ չե...

Վարդուհին սկսեց լաց լինել: Նա մի անդամից կարծես ուզում էր արդարացնել իր սխալ անցեալը: Առիւծեանը չղիմացաւ այդ արցունքների առաջ: Նա իրան առաջին անդամ օրիորդի առաջ մեղաւոր ճանաչեց:

— Ես այժմ ամենաթշուառ մարդն եմ, — շարունակեց Վարդուհին հեկեկալով, — ամեն յանցաւոր իր մեղքի տէրն է, ուրեմն ես իմ գործած սխալի համար ոչ ոքին չեմ մեղագրում: Միայն խնդրում եմ, որ ինձ այսօրվանից ավատ թողնէք, այլ ևս չյիշեցնէք մեր յարաբերութիւնների մասին — թողէք նա կորչի անհետ, ինչպէս ջուրը գցած քարի հետքը:

Առիւծեանը կրկին մի փորձ արաւ ջրել օրիորդի խօսքերը, բայց դա նոյնպէս չաջողվեց: Նա ակամայից ստիպված եղաւ թողնել Վարդուհու սենեակը և կոտրված սրտով անցաւ իր ննջարանը:

Երբ որ Առիւծեանը դուրս գնաց, Վարդուհին բեկված սրտով ընկաւ մահձակալի վրա: Երբէք Վարդուհին այնպէս չի դժուարացել ծածկել իր յուզմունքը, ինչպէս այսօր: Ի՞նչպէս դուրս գալ այդ խայտառակ դրութիւնից... Կաջողվի՞ արդեօք... Բայց չէ որ պիտի աշխատել ցանկացած բանը ձեռքում ամուլ պահել, միթէ նրան բայց թողնելուց յետոյ յոյս կարելի է ունենալ, որ երբ և իցէ այդ սիրելի առարկան կարելի է կրկին ձեռք բերել... Բայց ընկածն արդէն ընկած է... Այդ միտքը նրան գցեց անտանելի յուսահատութեան մէջ: Նա զգում էր խեղդոց: Արտասուքը թափվեցին նրա աչքերից, նա ծածկեց իր սիրուն ձեռներով լացագնված երեսը և ընկաւ մահձակալի վրա:

Եւ մի ջղային ցնցում անցաւ նրա մարմնով։  
 Նա յենեց իր գլուխը ձեռքերի մէջ և նրա ա-  
 ռաջ ինչպէս մառախուղի մէջ, ներկվեցան ան-  
 ցեալ օրերի երջանիկ համարված րոպէները։  
 Նրա աչքի առաջ պատկերացան տարածված  
 կերպով այն բիրտ ձեռները, որ գրկելով նրա  
 անփորձ կուսական իրանը՝ պատրաստեցին այդ-  
 պիսի կորուստ։ Ահա այդ ժամանակ, — նա լաւ  
 յիշում է, — ինչպէս վառ գոյներով սկսեց նկա-  
 րազրել նրա ապագան այդ կատարեալ հրէշ  
 Առիւծեանը։ Վարդուհին մտաբերում է, թէ այն  
 ժամանակ որքան զիւթիչ էր թվում նրա ամեն  
 մի խօսքը և այդ խօսքերն էին, որ ընկան նրա  
 սրտի մէջ և աճեցրին անսովոր զգացմունքնե-  
 րի անըմբոնելի կրքեր... Սրտի բաբախիւնով  
 նա մտաբերում է այդ անցեալից իւրաքանչեւր  
 ցոյցը, ամեն մի մանրամասնութիւնն, իւրաքան-  
 չեւր շարժումը... Այդ մտածմունքներն աւելի  
 ևս զլորեցին նրան խոր և անսահման տարա-  
 ծութեան մէջ, երբ նա մի րոպէ կենտրոնացնում  
 էր իր ուշաղրութիւնն այն իրաւացի կէտի վրա՝  
 թէ ինչո՞ւ այդ մաքերն այդպէս ուշ պաշարե-  
 ցին նրան—և թէ ի՞նչ կլինի այսուհետե...  
 Նրա սիրտն այն ժամանակ չի բաբախել այն  
 ուժգնութեամբ, որի առաջ նա չկարողացաւ

**Ա**ռաւօտը վեր կայաւ նա խիստ ջարդ-  
 ված։  
 Վարդուհու համար սկսվում  
 է նոր կեանք։ Նրա հայեացք-  
 ների, գործողութիւնների և դէպի Առիւծեանը  
 բռնած զիրքի մէջ տեղի ունեցաւ մի զգալի  
 փոփոխութիւն։ Այդպիսի յեղափոխութիւն ա-  
 ռաջ եկաւ Վարդուհու ներքին աշխարհի մէջ  
 միայն վերջին ժամանակներս։ Անցեալ օրերի  
 քաղցր յիշողութիւններն արդէն անցել էին  
 մտացութեան սահմանը և տեղի տուել հիաս-  
 թափման ու ցնորդների։  
 Այժմ նրա մէջ արթնացել է մի ինչ որ բան,  
 որ մինչև օրս անհասկանալի էր նրա համար—  
 դա այն ուշակցիան էր, որ առաջ եկաւ նրա  
 զգացմունքների մէջ։ Այժմ նա իրան համարում  
 է խարված — և խարված այն մարդից, որի  
 տունը նա մտնելով սպասում էր, որ իր վիճա-  
 կը կլաւանայ, կբարւոքվի...  
 Օ՛, նա միայն հիմա է գցում իր անցեալի  
 վրա իր քննտկան հայեացքը։

զսպել իրան,—ոչ, նա միայն կարօտ էր միսիթա-  
րութեան, կարօտ էր փայփայանքների—և ահա  
թէ առաջին փայփայանքներն ինչ բերին նրա  
համար...

Նա աչք գցեց հայելուն: Անշունչ ապակին  
ցոլացրեց նրա առաջ մի ձնշված պատկեր, մի  
պատկեր, որի վրա դեռ նշմարվում էին կանո-  
նաւոր, դեռ բոլորովին չթառամած գծեր: Վար-  
դուհին իր մէջ այնքան էլ զգալի փոփոխութիւն  
չնկատեց: Միայն ծածուկ վշտերի ու տիրու-  
թեան հետքերն էին նշմարվում նրա հոգսոտ-  
ված, բայց և այնպէս դեռ գեղեցկութիւնը  
պահպանած երեսի վրա:

Բաց-դեղնագոյն զօլաւոր կապան շրջապա-  
տում էր նրա գեղեցիկ իրանը: Մի փունջ սև  
գտնգուր մազերը ընկնում էին նրա ուսերի  
վրա: Նրա երեսի գունատ մորթը արտայայտում  
էր վիշտ, իսկ սեղրակ աչքերի մէջ փայլում էր  
մի բուռն կսկիծ՝ միակ հզօրագոյն վկան նրա  
սրտի դառնութեան:

Կարծես մի աներեցիթ զօրութիւն ընկճում  
էր նրա սիրու և հանգստութիւն չէր տալիս  
նրան:

Բայց ահա մի ձայն գրաւեց նրա ուշագրու-  
թիւնը:

Է.



Դուռը բացվեց, դռան մէջ երեւցաւ  
տ, Սրբուհին: Նա իր սովորական  
աշխուժով սկսեց օրիորդին հարց  
ու փորձ անել՝ թէ ի՞նչպէս է, ի՞նչ  
է շինում, տեղ խօ մտադիր չէ գնալու:

— Այսօր ես ուզում եմ ներկայացման հա-  
մար գնալ կապացու գնելու, —ասաց Սրբուհին,  
— գալիս ես, Վարդուհի: Ես քեզ համար մի  
զիւք էլ եմ բերել՝ «Պատրիկեանի նամակները»  
վերնագրով խորհուրդ կտամ, որ կարդաս, սա  
իմ տուած զբքերից աւելի հետաքրքիրն է: Այս-  
տեղ շօշափած են... Բայց դու դարձեալ նոյնն  
ես, ինչ որ երէկ, այդ ի՞նչ է քո գոյնը...

Վարդուհին մի դառն հառաջնկ արձակեց  
իր սրտի խորքից: Նա հաղիւ կարողացաւ խեղ-  
դել վրա հասնող արտասուբը:

— Զարժի ապրել, Սրբուհի, —մի խոր յոգո-  
ցով ասաց նա, չկարողանալով աւել ծածկել  
իր սիրու յուզող պատճառը:

Սրբուհին չուց իր խոշոր աչքերը։ Նա չէր սպասում այդ տեսակ պատասխան։ Սրբուհին կրկին անգամ լուրջ ուշազրութիւն դարձրեց վրան։

— Ես սկսում եմ երկիւղով վերաբերվել քո խօսքերին, — ասաց նա. — այդ ի՞նչ է նշանակում... Ե՞կ մի քիչ դուրս գանք, կանցնի։

— Ոչ, ես այսօր տրամապրված չեմ ման դալու։ Նստիր մի քիչ խօսենք, ես քեզ ուղում եմ մի քանի խօսք ասել։

— Ասա, ասա, մի՛ ծածկիր, եթէ ուղում ես, եթէ գաղտնիք է այդ բոլորը կիմանայ վերև Աստուած, ներքեւ մենք։ . .

— Ինձ համար այժմ բոլորը մի է... 0՝, Սրբուհի, երանի թէ կրկին դային այն օրերն, երբ մենք քեզ հետ անհոգ թռվում էինք զիմնաղիօնում։ Ճշմարիտ է, ես շատ քիչ սովորեցի, դու շարունակեցիր ուսումնի ինձանից յեա, բայց մի՛ կարծիր, որ ես չեի կամենում շարունակել ուսումն, ինչ անես, որ չեղաւ... Մարդ իր ուղածի պէս չի կարողանում տնօրինել։ Այստեղ է ասած՝ «խորհուրդ մարդկան, կամք Աստուծոյ»... Հօրս մահից յետ ես ստիպվեցայ թողնել ուսումն, որպէս զի կարողանամ տանը մօրս օգնել մենք ապրում էինք ասեղ-թելով... Յետոյ

մայրս մեռաւ — ես ընդունվեցայ այս տուն... 0՝, Սրբուհի, ոչ էի ոտս զրել այստեղ բարւոք էր գետինը պատովէր ու ինձ կլանէր, քան թէ ես մնացի կենդանի։ Այդպէս շարունակ ես մընում էի այս տանը։ Միայնակութիւնն ինձ սպանում էր, մի մարդ չկար, որի հետ ես կարողանայի մի երկու խօսք ասել մէկը չկար, որի հետ կարողանայի գժուար բոպէներում խորհուրդ անել մէկի առաջ սրտիս վիշտը թեթևացնել։ Ահա այդ ժամանակ բացում է իմ առաջ իր գիրկը նա, որ ինձ ընդունեց իր տուն... Ա՛խ, Սրբուհի, այժմ եմ միայն հասկանում, թէ ինչ հոգի է այդ մարդը։ Նա իրկունները յաճախ այցելում էր ինձ, հանաքնիր էր անում։ Մի գիշեր առաջարկեց թուղթ խաղալ և խաղը պայմանաւորեց նրանով, թէ տարվողը համբոյր տայ տանողին։ Ո՞չ մի բան այնպիսի սարսափով չեմ յիշում, ինչպէս այդ համբոյրները... Եւ ո՞վ էր հասկանում, թէ այդ բոլորն ինչ նպատակով էին... Մի զարմացիր, Սրբուհի, մարդուս միտքն այն ժամանակ է բացվում, երբ արդէն փորձանքը գալիս է ու անցնում է. լինում են բոպէներ, երբ մարդուս միտքը չի բացվում շատ պարզ տեղում։ յիշում ես մեր թուաբանութեան դասերը, երբեմն ամենապարզ խնդրի առաջ

ապշած կկանգնէինք և կսպասէինք, որ մեզ  
բացատրէին: Այդ ժամանակ ես այն աստիճան  
անփորձ էի, որ չգիտէի թէ այդ համբոյների  
հետևանքն ինչ պիտի լինի... Այո, ես շատ շու-  
տով ընկայ նրա գիրկը և դարձայ նրա սրտի  
խաղալին... .

Վարդուհին լռեց և մի ամօթխած հայեացք  
զցելով ցած, վերջ զրեց իր տխուր պատմու-  
թեան:

— Շարունակիր, Վարդուհի, շարունակիր, մի'  
ամաչիր:

— Սրանից երեք ամիս առաջ,—շարունակեց  
Վարդուհին, — ես քեզ պատահեցի թատրո-  
նում... Ախ, եթէ ես քեզ հետ, Սրբուհի, առաջ  
պատահէի, այն ժամանակ գուցէ այդ փորձանքը  
չփար զլիսիս: Մտքիդ է, երբ դու ասում էիր,  
կարծեմ՝ մեր երկրորդ տեսութեան ժամանակ  
էր, թէ ինչու ես մարդու չեմ գնում—ես քեզ  
ասում էի՝ որ չեմ ուզում, բայց... Այժմ իմացար,  
թէ ինչու էի ասում, թէ մարդու չեմ գնում...

Սրտասուքը խեղդեցին Վարդուհուն և նա  
սկսեց դառն կերպով լաց լինել:

— Ստոր, անսատուած, անսիրտ... բացական-  
չեց Սրբուհին, ուղղելով իր բարկութիւնն Ա-  
ռախւծեանի հասցէին:

— Ահա թէ ինչու ասացի քեզ ապրել չար-  
ժէ... Հիմա այդքան բաներից յետոյ, ինքդ ասա...

— Ոչ, ոչ, — բացականչեց Սրբուհին, — ոչ  
Վարդուհի: Եթէ ուզում ես ինձ լսել, ինձանից  
քեզ խրատ չհասնի, այդ ախսակ մտքերը գլխիցդ  
հանիր: Որքան էլ վատ լինի քո դրութիւնը,  
որքան էլ ցոյց արած լինեն քո արժանաւորու-  
թեան զգացմունքի դէմ՝ այնու ամենայնիւ քո  
կողմն է արդարութիւնը և դու չպիտի անես  
այնպիսի քայլ որ կարողանայ աւելի արատ  
բերել քո անուան... .

— Սրանից աւելի արատ լինել չի կարող:

— Ճշմարիտ է, քո դրութիւնն այնքան էլ  
նախանձելի չէ, բայց և այնպէս այն միջոցն,  
ինչ որ դու մտածում ես, աւելի քան պախա-  
րակելի է... Մարդս կեանքի մէջ իրան համար  
դորձաղրելու սկզբունք ընդունելու ժամանակ  
ամենից առաջ պէտք է կշռաղատէ այդ սկրզ-  
բունքների առաւելութիւնները: Պէտք է լաւ  
քննադատել, թէ ինչը հարկաւոր է ընդունել  
իբրև օգտական, անհրաժեշտ մի պահանջ:

— Եւ այժմ ես գտնում եմ, որ այդ դրու-  
թեան մէջ շարունակ մնալ անկարելի է: Ես  
չեմ կարողանում նայել մարդկանց երեսին, ինձ  
թվում է, ամենքն ինձ մեղադրում են... Վեր-

ջապէս, ինչի նման է այն աղջիկը, որ ինձ պէս խարված է... Ոչ, Սրբուհի, աշխարհս պաշարված է ձախորդութիւններով...»

— Ճշմարիտ է, բոլորովին ճշմարիտ է մենք շրջապատված ենք ձախորդութիւններով, վատ երևոյթներով, կամայականութիւններով, ճշմարիտ է և այն, որ մեր ոյժերը շատ անգամ թոյլ չեն տալիս դիմադրել դրանց դէմ; Ճիշտ է, այդ ձախորդութիւններն արգելք են լինում մեր երջանկութեան, մեր բախտուորութեան, բայց տես, թէ այդ բաների դէմ ինչ են քարոզում եւրոպական յայտնի մտածողները: — Կեանքի խնդիրը միայն նրա մէջ չէ, — ասում է յայտնի Զ. Ս. Միլլը, — որ այդ տեսակ անաջողութիւնների առաջ ընկճվել ու վհատվիլ: Գլխաւոր խորհուրդը նրա մէջ է, որ մարդս դիմադրի այդ արգելքներին... Եւ այդ գործողութեան մէջ ես, այդ անձնազրհութեան մէջ ևս քիչ բաւականութիւն չի պարունակվում: Իսկ մի ուրիշ (ռուս) մտածող ասում է: Մեր բոլոր էութիւնը ունի շարունակ փոխադարձ գործունէութիւն արտաքին աշխարհի հետ: Արտաքին ոյժերը, մարմացած արտաքին պէսպէս պատահարքներից շարունակ ձգտում են դէպի իրանց քաշել մեր հոգեկան ոյժերը, կլանել և ուժասպառ անել

նրան: Աշա այդ ժամանակ մենք մեր մէջ պիտի արթնացնենք մեր ներքին աշխարհի բարձր ու վսեմ գործունէութիւնը և սրանով սանձահարենք արտաքին պատահարքները. մի խօսքով՝ հոգու ոյժը պիտի կենտրոնացնենք մեր մէջ: Այն ժամանակ եռանդը փօխանակ սղառվելու մնումը է մարդու ներքին աշխարհում և սրանով ամրանում է մարդու ամբողջ գոյութիւնը...»

— Ինչ ուզում ես՝ ասա՛, միսիթարող երեցիներ չկան:

— Նայիր քո շուրջդ և տես, թէ որքան երեւոյթներ կան, որոնք ստեղծված են մեր միսիթարութեան համար: Մի՞թէ բնութիւնն իր հաղար ու մի շքեղութիւններով չպիտի միսիթարէ մեզ, մի՞թէ գիտութիւնը, բանասաեղծութիւնը և մարդկային վիճակը չպիտի հետաքրքրէ մեզ... Ոչ, Վարդուհի, այդքան էլ «հսի» մէջ չպէտք է կղզիանալ... Ներիր ինձ, ինչ էլ լինի, կրկնում եմ՝ շատ ծանր է քո գրութիւնը, հազար մեղք և պատուհաս նրանց, որոնք այդպիսի կորուստ են պատրաստում: Բայց և այնպէս մարդուս առաւելութիւնն էլ նրա մէջ է, որ թշուառ բոպէներում շրջանկատ լինի: Այդ տեսակ տիրութիւնն, յուսահատութիւն առաջ են գալիս այն ժամանակ, երբ մարդու մէջ բացա-

կոտրված սիրտ:

կայում է որոշ նպատակ, ցանկութիւն, գործ:  
Առանց այդ երևոյթների, —ասում է նոյն անդ-  
լիացի մտածող ջ. Ս. Միլլը, —մարդուս զյու-  
թիւնն անկարելի է, որովհետև սրանք են կաղ-  
մում մեր հոգու մմիթարութեան գլխաւոր  
նիւթերը: Զբաղվեր ընթերցանութեամբ, հետա-  
քրքրվեր քո շուրջը աիլող կեանքով և այն  
ժամանակ կտեսնես, որ այն վեշար, որ այժմ  
քեզ վերջին ծայր յուսահատեցրել է, այնքան  
էլ ծանր չէ, որքան դու պատկերացնում ես քո  
երևակայութեան մեջ:

— Միթէ կարելի է բանի տեղ զցել թառա-  
մած ծաղիկը, ում է նա հարկաւոր, ով է նրա-  
նով հետաքրքրվում.. .

— Քո ասած ծաղիկն ևս պարունակում է  
իր մեջ կեանք և վերածնվելու ընդունակու-  
թիւն: Նրա մեջ պարունակում են մարմիններ,  
որոնք անհրաժեշտ են բուսականութեան վերա-  
ծնութեան համար: Ծաղկի այն մասը, որ գրա-  
ւում է մեղ իր հրապուրով, կազմում է, եթէ  
կարելի է այդպէս ասել, նրա ժամանակաւոր  
մասը: Եյդ ժամանակաւոր մասի մեջ չէ ծաղկի  
անպայման նշանակութիւնը, թէև նա պաշտ-  
ապանում է ծաղկի գլխաւոր մասերը: Եյդ ժա-  
պանում է ծաղկի գլխաւոր մասը թառամում է,

թափվում է, բայց սրանից ոչինչ չի կորցնում  
բուսականութիւնը: Բայց ինչ կլինէր բուսակա-  
նութեան վիճակն, եթէ ծաղկի այն մասը, որ  
կորեոր է զարգացման համար, որ պիտի նոր  
ծաղկի առաջ բերէ, այդպէս ասած՝ նրա հոգին,  
չմնար կենդանի և սա էլ թառամէր իր ժամա-  
նակաւոր մասի հետ: Բայց բարեբախտաբար  
այդպէս չե— գլխաւոր մարմինը, որ վերակոչում  
է, վերածնում է բուսականութիւնն, այդ մասը  
մնում է կենդանի և ընդունակ նոր կեանք ա-  
ռաջացնելու... Ուրեմն հասկացող մարդու աչ-  
քում այն ժամանակաւոր մասի չգոյութեան  
պահանուվ ծաղկի նշանակութիւնը բոլորովին  
կորած չի համարվիլ: Բայց սրանից, ես ուզում  
ասել որ վշտի պատճառ որքան կարելի է  
համարել նրան, մասսամբ կարելի է մեղագրել  
և քեզ... Ամեն մէկը մեղանից պիտի կարողա-  
նայ պաշտպանել պատահարքներից իր անձը և  
եթէ դու չես կարողացել այդ անել գոնէ պէտք  
է այժմ հաշտուես քո զբութեան հետ և բո-  
լորովին զլինիցդ հանես այն յնորքները, որոնք  
պատիւ չեն բերում շատ-քիչ խելքը գլխին  
մարդու համար... .

Եյդպէս Սրբուհին բացարձակ յայտնում էր  
իր կարծիքներն և ամեն կերպ աշխատում էր

հեռացնել և ցրուել այն մտքերը, որոնք պաշտպելով Վարդուհուն կարող էին նրա համար վատ վախճան ունենալ: Վարդուհին թէեւ չեր համաձայնվում, բայց նրա խօսակցութեան մէջ գործած զանազան թուիչքները բաւականի պարզ կերպով ապացուցանում էին մի տեսակ հաշտուելու պատրաստականութիւն:

¶

**Ա**նցան օրեր. անցաւ աշունը. եկաւ ձմեռը: Մի տօն օր էր: Առիւծեանը խիստ յուղված անց ու զարձ էր անում իր առանձնամենեակում: Նրա կրծքի մէջ եռում էր մի կատաղի փոթորիկ: Հասարակաց կարծիքը, որ արդէն սկսել էր մեղաղրել նրան, նրա հոգեկան աշխարհում այն յեղափոխութիւնն առաջ քերեց, ինչպէս Վարդուհու երես դարձնելը: Այդ մարդը, որ ոչ մի բանի առաջ ընկնել չգիտէ, այժմ մի անելանելի գրութեան մէջ է զգում իրան: Նա սպողնել էր և խիստ յուղվել: Նրա մաշված երեսի վրա կարելի էր նկատել թէ ինչպիսի սպանիչ գրոշմ է թողնում օրիորդի բացարձակ տաելութիւնը:

Եւ միթէ նա կարող էր այդ սպասել երբ և իցէ:

Մինչեւ վերջին ժամանակներս նա օրիորդից ոչ մի արգելք չեւ տեսել, խակ այժմ նա ամեն մի քայլում խուսափում է նրանից, չի նստում

Հետը ձաշելու, չի ընդունում սենեակ, իսկ պատահած ժամանակ սպանում է նրան իր մեռելային լռութեամբ:

Մինչդեռ հիմա նա աւելի, քան երբ և իցէ, կարիք է զգում օրիորդի հետ խաղաղ խօսելու: Այժմ կարծես, Վարդուհին այդ սառնութեամբ աւելի էր վառում նրա սրտի մէջ գաղանային ցանկութիւններ: Երբէք օրիորդը նրա աչքին այնքան գեղեցիկ չի երևել, ինչպէս այժմ, երբ նա դարձրել է արդէն երեսը: Այժմ Առիւծեանը գտնում է, որ այն ժամանակ, երբ սրանց յարաբերութիւնները լաւ էին, նա գեռ շատ բան չի նկատել Վարդուհու վրա:—Ահա նրա մանրաքայլ շարժմունքը, նրա առողջ կռները, նրա երեսի առանձին զրաւչութիւնը... Ինչպէս նա մինչեւ այժմ այդ ամենը բանի տեղ չի դրել... Այդ կորուստը նրա ուղեղի մէջ մի կատաղի բորբոք առաջացնելով, խիստ անհանգստութիւն էր պատճառում նրան: Առիւծեանը զգում է, որ չի կարող տանել այդ հարուածը: Նա ըդգում է, որ չի կարող Վարդուհուց բաժաննվել: Նա պատրաստ է հաղար արգելքների առաջ գնալ ոտնատակ անել այն արգելքները, որ արձանացել է նրանց յարաբերութիւնների մէջ: Ահա այդ միտքը նրան հանգստութիւն չէր տա-

լիս... Ի՞նչեր էին անցնում այդ հրէշի զլիսում: Ի՞նչ սարսափելի դժոխք է ներկայացնում այդ մարդու սիրտը, որ աւելի կատաղի էր զառնում, երբ պատահում էր արգելքների, երբ ձեռքից բաց ընկած էր համարում իր սեփականութիւնը: Նա տեսնում էր, որ օրիորդը նրան այլ ևս տեսնել չի ուզում, նա թքել է նրա երեսին, արդէն նրա գյութիւնը Վարդուհու համար անհետացած է, այժմ այդ աղջիկը նրա բոնկած զգացմունքներին ու կրքերին կարող է միայն պատասխանել մի կատարեալ զգուանքով և ատելութեամբ... Այդ բոլորից յետոյ էլ այդ հրէշը ձգտում էր օրիորդին ձեռքից բաց չթողնել... Նա այնքան տաքացած էր, որ բոլորովին միտք չէր էլ զագալիեցնում: Թէ մինչեւ երբ պիտի այդպէս շարունակվի... .

Բայց եթէ այդ բոլոր կերպարանափոխութիւնն ունի իր յարգելի պատճառը... Կըկին մտածեց նա: Եթէ օրիորդի սիրտն այժմ լցված է ուրիշ զգացմունքներով գէպի մի այլ մարդ, որ աւելի երիտասարդ է ու աւելի... և նրա միտքն այլ ուղղութիւն ընդունեց: Նա կարծում էր, որ այժմ երբ նա փափազում է օրիորդի սիրուն, օրիորդն իր քաղցր զգուանքները շուայւել է ուղում ուրիշի համար: Եւ եթէ այդ

ուղեղ է — օ, այն ժամանակ ի՞նչ պիտի առնէ նա:

Բայց... հաղեւ թէ այդ ենթալրութիւնները հաւանելի լինեն, քանի որ, որքան նա նկատում է, օրիորդը գրեթէ ոչ մի մարդու հետ չե պատահում և ոչ մի ծանօթ երիտասարդ չկայ դրանց շրջանում, որի հետ Վարդուհին կարողանար սպասածից աւելի յարաբերութիւններ ունենալ... Ոչ եթէ նա մի անդամ էլ դիմէ, կրկին խնդրէ, ցոյց տայ իր սէրը, և օրիորդը կհաւատայ իր զբացմունքներին:

Ծյդ մոտածմունքների մէջ խօրասուզված նա հաղեւ մի քայլ արաւ դէպի Վարդուհու սենեակը, ինչպէս մի թեթև աղմուկի ձայն պատշաճից հասաւ նրա ականջին: Նա կանոնեց և գամբից հասաւ նրա ականջին: Նա կանոնեց և մի ակամայ հայեացք զցեց դռան կողմը: Նա մի ակամայ հայեացք զցեց դռան կողմը: Մկրտում աղայի լայնածաւալ իրանը:

Երբէք Մկրտում աղայի այցելութիւնն այն բարկութիւնը չե շարժել Առիւծեանի սրտում, բայց անգամ նա ընդունեց նրան այնպէս ինչպէս այդ անգամ: Նա ընդունեց նրան այնպէս սառը, որ Մկրտում աղան, չնայելով իր սահմանը, որ Մկրտում աղան, չնայելով իր սահմանը:

— Տեղ գնալու ես, ասա՛, — կանդ առնելով փսփսաց նա:

— Ո՞չ — եղաւ Առիւծեանի լակօնական պատասխանը:

— Եթէ գնալու ես՝ ասա՛, ես կարող եմ ուրիշ անգամ խօսել...

Մկրտում աղան երկար չէր կարողանում պահել իր ասելիքը և պատրաստ էր մանելուն պէս սկսել բայց Առիւծեանի սառնութիւնը տեսնելով, տատանման մէջ ընկաւ:

— Ուղիղն ասած, — քօղարկեց իր սառնութիւնն Առիւծեանը, — չգիտեմ ինչու, այսօր շատ տխուր եմ...

— Ի՞նչ է պատահել, եկ կլուք տանեմ, մի քիչ կրացվես...

— Բան չունիս: Նստիր խօսենք: Ի՞նչ կայ: Պէտք է այս շաբաթ մի անգամ ժողովվենք... Ե՞րբ ես արձակ:

— Երբ ուզում ես. Թէկուզ հէնց վաղը:

— Զէ, վաղն ես չեմ կարող: Շաբաթվայ վերջում՝ ուրբաթ կամ շաբաթ:

— Գործ կայ, — հետաքրքրվեց Մկրտում աղան, — Էլի քար ծախում ինք, ինչ է...

— Քո ծախսելունը ծախսեցիր, էլի ինչ ես ուզում:

— Ի՞նչը — ժամկօչների տան համար — սա ի՞նչ է որ, սա մեր եղած քարին՝ «ուղաին գլաւով ջուր»...

— Զէ, չէ, —ընդհատեց Առիւծեանը, զգուշանալով ընկերոջ շատախօսութիւնից, —ուղեղն ասած՝ պիտի եկեղեցու դռները, պատուհանները ներկամ, ասացի՝ դպրոցի պատուհաններն ել ներկենք:

— Հա, դէ ասաք քո աչքի լոյս՝ ներկ կծախես...

— Ե՛, մանեթի բաներ են, հազարների բանիսուի...

— Ինչ կայ որ... Բայց այժմ ուսում կայ, ինչպէս ես ներկում:

— Գարնանը, գարնանը, ինչ է մնացել որ... Պատրաստութիւններն այժմեանից պիտի տեսնել:

— Ասենք այդ ուղեղ է: Շատ լաւ:

— Հւատառ՝ ժողովվելու կարիք էլ չլինի: Խօսեցինք էլի, ուրիշ բան խօ չկայ. օրագրութիւնը կուղարկեմ, կստորակրես...

— Ա՛խր, աւել բան ինչ է պէտք որ... Բայց, Օսէփ, զիտես ինչի համար եմ մօտպ եկել — սկսեց Մկրտում աղան, տեսնելով Առիւծեանի տրամադրութեան փոխվելը:

Եւ Մկրտում աղան առաջ մի լաւ փսփսաց, յետոյ տեղում մի շարժում անելով սկսեց.

— Սյդ Դաղարն, Օսէփ, զլուխս ծակում է, մի ջոկ բան, ջոկ բան, վեց ամիս է հոգիս ջուր է խմեցնում, որ քեզ խնդրեմ...

— Ի՞նչ է եղել, —զարմացաւ Առիւծեանը:  
— Ինչ կլինի, չես խմանում —ուզում է տէրտէր գաւուալ...

— Հիմա խնդրում է, որ այդ գործում նրան աջակցես...

Առիւծեանը մարմնացած ուշադրութիւն կըտրսվեց:

— Սկզբեց, ուղեղն ասած, ուշադրութիւն չէի դարձնում, հիմա շատ որ ասում է, ինչ անենք, մեղք է, մտածում եմ՝ մենք որ չօգնենք, ուրիշը խօ չի օգնիլ — ի՞նչ կասես, Օսէփ, հէ:

Առիւծեանը մի անորոշ շարժում արեց գլխով:

— Ես հիմա զբա համար էլ զլսաւորապէս եկել եմ, որ խնդրեմ, զու, իբրև երեսփոխ, աջակցես այդ գործում:

— Ես ի՞նչ կարող եմ անել:

— Դէ զու էլ հիմա քեզ թանգ մի՛ ծախիր:

— Եթէ ինձանից հարցնեն:

— Զէ, զու պէտք է աւելի մօտ մտերմութիւն ցոյց տաս — որ օրվայ բարեկամներ ենք...

— Օրինակ:

— Տարկաւոր է տէր Մակարի հետ խօսել ես այնքան էլ մօտ չեմ, որ ինքս անձամբ զնամ, ահա այդ պատճառով ասում եմ, որ զու քո կողմից խնդրես — հասկացա՞ր: Սյդ էլ որ կայ,

Օսէփի, մի լաւութիւն է։ Քանի տարի է, որ այս  
տղան մեր եկեղեցուն ծառայում է, վերջապէս՝  
մի օր պիտի ձեռնալրել, թէ չէ...

— Լաւ, ինչ ես շուապում, ջահիլ է, ջա-  
հիլ...

— Ինչն է ջահիլ 32 տարեկան է։ Օսէփի,  
երես չեմ տեսնում, չասես որ եղբօրս տղան է,  
բանի դրիստն եմ ասում—եղբօրս եթէ նման  
լինէր, բերան չէի բացիլ, բայց նա ողորմած հոգի  
հարսին է նման—իսկ նա ազիզ կին էր... Զեռ-  
նաղրվի, չենք փոշմանիլ։ Ուսումն էլ խօ փառք  
Աստուծոյ, աւարտած էլ է չլինի, բայց բոլոր  
այդ աւարտածներին ջրի կտանի, ծարաւ յետ  
կրերի։ Աչքաբաց տղայ է, նա մեր յեղի մէջ  
մէկ հատ է։ Եթէ նրա հայրը կենդանի լինէր,  
որքան էլ թոյլ մարդ լինէր ողորմած հոգին,  
տղային չէր թողնիլ քահանայ գառնալ։ Նա  
այսօրվան օրը մեր պէս պատուական վաճառա-  
կան կլինէր, բայց ինչ անես, որ բանն այդպէս  
է եկել... Սրան էլ փառք։ Փոքրով էլ պիտի  
բաւական լինել։

Առիւծեանը կամաց-կամաց սկսեց հետաքր-  
քըսվել այդ նորութիւնով։

— Ես ի՞նչ պէտք է ասեմ տէրտէրին,—  
հարցրեց նա։

— Դու լաւ կիմանաս, դա ըսկի իմ բանն է,  
որ իմանամ։ Առաջինդ խօ չէ։

— Այն, պատահել է, աշխատել եմ, բայց որ-  
քան յիշում եմ, այդպէս է եղել՝ ստորագրու-  
թեան թերթ են շրջեցրել...

— Հա, այդ պէտք է։ Բայց ամենից առաջ  
հարկաւոր էր տէր Մակարին տեսնել... Ես ինչ  
իմանամ, գոնէ Ղաղարն այդպէս է ասում։

— Բայց այդ բանը փող կնստի։ Ես յիշում  
եմ, տէր Գէորգի ձեռնաղրութեան ժամանակ  
միայն սրբազնի ձեռքին 300 մանեթ ճըլ-  
տեցինք... .

— Սրբազնի... զարմացաւ Մկրտում աղան։

— Այն։

— Ի՞նչու համար։

— Աջահամեցյլ։

— Հա... .

— Ծառային էլ մի լաւ բրիւկացու։

— Բրիւկացու։

— Աշխր։

Տիրեց միջոց լռութիւն, որից յետոյ Մկրտում  
աղան սկսեց։

— Լաւ, ինչ անենք, ինչպէս ուրիշներից՝ այն-  
պէս էլ մեղանից։ Կարո՞ղ ենք չտալ... .

— Չե։

— Այդ ոչինչ գու միայն, խնդրում եմ, աշխատիր—այդ ծախսերի վրա բանը չի մնալ. իմ զրպանից խօ չէ, ես նրան փոխարինաբար եմ տալիս, ձեռնազրվելուց յետոյ կստանամ:

— Այդ բոլորը գեղեցիկ, բայց նա պսակված չէ,—ասայ Առիւծեանը, յոյս դնելով, որ գոնէ սրանով կհեռացնէ այդ ոչ-ցանկալի միջամտութիւնը իր վկից:

— Այդ բանի մասին էլ, Օսէփ, ուզում էի ասել բայց չգիտեմ, ինչպէս կընդունես...

Առիւծեանն ուշազրութիւնը խիստ լարեց:

— Այդ արդէն իմ կողմից եմ ասում: Եթէ յօժար չես լինիւ խնդրեմ, իմ ու քո մէջ մնայ միայն...

— Ասա՛, ասա՛, տեսնեմ:

— Ես կուղէի, որ առնէր Վարդուհուն, եթէ միայն կտաս...

Առիւծեանին, կարծես, շանթահարեցին: Դա նրա համար մի այնպիսի անսպասելի նորութիւն էր, որ նա ոչ մի ժամանակ չէր սպասիլ:

— Վարդուհուն...—բացականչեց նա, վեր թռչելով տեղից:

— Ես իմ կողմից եմ խնդրում: Այդ աղջկան շատ հաւանում եմ և կամենում եմ, որ հարս լինի, իսկ եթէ...—այն ժամանակ ներողութիւն եմ խնդրում:

— Վարդուհուն, — կրկնեց Առիւծեանը, — այն, այն... Ուղիղն ասած՝ այդ աղջկայ ամուսնութեան մասին ես մինչև այժմ չեմ մտածել:

— Նատաղ չէ, թող մի քանի օր մնայ—մտածիր, յետոյ պատասխան կտաս...

Առիւծեանի սրտից կարծես մի բան պոկեցին: Նա հազիւ էր կարողանում զագել իր սրտի յուղմունքը:

— Իմանում ես, Օսէփ, մարդ մարդու բարեխօս չլինի, բան էլ զլուխ չի գալ: Մէկ-մէկու ձեռք միշտ պիտի բունենք... Երես չեմ տեսնում: տաս՝ չես փօշմանիլ այն աղջիկն էլ աղքատ մարդու աղջիկ է, նրա համար էլ շատ ուրախալի կլինի... Բայց ի հարկէ մտածիր...

Մկրտում աղայի գնալուց յետոյ Առիւծեանն ընկաւ խոր մտածմունքների մէջ: Այժմ նրա երեսի վրա նկատվում էր թախիծ և տիրութիւն: Առիւծեանն երկար ժամանակ չէր կարողանում հաշտվել այն մոքի հետ, թէ ինչպէս կարող է օրիորդից բաժանվել: Նա դեռ յոյս ունէր, որ Վարդուհին կրկին կդառնայ նրա զիրկը և ինքը կարժանանայ նախկին գգուանքներին, նախկին փոխադարձ համակրութեան: Առիւծեանն ինքն էլ չգիտէր, ինչ անէր... Մի բոպէ նրա միտքը կանգ առաւ այն բանի վրա,

թէ նորոգվեն յարաբերութիւնները, ի՞նչ կարող է լինել: Սյն ժամանակ տւելի վտանգ չի սպառնում արդիօք: Այդ հարցն առաջին անգամ նստեց նրա գլխում:

Յանկարծ նա սառն կերպով ժպտաց—նրա զլիում ծագեց մի միտք, որ մարդու տալը կարող է նրա համար լաւ լինել... Ուղիղ է ասած, որ մարդու միտքը ծով է—ինչպէս ծովում փոթորիկին յաջորդում է խաղաղ զրութիւն, այնպէս էլ Առիւծեանի յուղմունքին յաջորդեց անդորրութիւն... և խաղաղ անդորրութեան նշաններ արտայայտվեցին այդ մարդու երեսի իւրաքանչեւր ծալքերի վրա:

Սյու մարդու տալով կարող է նա դուրս գալ այդ զրութիւնից և մի անգամից երկու նպաստակի հասնել... նախ՝ սրբել հասարակական տակի հասնել... նախ՝ սրբել հասարակական թեր և դէմ բամբասանքները և երկրորդ՝ եթէ կայ ձանապարհ՝ Վարդուհու համակրութիւնը կարկին վայելելու, սա է միայն նպատակին տակրին վայելելու, սա է միայն նպատակին տակրին կարծ ձանապարհը... Եւ նա հանդիսատ սրտով սկսեց քայլել սենեակի մէջ:

թ.

**Q**արմանալի կերպով բախտը ժպտում էր Ղաղարին: Անձամբ նա ինքը ոչինչ չէր անում և նրա ձեռքից ոչինչ չէր գալիս, բայց նրա տեղ միշտ գտնվում էին մարդիկ, որոնք այսպէս թէ այնպէս պատրաստ էին օգնել: Օգնում էր նրան Մկրտում աղան, օգնում էր և քարտուղարը, թէև Գէորգի Միխայլիչի օգնութիւնը կարող էր յարմար տեղում աջող խօսքը միայն լինել: Բայց չ որ դա էլ կարող էր իր նշանակութիւնն ունենալ, մանաւանդ, եթէ աչքի առաջ ունենանք Գէորգի Միխայլիչի սկաշտօնական անձանց հետ շփվելը: Իսկ Մկրտում աղային այդպէս վարփելու ստիպում էր մի այլ հանգամանք, հանգամանք, որ իր ամբողջութեամբ պարտական է հեռաւոր անցեալին:

Մկրտում աղան իր եղօր կենդանութեան ժամանակ գործերը վարում էր եղօր հետ միամին, բայց որովհետեւ Ղաղարի հայրը հեռաւես

մարդ չէր, այդ պատճառով Մկրտում աղային  
աջողվեց եղօր մահից յետոյ եղած-չեղածը  
իրան սեփականացնել: Այդ բանը զլուխ բերել  
դժուար չէր, քանի որ գոյքի գլխաւոր մասը՝  
փողը, որ կազմում էր մի պատկառելի գումար,  
ամբողջապէս մտաւ Մկրտում աղայի գրպանը  
դեռ եղօր հիւանդութեան ժամանակ, իսկ խա-  
նութիւ ասլրանքի վրա Մկրտում աղան ցոյց էր  
տուել այնքան մուրհակներ, որ խանութիւ կէսը<sup>ւ</sup>  
գնում էր պարտքին: Ղաղարի մայրն այդ բա-  
ներից տեղեակ չէր, որովհետեւ նա առհասարակ  
շատ քիչ էր հետաքրքրվում ամուսնու գործե-  
շատ և նա շատ բաւական մնաց, երբ ամուսնու  
մահից յետոյ Մկրտում աղան առաջարկեց մի,  
իսկապէս ասած, չնչին գումար մնացած հաղար-  
ներից: Միամիտ կինը դերեզման իջաւ այնպէս  
էլ անտեղեակ իր տեղօր վարմունքից:

Այժմ Մկրտում աղան իր խիղճն արդարաց-  
նելու համար մի բանով էլ է ուզում էր փո-  
խարինած լիներ իր եղօր որդուն: Մանաւանդ  
նրան այդ ստիպում է անել հանդուցեալ եղօր  
կտակը, որ կայանում էր մի քանի բնորոշ խօս-  
քերից՝ «Ղաղարիս մեղք մի արա»... Այդ բո-  
քը նրան ստիպեց եռանդուն միջոցներ գործ  
դնել նոյն իսկ մի քանի հարիւրների առաջ

չկանգնել և Ղաղարին քահանայացնել... Այդ  
բանով նա իր եղօր վերջին ցանկութիւնը կա-  
տարած կլինէր, այսինքն՝ «մորդ շինած կլինէր»  
և սրանով իր խիղճը մաքրած:

Ղաղարի այդ երազած ցանկութիւնը ըստ  
երկեցթին իրականութիւն էր ստանում: Այսօր  
նա մինչև անգամ հրաւիրեց քարտուղարին  
անձամբ հաղորդելու այն նորութիւնը, որ նա  
լսել էր իր գործերի վերաբերմամբ:

Այդ անգամ նա գնել էր գինի: Մեծ շեշտ,  
որի միջից ցոլանում էր զինու գրաւիչ փրփու-  
րը, դրած էր սեղանի վրա, նրա մօտ անբաժան  
հաց ու պանիրը: Գէորգի Միխայլիչը սիրում  
էր զինու վրայից բերանն աղիացնել պանրով:  
Այդ բանը զիաւէր Ղաղարը:

Փոքրիկ լամպան՝ տարածելով իր լշուր, լու-  
սաւորում էր հիւրերի երեսն և սրանց ուրախ  
հայեացքները:

— Ուրեմն գործդ կարգին գնում է, — ցած  
դնելով բաժակը և վերցնելով մի կտոր պանիր,  
հարցրեց քարտուղարը, որի հարցական եղանա-  
կի մէջ շեշտվում էր, գլխաւորապէս, հետա-  
քրքրութիւն թափանցել իր ընկերոջ ակնարկ-  
ների իմաստը:

— Կարծում եմ, բայց մի շաբաթից յետոյ

աւելի կպարզվի... Առիւծեանը հօրեղբօրս յայտնել էր, որ կմոածի, բայց այսօր համարեա թէ կտրական պատասխան է տուել—միայն յանկանում է գործը վերջացնելուց առաջ ինձ հետիւսել:

— Ի՞նչ կայ որ:

— Մի ասիր, Գէորգի Միխայլիչ այ որ ասեմ, չես հաւատալ, ինքս անձամբ խօսելուց ամաչում եմ, մանաւանդ եթէ Վարդուհու հետ երես առ երես ուղենայ խօսեցնել... Զգնացած տունս խօչէ, բայց որ երեսս չի բռնում...

— Զարմանալի տղայ ես... Զէ, հիմիկվան ջահիները ուրիշ տեսակ տղերք են: Ողորմած հոգի ծրատանին ճանաչում էիր — մեզանում կծառայէր — սա երկրորդ անգամ պսակվում է՝ հիմա պիտի զնայ նշանածի մօտ, գէս գէն՝ չի գնում՝ ամաչում է... Մի շաբաթ էլ ինչ էր չէր գնացել վերջը ընկերներից մինի հետ է գնում: Հիմա դու էլ ինձ համար ծրատանն ես դարձել: Մէջ աշխարհի մի մնացիր, ուղում ես՝ կգամ... և քարտուղարն իր սովորական քրքիջն արձակեց:

— Ճարս կտրված կգնամ, բա ինչ կանեմ, ես այնպէս խօսք օրինակ եմ ասում: Օրինակ, ինձ համար հեշտ է սրբազանի մօտ զնալ քան թէ մի որ և է աղջկայ մօտ...

— Շտահցդ աղօթիր — ինչպիսի սրբազան կը լինի — ամենի մօտ շատ էլ հեշտ չիս գնալ... Բայց այդ թողնենք, մարդ՝ ՚ի մարդանայ բան խօսենք՝ փող կայ, թէ չէ:

— Փողի մասին դեռ խօսք չի եղել, կարծում եմ կլինի. ինչպէս բանից երեսում է, հենց այդ բանի համար էլ ուղում է, երեխ, ինձ հետ անձամբ խօսել, տեսնվել...

— Կարող է լինի:

Գէորգի Միխայլիչը բնազդմամբ ձեռքը տարաւ զինու շեշին և լցրեց բաժակները: Նրանք խմեցին:

— Օ՛, օ, այս ինչ տղամարդ զինի է, — ծրամը վելով նկատեց քարտուղարը, — երեխ թալաշեց չես առել:

— Թալաշինն է. նրան թողած՝ ումից պիտի առնեմ որ...

— Դու աշխատիր առ այժմս ծածկել այդ գործը, աջ ու ձախ ամեն աեղ մի պատմիր, — խրատում էր Գէորգի Միխայլիչը, — բերանիցդ բան բաց չմողնես, մանաւանդ կօնսիստօրում տէր Մաթոսից զբաց կաց — նա այն հոգին է, որ Աստուած ազատի, ամեն մի մաղի տակ 10 սատանայ է պալզած, նրա քթին արդէն մի հոտ կպել է... Այսօր կօնսիստօրից դուրս դալուց

տեսնեմ մօտենում է, այսպէս հանդարտ, քաշ-  
քըշվելով և ուզում է խօսք քաշել:

Եւ Գէորգի Միխայլչը վեր կացաւ տեղեց ու  
ձեացրեց տէր Մաթոսի կեղծ շարժմունքը:

— Ի՞նչ է ասում,—հիտաքրքրվեց առանձին  
ուշադրութեամբ Ղաղարը,—չլինի թէ տղային  
է ուզում ձեռնադրել...

— Բա ինչպէս էիր իմանում:

— Հիմա նրա որդին ինչ քահանայացուի մարդ  
է որ, այծի ձայն ունի, վերջապէս նրա շնորհքն  
ինչ է որ, ինքն էլ շատ տարի չէ, որ ծառա-  
ռում է եկեղեցուն, իսկ ես այ Զրօրհնեքին 10  
տարիս կլրացնեմ 11-րդը ուս կկոխեմ...

— Ինձ ես ասում, չեմ իմանում... Հիմա ես  
խօ չեմ կանգնիլ այդ բոլորը երեսով չեմ տալ...  
Ես իմ բանս իմանում եմ՝ այնպիսի ձե տուի,  
որպէս թէ ոչինչ չգիտեմ...

— Շատ լաւ ես արել... Աստուած արժանացնի  
այս գործս գլուխ զայ, ես այդ տէր Մաթոսի  
հետ ուրիշ լեզուով եմ խօսելու... Նա գեռ ես  
իմ մի երեսս է տեսել...

— Դու հիմա նրան բան չասես:

— Խելքս խօ չեմ կորցրել չեմ իմանում...  
Ես ինքս էլ նկատում եմ, որ նա ուրիշ աչքով  
է նայում ինձ կօնսիստօրում, ամեն բռպէ ար-

ձակվում է վրաս, ինչ զրում եմ, չի հաւանում,  
իսկ իր տղան ագուաւի ճանգեր էլ շարի—լաւ է...

— Ոչինչ ոչինչ բանի տեղ մի գցիր, սիրող  
լայն պահիր, ամենի վրա նեղանալ չի կարելի,

— վեր կենալով տեղեց նկատեց քարտողարը:  
— Լաւ, ի՞նչ էք շտապում:

— Զէ, չեմ կարող առաւօտները վեր կենալ  
չեմ կարողանում, գինիք էլ այնպէս թունդ  
գինի է, որ քուն եկաւ վրաս:

Ղաղարն ուրախ ուրախ ճանապարհեց ընկե-  
րոջ մինչեւ զուոր, յետոյ եկաւ, նստեց սեղանի  
առաջ, թեք ընկաւ և աննպատակ նայելով  
հեռուն, խորասուզվեց իր քաղցր մոքերի մէջ:

— Այդպէս էլ պիտի լինի, քանի որ այժմ  
դու պիտի գառնաս օրիորդին մօտ անձնաւորու-  
թիւն, նրա պատիւը քեզ էլ է վերաբերում...  
Բայց չէ,—մի քիչ տատանումից յետոյ ասաց  
Առիւծեանը, —լաւն այն է, որ դու թողնես այդ...

— Ես անկեղծ սրաով ուզում եմ Վարդու-  
հուն, ես նրան այնքան սիրում եմ, որ կարող  
եմ ներողամիտ լինել նրա մի քանի պակասու-  
թիւններին:

— Եթէ այդպէս է, խօսք չունիմ... Հաւատա-  
ցիր, որ ես քեզ բոլոր եղելութիւնը պատմեցի  
առանց ծածկելու։ Մեղաւորն ես եմ միայն...

Հազարն արդէն մաքում հաշտուել էր այդ  
խնդրի հետ։ Նա տեսնում էր, որ այդ ամուս-  
նութիւնը նրան շատ առաւելութիւններ է խոս-  
տանում, ուստի այժմ ուզում էր խօսքը գար-  
ձնել այն կէտի վրա, որ աւելի էր երաշխաւորում  
ցանկալի կէտերը, քան թէ Առիւծեանի անօդուտ  
մեղայականը։ Ահա այդ պատճառով նա կամե-  
ցաւ խօսքին ուրիշ ուղղութիւն տալ:

— Ես հաւատում եմ, որ աղջիկը մեղաւոր  
չէ, ես պատրաստ եմ իմ խօսքին հաստատ  
մնալ — ասաց նա, — միայն յոյս ունեմ, որ դուք  
իմ պայմաններն էլ անտես չեք անիլ։ Այդ  
պայմանների համար ես կանեմ ամեն բան։ Ես

†.

**Պ**ու դարձեալ ուզում ես օրիորդին  
այն ամենից յետոյ, ինչ որ քեզ  
պատմեցի, — հարցրեց մուշտակի  
մէջ փաթաթված պարոնը այն  
երիտասարդից, որ գնում էր նրա հետ և որ  
աշխատում էր զիշերվայ ցրտի առաջ իրան աշ-  
խուժով պահել։

Նրանք քայլում էին առուակի փողոցի ուղ-  
ղութեամբ։ Խոր զիշեր էր, ամեն ինչ թաղված  
էր մեռելային լռութեան մէջ։

— Հիմա ինչ անենք, փորձանք է, որ կարող է  
ամենքիս գլխին դալ...

— Բայց ես աւելի լաւ եմ համարում այժմ  
ասել, քան թէ յետոյ անբաւականութիւնների  
տեղեք տալ, ես չեմ ցանկանալ որ օրիորդի երե-  
սին խօսք հասնի...

— Ո՞չ. ես ձեզ ասում եմ և տալիս եմ իմ  
ազնիւ խօսքը, որ այդ ամենը ծածուկ կմնայ,  
մինչև անգամ իմ հօրեղքօրից...

կպսակվեմ՝ Վարդուհու հետ և ամեն մի բեռ  
կթեթևացնեմ ձեր վրայից։  
— Դու ի՞նչ պայմանների մասին ես ասում։  
— Շատ աննշան։  
— Օրինակ։  
— Նախ այն խոստումներն, ինչ որ արել էք  
հօրեղբօրս. . .  
— Այսի՞նքն։ Աւելի լաւ է հիմա խօսենք և  
դրա մասին, որ թիւրիմացութիւններ առաջ  
չգան։ Եւ հենց այդ պատճառով կամեցայ քեզ  
հետ անձամբ խօսել. . .  
— Իմ խնդիրս հետեւեան է. նախ ես ուզում  
եմ քահանայ ձեռնադրվել. . .  
— Այդ կաջողեցնենք։  
— Երկրորդ... Հա, հաւատացած եղէք, որ ես  
ոչ մի խօսքով, ոչ մի ակնարկով օրիորդի երե-  
սին չեմ տալ, մի խօսքով ամբողջ գործին այն-  
պիսի ուղղութիւն կտամ, որ կարծես թէ այդպէս  
էլ միշտ լինում է։  
— Այդ շատ լաւ է, հաւատում եմ։ Բայց  
դու միթէ բացի սրանից էլի պահանջ ու-  
նի՞ս. . .  
— Անպայման։  
— Էլ ի՞նչ ես ուզում, — զարմացաւ Առիւծ-  
եանը։

— Յայտնի է, որ ամսւանութեան հետ կապ-  
ված են ծախսեր, այնպիսի ծախսեր, որոնցից  
խուսափելն անկարելի է։ Ահա այդ ծախսերն  
անկլու համար ես միջոց չունիմ։ Կարծում եմ,  
որ այդ ծախսերի և թեթև ապահովութեան  
համար 2000 լուրջին ձեր աչքին շատ չի ե-  
րեիլ. . .  
— Հա, ուրեմն դու փող էլ ես ուզում։  
— Բայց միթէ առանց փող պսակվում են։  
— Բայց դու շատ-շատ ես ուզում։  
— Երբ որ մարդ պատահաբար հագած շոր  
է առնում, միթէ սա պիտի մի և նոյն գինն ու-  
նենայ, ինչ որ նորը։  
— 1000 լուրջի կտամ, — կարծ կապեց Ա-  
ռիւծեանը։  
— Խնդրեմ այդ բանի մասին մի խօսեք —  
սա մի այնպիսի չնչին գումար է, որի մասին  
խօսելն անգամ չարժի։  
— Բայց և այնպէս... Ես էլ ինչ մեղք ունիմ,  
ուրիշի աղջկան մարդու եմ տալիս, այդ քիչ է,  
փող էլ պիտի տամ.. Լաւ, լաւ, մի բան կա-  
նենք, յօժար եմ։ Երբ ես ուզում նշանը բերել։  
— Երբ կուզէք, զիցուք հենց վաղը։  
— Շատ լաւ, երբ կկամենաք, ինձ համար  
բոլորը մի է։

Գիշերվայ ցրտութիւնը քանի գնում էր սաստկանում էր, զիշերապահների չխէսկոյն աւելի եռանգով էր լսվում: Հեռում էր քաղաքային ժամացյցի մուրճը չափաւոր հարուածներով զարկեց տասներկու անգամ: Երկու անցորդները մօտեցան դարպամներին և Առիւծեանն առաջին անգամ սեղմեց Ղաղարի ձեռքը ու անհետացաւ բագի մէջ:

ԺԱ.

**Մ**իւս օրն, իրիկվայ ժամերգութիւնից յետ, երբ արեգակի վերջին ձառագայթներն արդէն քաշվում էին եկեղեցու զանգակատներից և տան կտուրներից, Վերափոխման կոչված փողոցով անցնում էր մի քահանայ բնորոշ կերպարնքով, որ ի դեպ ասած՝ բաւականի աչքի էր ընկնում: Այդ քահանան դուրս գալով եկեղեցուց՝ ծանր քայլերով ուղեղերվում էր դէպի այն փողոցը, որ զանվում էր եկեղեցուց ոչ հեռու, ինչպէս, սովորաբար, զանվում են քահանաների տները: Այդ փողոցը ծիւղաւորվելով մի քանի փողոցների, միանում էր դէպի շուկան տանող հրապարակը:

Շարունակելով ձանապարհը, մէկ-մէկ կանգ էր առնում և այս ու այն կողմը զիտելով, կրկն շարունակում էր իր ուղին:

Տէր Մակարը (այդպէս էր սրա անունը) քաղաքի քահանաներից աչքի ընկնող զեր կատա-

բողներից էր: Նա իրան յոգնած չէր զգում: Չնայելով իր 50 պատկառելի տարիքին և իր ծանրակշիռ կազմուածքին, աւելի երիտասարդ էր երեսում: Դրա լիքն երեսն արտայայտում էր մի զօրեղ վճռողականութիւն:

Նա առանձին բաւականութեամբ էր վերաբերվում իր կոչման և այն հանգամանքին, որ միշտ վայելել է եպիսկոպոսների համակրութիւնը, համարվել է նրանց մտերիմ խորհրդատուն: Բացի սրանից նա քիչ չէր փրկում այն ծանօթութիւններով որ ունէր թէ պաշտօնական շրջաններում և թէ Էջմիածնում: Այդ բոլորը նա յիշում էր մեծ բաւականութեամբ և պլնդում էր՝ ոչ ոք կարող չէ այդ ասպարիզում նրա հետ մրցել:

Նա զուրկ չէր և թշնամիներ ունենալու պատուից: Զար լեզուներն արտակարգ եղելութիւններ էին վերապրում տէր հօր հասցեին: Ասում էին, որ նրա ձեռքից է կախված հասը չհաս անել կամ հակառակը: Ճշմարիտ է, պատահել է սրան, իբրև կօնսիստօրի անդամի, նոյն իսկ սինօպից եկած «հասերին» կցել մեկ հատ չարաբաստիկ «չ» կամ քերել այդ «չ»-երը... Բայց այդ քայլն այն ժամանակներում սովորական երեսից էր համարվում և ոչ յանցանք:

Նոյն իսկ նրանիք, որոնցից կախված էր միայն վերջ տալ այդ երեսիթներին, նոյն իսկ այդ դլուխները խրախուսում էին և տոն էին տալիս այդ տեսակ ուղղութեան:

Կօնսիստօրի գործերը մեծ մասամբ իրանց ուղղութեամբ պարտական են տէր Մակարին: Մանաւանդ այդ բանի մէջ աւելի եռանդ էր ցըց տալիս նա այժմ; Երբ թեմը թափուր մնալով, գործերն ամբողջովին սրա հսկողութեան տակ են:

Հատ անգամ այդ գործերն իրանց վճիռ ու ընթացքը ստանում էին հենց տէր Մակարի տուանձնասենեակում: Ահա այսօր ևս նրան գործով է սպասում նրա առանձնասենեակում Գէորգի Միխայլեց:

Երբ որ աէրտէրը ներս մտաւ, Գէորգի Միխայլեցն աճապարեց սաքի կանգնել:

— Սրդէն սպասում էք, — դիմեց նրան տէրտէրը պաշտօնական եղանակով:

Գէորգի Միխայլեցը խոնարհ գլուխ իջեցրեց, իսկ իր սուրաթի աչքերին պարզեց մի առանձին լրջութիւն:

— Ես ուղում էի վերջնական կերպով իմանալ, թէ ինչ պէտք է պատասխանել այդ ամուսնութեան վերաբերմամբ... մի առանձին վստահութեամբ հարցրեց նա:

— Կարծում եմ, — բազմելով գրասեղանի առաջ և վերյնելով ծանրահատիկ տէրողորմեան, նկատեց տէր Մակարը, — որ հարկաւոր է այդպէս էլ պատասխանել. այդ դէմ է մեր եկեղեցական կանոններին և սուրբ հայրերի սրբագործած օրէնքներին — ինչպէս կարելի է խնամութեան հինգերորդ աստիճանում պսակել... Այդ դուք ինքներդ շատ լաւ իմանում էք, ձեղ ասելն էլ աւելորդ է:

— Եյ՛, ես էլ ասացի, որ չե կարելի, — խօսեց քարտուղարը, — բայց, տէրտէր, մենք այդ աստիճանում պսակի թոյլտութիւն ունենք տուած: Արդեօք սա հակածառութիւն չե լինիլ մեր նախկին վճիռներին:

— Հա, այդպիսի բան եղել է, Ճիշտ է, միայն ոչ այժմ, այլ առաջ, երբ առաջնորդ ունենք: Դուք այդպէս էլ ասէք, եթէ ուզում են սպասեն նոր առաջնորդին, իսկ մենք...

— Բայց նրանք սպասել չեն կարող, շուտով պասն է գալու...

— Հիմա ինչպէս անենք:

— Նրանք, — կմկմաց քարտուղարը, — փեսան պատրաստ է... ուզում էր մինչև անկամ ձեղ հետ անձամբ տեսնվել...

Տէր Մակարը լարեց իր ուշադրութիւնը և առանձին հետաքրքրութեամբ սկսեց հետևել քարտուղարի տրամաբանած մոքերին:

— Այն ժամանակ... և տէրտէրի երեսից սահեց մի խորհրդաւոր ժպիտ:

— Կարծում եմ, որ կարելի է թոյլ տալ, — շարունակեց քարտուղարը րոպէական լոռութիւնից յետոյ, — մանաւանդ որ պէտք է աչքի առաջ ունենալ և այն հանգամանքը, որ եթէ մենք թոյլ չտանք, նրանք ուզում են զիմել էջմիածին...

— Էջմիածինը թոյլ կտայ, այդ իմացէք, պէտք է այնպէս անել, որ բանն այնքան հեռու չգնայ, — նկատեց տէրտէրը: Ո՞ւմ է առնում, — յանկարծ փոխեց իր խօսքը տէրտէրը մի առանձին կերպով բարձրացնելով ձայնը:

— Փեսան լաւ տեղից է աղջիկ առնում, բաւականի փող ու օժիտ է ձեռք բերում: Կարող է յօգուտ ատենիս լաւ նուրիատութիւն անել... Լաւ չչ արդեօք, որ ուղարկեմ ձեղ մօտ...

— Նատ բարի, այնպէս էլ արեցէք: Պէտք է այնպէս անել որ գործը սուր կերպարանք չընդունի... էլի բան կայ...

— Ղաղարի քահանայացման մասին ես ուզում էի...

Այդ միջոց դռան զանգը ջղային ցնցումնը  
հարեցին:

Ներս մտաւ Առիւծեանը:

Տէրտէրը տեսնելով սրան, վեր կացաւ տեղից  
և սիրալիր ընդունելութիւնով առաջարկեց  
նստել:

— Անժամանակ խօ չեմ եկել — հարցրեց Ա-  
ռիւծեանը, առնելով տէր հօր աջը:

— Ինչեր էք ասում, ամօթ չէ. այդպիսի ծա-  
նօթները ժամանակի յարմարութեան չպիտի  
նայեն: Տէրտէրի տուն է, գոները բաց են ամեն  
ժամանակ...

— Շնորհակալ եմ, շնորհակալ եմ:

— Մինչև անգամ շատ յարմար ժամանակ  
եկաք, ես ուղում էի ձեզ հետ պատահել և  
խնդրել որ այդ եկեղեցու պարիսպը, եթէ կա-  
րելի է, նորոգէիք, շատ հնացել է, մայր եկեղեցին  
և այդ տեսակ պարիսպ, մարդ օտարներից ա-  
մաչում է... Ուրեմն այդպէս էլ կարգադրեցէք,  
— զիմեց տէր Մակարը քարտուղարին, — ես  
վաղը մինչև ժամի 12-ը տանի եմ...

— Շատ բարի... և Գէորգի Միխայլէց զը-  
լուխ տալով դուրս եկաւ սենեակից, բոլորովին  
հասկանալով տէր Մակարի խորհրդաւոր ակ-  
նարկները:

Քարտուղարի գնալուց յետոյ Առիւծեանը  
սկսեց:

— Ես ուղում էի, տէրտէր, իմանալ — սկսեց  
նա, — արդիօք ստացվել է ժամկոչների տան շենք-  
սի թոյլտութիւնը, թէ ոչ:

— Զգիտեմ, ինչու է ուշանում, ես օրէցօր  
սպասում եմ էջմիածնից... Եթէ այս շաբաթ  
չի ստացվել ես կզրեմ մասնաւոր նամակ ծա-  
նօթ եպիսկոպոսներից մինին և կիմանամ...  
Ճշմարիտ, այդպէս էլ եկեղեցու պարիսպը նո-  
րոգէք, վատ չէք անիլ...

— Եթէ հարկաւոր է, ի՞նչու չէ, շատ ուրախ...  
Այս օրերս Ճարտարապետը մօտս է գալու, ես  
կխնդրեմ, որ մի թեթև «պատկեր» կազմի—  
կտեսնենք...

— Այնպէս մարդավարի բան լինէր, երկաթեայ  
վանդակներով, դարպաններով...

— Ի հարկէ, որ շինեցինք, լաւ կշինենք...

— Այս, այս, իսկ երբ կպատրաստէք «պատ-  
կեր ծախուցը», ասացէք, ես ժողով կբանամ...

— Ես էլի մի ուրիշ խնդիր ունիմ, աէրտէր,  
— սրա մասին ես ուղում էի, պիտաւորապէս,  
խօսել, խորհրդակցել...

Առիւծեանը մի բոպէ լոեց, յետոյ աջ ոտք  
գցելով ձախի վրա, սկսեց.

— Քահանայական խնդիր է, — ասաց նա:  
 — Ինչ կայ որ, պատրաստ ենք օգնելու, ինչ  
 որ, ի հարկէ, ձեռներցիս կզայ:  
 — Ես իբրև երեսփոխ, խնդրում եմ ձեզանից  
 մի պատուական անձի համար, որը քանի տարի  
 է ծառայում է մեր եկեղեցուն և որը բոլորու-  
 վին մոռացված է մինչեւ այսօր: Ես խոստացել  
 եմ բարեխօսել նրա համար:  
 — Ո՞վ է, ո՞վ, — հետաքրքրվեց տէր Մակարը:  
 — Ղազարը:  
 — Այո, այո, քարտուղարն ինձ սրա մասին  
 քանիցս անգամ ասել է: Այո, հարկաւոր է,  
 հարկաւոր...  
 — Ինչպէս պէտք է սկսել տէրտէր, ի՞նչ անել...  
 — Հարկաւոր է ստորագրութեան թերթ շըր-  
 ջեցնել, յետոյ այդ թերթն ուղարկել էջմիա-  
 ծին: Մի խօսքով դուք ինքներդ լաւ կիմանաք,  
 առաջինը խօ չե, դուք այդ թերթը կներկայա-  
 ցնէք կօնսիստօր, իսկ այնտեղ ինչ պէտք է  
 անել՝ մեր բանն է...  
 — Թերթը մի շաբաթվայ մէջ կպատրաստվի:  
 Բայց, տէրտէր, եպիսկոպոսի բայցակայութիւնն  
 արգելք իսօ չե լինիր:  
 — Ո՞չ ո՞չ: Երկու տարի է, որ եպիսկոպոս չկայ  
 և ոչ մի լուր էլ նրա նշանակվելու մասին,  
 գործերը խօ չեն սպասիլ...

— Ուրեմն այս օրվանից կարելի է թերթը  
 շրջեցնել:  
 — Ի՞նչու չէ:  
 — Կարծում եմ ուրիշ բան հարկաւոր չէ:  
 Բայց քանի ստորագրութիւն կհարկաւորվի...  
 — Նա կճեռնագրվի տէր Պօղոսի ծխի վրա,—  
 քիչ մտածելով ասաց տէրտէրը, — իսկ հանգու-  
 ցեալն ունէր մօտ 110 տուն: Ուրեմն, եթէ լինի  
 60 ստորագրութիւն բաւական է:  
 — Շատ բարի:  
 Տիրեց լոռութիւն:  
 — Սսում եմ, մի լաւութիւն արած լինիմ, —  
 խղեց խորհրդաւոր լոռութիւնն Առիւծեանը, —  
 թէ չէ...  
 — Ինչ ասել կուղե: Տէրտէր ձեռնագրվելը  
 հեշտ բան չէ, նախապատրաստական ծախսեր  
 են պէտք, որ ամեն մարդ անել չե կարող, — մի  
 խորհրդաւոր ել և էջ անելով իր խրոխտ ձայնի  
 ծաւալի մէջ տէրտէրը շեշտեց վերջին նախադա-  
 սութեան բառերը: — Տեսնում էք, — շարունակեց  
 նա, — Գայլիկեանը ձեղ օրինակ, նրանից երիտա-  
 սարդները, նրա պէսները ձեռնագրվեցին, իսկ  
 սա մինչեւ այժմ մնացել է: Լաւ կլինէր, սրա  
 համար էլ մի կնքահայր գտնէիք, որ խեղձին  
 ձեռնագրեն...

— Արա համար էլ պիտի մի բան մտածել.  
առ այժմ այդ մէկն աջողեցնենք... Ուրեմն,  
կինդրեմ, տէրտէր, որքան կարելի է ձեր կողմից  
աշխատելու նեղութիւն անէիք...

— Շատ ուրախ, շատ ուրախ: Դուք ձեր  
պատրաստութիւնները տեսէք, մեր կողմից ար-  
գելք չել լինիր:

— Այժմ կինդրէի, որ խնդրագիրն էլ դրէիք,  
որովհետեւ ձեի հետ մենք...

— Այո, պիտի զրաբար լինի: Լաւ, ես կաշ-  
խատեմ, կշարազրեմ և կտամ Ղաղարին, իսկ  
նա ինքը կկարգադրի:

— Շատ և շատ պարտաւորեցրիք:

— Ինչ անենք. այդպէս բարեկամների համար...

— Շատ և շատ շնորհակալ եմ: Աստուած  
արժանացնի, հարսանիքին մի լաւ քէփ կանենք:

— Ճիշտ, ում է առնում որ...

— Այդ կողմից էլ լաւութիւն եմ անում,  
տէրտէր,—Վարդուհուն եմ տալիս:

Տէր Մակարի աչքերի կոպերը լայնացան և  
մի զարմացական հայեացք արտայայտվեց նրա  
աչքերի մէջ:

— Այո, տէրտէր, ինչ արած, որբ աղջիկ է,  
տէր ու տիրական չունի, պէտք է մի լաւու-  
թիւն անել:

— Ի հարկէ, ի հարկէ... Զտեսնված ու չլըս-  
ված լաւութիւն էք անում: շատ ուրախալի է,  
պէտք է ամեն կերպ աշխատել ի՞նչու առաջ  
ձէիք ասում—ես էլ ուշքի չեմ գալիս, որ հարց-  
նեմ... Ե՞րբ էք վճռել:

— Ճիշտ ասած, զործը դեռ չի վճռված, ես  
ուզում էի առաջ ձեզ հետ տեսնվել և ապա  
թէ վերջնական պատասխան տալ:

— Վճռեցէք, վճռեցէք. յետ մի զցէք...

Գալով տուն Առիւծեանը ուրախ - ուրախ  
մտաւ օրիորդի սկնեալը:

Վարդուհին նստած էր սեղանի առաջ և  
զիրք էր թերթում: Տեսնելով Առիւծեանին, նա  
զիրքը շտապ ծածկեց և վեր կացաւ տեղից ու  
անցաւ բոլորովին հակառակ կողմը:

— Նստիր, մի քանի կարեւոր խօսք ունիմ  
քեզ հաղորդելու: Ուրախ համբաւ եմ բերել  
մի փախչիր...

Վարդուհին մեկենայաբար նայեց Առիւծեանի  
կողմը և անգիտակցաբար կանգնեց:

— Մօտ եկ, նստիր: Այն լուրը, որ ուզում  
եմ քեզ հաղորդել, գուցէ հաշտեցնի մեզ: Բա-  
ւական է, ինչ որ կիտեցիր յօնքերդ...

— Ի՞նչ ունիք ասելու, ասացէք...  
 — Ես տեսնում էի քո վիշտը, հասկանում  
 էի և այժմ ուզում եմ վերջ տալ քո տխուր  
 օրերին, կամենում եմ քեզ բախտաւորեցնել:  
 Եւ այժմ եկել եմ յայտնելու քեզ այն վճիռը,  
 որ երեկվանից արդէն կայացրած է քո ապա-  
 գայի վերաբերմամբ... .

— Ոչինչ չեմ հասկանում, խնդրում եմ թո-  
 ղէք ինձ:

— Դու թերահաւատութեամբ ես վերաբեր-  
 վում իմ ասածներին,—բայց իմացիր, հոգիս,  
 որքան ևս ծանր լինի այն բաժանումը, որ մօտ  
 ապագայում պիտի տեղի ունենայ մեր մէջ,  
 այնու ամենայնիւ սա մի անհրաժեշտ պահանջ  
 է քեզ համար, իսկ ինձ համար մի պարտակա-  
 նութիւն, որ պէտք է դրա վրա մտածէի: Այժմ  
 ես կամենում եմ քեզ յայտնել, որ քո ամու-  
 սինը լինելու է այն անձնաւորութիւնը, որին  
 դու տեսել ես և ծանաչում ես, նա հօրորդի  
 տղայ է, լաւ ազգականների տէր, դա — ի՞նչ  
 գլուխդ ցաւացնեմ — Ղաղարն է... .

Օրիորդն ոչինչ չկարողացաւ ասել, որովհետեւ  
 այդ նորութիւնը նրա համար այնքան անսպա-  
 սնել էր, որ նա գեռ չէր կարողանում հաշիւ տալ  
 իր լսածին: Նա Ղաղարի դէմ ոչ ատելութիւ-

նով էր վառված և ոչ էլ մի առանձին համա-  
 կրութիւն էր զգում դէպի այդ երիտասարդը:  
 Մինչև այսօր նա քանիցս անգամ այցելել է  
 նրանց տունը, բայց Վարդուհին նրա ներկայու-  
 թիւնը գրեթէ չի էլ նկատել: Ուստի ինչպէս  
 կարող էր այդպէս յանկարծ նա պատասխան  
 տալ:

Վարդուհու լոռութիւնը համաձայնութեան  
 տեղ ընդունելով, Առիւծեանը շարունակեց.

— Նա այժմ թէկ մի որոշ պաշտօնի տէր  
 չէ, բայց ես խոստանում եմ նրան քահանայ  
 ձեռնադրել տալ: Դու կլինես բախտաւոր և  
 շատերի նախանձի առարկայ... Քեզ վիճակված  
 է տէրտէրակին լինել: Բախտաւոր եղիր, սիրե-  
 լիս,—ի հարկէ դու այժմ կարող ես մտածել,  
 ինչ վաղը պատասխան կտաս:

Եւ Առիւծեանը դուրս եկաւ օրիորդի սե-  
 նեակից:

շատ է լսել թէ ինչպէս ոս իրանց նեղութիւնը և չքաւորութիւնը վերագրում էր ճակատագրի բաժնին: Այդ ուղղութիւնն իր կեանքի նշանաբան ընդունելով նա չէր կարողանում դուրս գալ այն մաքից, թէ փորձանքը, որ եկել է նրա զլիսին, այդպէս էլ պիտի լինէր, դա նրա ճակատագիրն էր...

Բայց որքան էլ ամեն բան վերագրելիս լինէր իր ճակատագրին, Վարդուհին չէր կարողանում հաշտվել այն մաքի հետ, թէ այդքան բանից յետոյ ինչպէս կարելի է մնալ այդ տան մէջ, այն տան մէջ, ուր սենեակի իւրաքանչիւր զարդը, կարգը, ամեն մի անկիւնը նրա երեակայութեան մէջ զարթեցնում էր այն յիշողութիւնները, թէ ինչպէս այստեղ զոհել է իր զգուանքները, հրապոյրները և այդ բոլորից յետոյ արիւնը նրա զլուխն էր տալիս և նա ընկնում էր վերջին ծայր յուսահատութեան մէջ: Բայց ինչպէս կարելի էր գուրս գալ այդ զրութիւնից:

Ահա մի հարց, որ նրան խոր մտատանջութիւնների տեղեկ տալով, մի և նոյն ժամանակ յուսահատեցնում էր նրան:

Այժմ նա աւելի, քան իր և իցէ, կարօտում է մէկի խորհրդին: Բայց ո՞վ է մարդուն օգնութեան հասնում թշուառ ըոպէներում: Այդպիսի

ԺԲ.



սում են՝ որ մինչև փորձանքը չգայ, մարդս չի խրատվում: Այդպէս եղաւ, կարծէս, և Վարդուհու հետ: Նա դարձաւ աւելի շրջանկատ և սկսեց ամեն մի բանին վերաբերվել զգուշութեամբ...  
Անփորձութիւնից առաջ եկած անբախտութիւնը նրան կարծես հասունացրեց: Առաջվան երեխայամիտ Վարդուհին այդ ծանր վշտերի ազգեցութիւնից աւելի խրատվել և աւելի քննական դատողութիւնների տէր էր դարձել թէւ այդ դատողութիւնները զեռ ևս կրում էին իրանց վրա խիստ անվճողականութեան և տատանման կնիք:

Բայցի սրանից մանկութիւնից Վարդուհու մէջ մարմնացել էին մի սովորութիւն՝ թէ ամեն մի չարն ու բարին պիտի վերագրել ճակատագրին և ամեն մարդ իր բախտով և անբախտութիւնով պարտական է իր նախապէս գծագրված վիճակին: Նա իր հանդուցեալ մօրից

ժամանակ եղած ծանօթներն էլ մարդու թողնում են: Այդպէս եղաւ և վարդուհու հետ: Նա մնացել էր մէն-մէնակ: Նոյն իսկ տ. Սրբուհին, համգամանքներից ստիպված, թողեց և հեռացաւ նրանից:

Այդպէս թէ այնպէս վարդուհին ստիպված է իր խելքի կտրածն անել:

Նա սաստիկ զժուարանում է այդ բանի առաջ, թէ ինչպէս վերաբերվել Ղազարի առաջարկութեան:

Ահա այժմ այդ նորութիւնն է, որ նրա ուղեղի մէջ մի անտանելի զրդում ու յուղմունք է առաջ բերել: Նա իր սենեակում նստած երկար ժամանակ մտածում է այդ բանի վրա՝ թէ ինչ պէտք է անել այժմ...

Նրա երեսը նորից ծածկվեց մի խորհրդաւոր դառնութեամբ, գեղեցիկ շրմունքներն ընդունեցին մի անորոշ զծագրութիւն: Ղազարին նա չի սիրում, այդքանն արդէն պարզ է, և սիրել ևս չի կարող: Թէ և նա շատ է լսել մեծերից, թէ այդպիսի ժամանակ սէրը գալիս է թագն ու պսակից յետ, բայց ինչպէս հաւատալ այդ բանին, երբ այժմ նոյն իսկ թեթև նշայլ համակրութեան վարդուհին չի զգում իր մէջ չնայելով որ քանի անգամ այդ մարդուն տե-

սել է իրանց տանը: Իսկ եթէ մերժել այն ժամանակ պիտի կրկին մնալ այդ տանը, կրկին պատահէ ել այդ մարդու հետ, մարդու, որին աւել է ատում և որից մինչև անգամ զզվում է...

Եւ ով է նրա հետ այդ աստիճան ստոր վարվել ինչպէս այդ մարդը: Այդ վերջին միտքը նրան սարսափեցնում էր աւելի, քան թէ այն, երբ նա ուշադրութիւնը կենտրոնացնում էր Ղազարի վրա:

Կրկին ձակատագրին վերագրելով Ղազարի առաջարկութիւնը, Վարդուհին սկսեց վերաբերվել սրան աւելի քիչ ցնցումներով ու աւելի սակաւ երկիւղով:

Այդ ժամանակ նրա մտքով անցաւ ուրիշ բան, որ կրկին մթնացրեց նրա ձակատը:

Որդեօք կարող է նա վՃռվել ընդունելու Ղազարի առաջարկութիւնը... Զէ՞ որ նա այժմ սրանով կարող է կրկին աւելի մեծ անբաւականութիւնների, աւելի խիստ զրամայի տեղեք տալ...

Մի քանի բոպէ առաջ ուզում էր ընդունել Ղազարի առաջարկութիւնը հակառակ իր ըզդացմունքներին, բայց երբ նրա միտքն ընկաւ եր խարված լինելը, նրա համար աւելի խորհրդաւոր էր դառնում այն միտքը, թէ ինչպէս կարող է նա անել մի այդպիսի քայլ...

Այդ նրան աւելի վշտացրեց, այդ վերջին միակ յօյսն աւելի անիրազործելի դարձաւ նրա համար: Այդ զրութիւնն այնպիսի երկիւղ բերեց նրա վրա, որ Վարդուհու մարմնով անցաւ մի անյօտսալի սալսուռ...:

Բայց երբ որ նա զլիսաւոր վտանգը տեսնում էր այդ տանը մնալու մէջ, այն ժամանակ եր խարված լինելուն նա սկսեց վերաբերվել աւելի քիչ երկիւղով, աւելի հանգիստ սրտով: Բայց ի՞նչ էր մնում նրան անելու ներկայ հանգամանքներում, ի՞նչի վճռվել ո՞ր կողմը թեքվել...

Մինչ նա այդ հարցերով էր զբաղված, նրա հայեցքը դարձեալ ընկատ սենեակի պատերին, այն սեղանին, որի առաջ նա իրան մի ժամանակ զգում էր այնքան բախտաւոր, երբ խաղաթղթերը ձեռքին էր պահած... Եւ մի ակամյ դառն ծիծաղ դուրս պղծաւ նրա փշրված կրծքից և նա անդիտակցաբար նստեց:

Մօտ կէս ժամ այդպէս նստած մնաց, չկարողանալով կենտրոնացնել իր մտքերը, գժուարանալով մի որ և է վճռական որոշում անել երկու չարիքից աւելի փոքրագոյնն ընդունել:

Նրան թվում էր, որ նա որքան աւելի խորն է թափանցում իր մտքերի մէջ, որքան աւելի է կենտրոնացնում իր ուշագրութիւնը սրտի

ձայնին, այնքան աւելի է դժուարանում վճռել թէ ի՞նչ անել ո՞ր կողմը թեքվել:

Նա դարձեալ յիշեց իր հանգուցեալ մօր ասածները, թէ ձակատազրից մարդ փախչել չի կարող:

Ոյն օրից, երբ նրա զլիսին այդքան փորձանք եկաւ, այն օրից մինչեւ օրս երեք նրա առաջ մօր խօսքերը այնպիսի սուր կերպով չեին մըղվում նրա զլիսում, ինչպէս այդ լինում էր ներկայումս:

Նրա աչքերին արտասուք եկաւ, բայց այդ արտասուքը չթեթևացրեց Վարդուհու վիշտը, չպակասեցրեց նրա գառնութիւնները...

Յանկարծ նրա մտքով անցաւ մի վայրենի յուսահատական միտք... Մինչեւ այժմ այն խնդիրը, որ այդպէս անորոշ էր նրան թվում, ահա այդ խնդրի վերաբերմամբ նրա զլիսով անցած բոպէական վճիռը իրականութեան անցաւ, որ և Վարդուհին շտապեց այդ եղբակացութեան գալ անյապաղ և անդրտվելի...

Նա վճռեց ընդունել Ղաղարի առաջարկութիւնը...

Ճնշող տպաւորութիւն էին զործում, այստեղ  
զինու գաղերի և պատերի բորբոմների խոնա-  
ւութեան բուրմունքները միախառնվելով մէկ-  
մէկու հետ, ընդունակ էին անսովոր մարդուն  
միանգամից թմրեցնել:

Ոչ մի նկուղ քաղաքում չէր փայելում այն  
համակրութիւնը քաղաքացիների կողմից, ինչ  
որ վերև յիշածը: Արա պատճառը նրա տէր՝  
Ղարաբաղի ներկայացուցիչ՝ Թալաշն էր, որ  
գրաւել զիտէր ոչ միայն իր պատուական զի-  
նով, այլ և այն առաւելութիւնով, որ նա ունէր  
իր բնաւորութեան մէջ: Նա հիւրասէր, շատա-  
խօս էր, զիտէր լաւ թամադայութիւն անել,  
երգել, իւրաքանչիւր թասի վրա նա կարողանում  
էր ճռճռան ճառեր ասել զիտէր քաղաքացի-  
ների բնաւորութիւնը, նրանց հետաքրքրող չարն  
ու բարին: Թալաշի մասնագիտութիւնը չէր  
սահմանափակվում միայն գինեվաճառութեամբ,  
նա աղատ ժամերին պարապում էր և գրակա-  
նութեամբ և մինչեւ անգամ ոտանաւորներ գրե-  
լով: Սյդ ընդունակութիւնների հետ ոչ մի կապ  
չունէին ոչ ժառանգական օրէնքները և ոչ  
Ղարաբաղի սարերի և օղի բարերար աղղեցու-  
թիւնը, բայց և այնպէս այդ մորդու ընդունա-  
կութիւններն աչքի էին ընկնում:

Կոտրված սիրտ:

**Պ**աղաքի յետ ընկած խուլ անկիւն-  
ներից մինում, որտեղ, զլիսաւո-  
րապէս, ընակութիւն էին հա-  
տատել աղքատ դասակարգը և  
արհեստաւորները, դանվում էր մի ստորերկրեայ  
նկուղ, որտեղ մինչեւ խոր զիշերները կարելի է  
գտնել մի քանի այցելողներ, որոնք գինու շնչ  
առաջ սպանում էին իրանց առանց այն ևս  
սպանված ժամանակը:

Քաղաքում այդպիսի նկուղներ շատ կան: Սյդ  
նկուղներում, զլիսաւորապէս, ծախվում է զինի:

Ոչ մի տեղ մարդկանց առանձնայատկութիւն-  
ներն այնպէս չէ բնաւորոշվում, ինչպէս այդ տե-  
սակ նկուղներում: Սյստեղ, սովորաբար, ժողով-  
վում են զինի խմելու և այստեղ գինու շնչ  
առաջ զանաղան խորհրդածութիւններ անելու-  
շատ անգամ այդ նկուղներում զանաղան հա-  
սարակական խնդիրներ է շօշափվում:

Անսովոր մարդու վրա այդ նկուղները մի

Միթէ պէտք է զարմանալ այդ բանի վրա,  
—չէ որ յայտնի Լամբրօվօն ապացուցանում է,  
որ լինում են հասարակ անկիրթ մահկանացու-  
ներ, բայց և որոնք արտայայտում են երրեմն  
անսպասելի սրախօսութիւն, կենդանութիւն,  
խոր մտածողականութիւն և նոյն իսկ ընդու-  
նակութիւն...

Յրել մայր մանելուն պէս գէպի Թալաշի գի-  
նետունը ուղեղորվում էր յաձախորդների թունդ  
հոսանք, որ գնալով մեծ ժաւալ էր ստանում  
գիշերվայ ժամանակ: Այդ բացատրվում էր նրա-  
նով, որ օրվայ այդ ժամանակ տեղի էր ունե-  
նում արհեստառոների բանթողը—և ահա այդ  
ժամանակ այդ մարդկանց հոսանքը զիմում էր  
այստեղ մի քանի հանդիսա ժամեր փայելու:

Թալաշի նկուղը հպարտանում էր նման նրա-  
նով, որ նրա այցելողների մեջ լինում էին  
ինքնակոչ ինտելեգետներ՝ արլականեր, երդիչ  
ներ և զանազան թափառաշրջեկ ու անբան  
աստիճանաւորներ...

Մի երեկոյ Թալաշի նկուղում մի շեշ զինու-  
առաջ նստած էր երկու մարդ, որոնք խոհական  
մտածմնակով մի ինչ որ բանի վրա խօսում  
էին: Սրանից մինը իր գլուխը փայտփորիկի  
նման անզարար ետ ու առաջ էր տանում և

մի ինչ որ բան էր պատմում, իսկ միւսն իր  
ակնոյների տակից ըսելով աչքերը մեծ ուշա-  
դրութիւնով լսում էր իր բաժակակցին:

Հարկածոր է միթէ ասել, որ սրանք Ղազարն  
ու քարտուղար Գէորգի Միխայլիչն էին:

— Միայն մէկը չտորագրեց, — հանդարս շշն-  
ջաց Ղազարը, ծամելով տապակած ձկան կը-  
տորը և բաղեկի նման վեր ածելով բերանից  
ձկան կոշտ մասերը՝ փշերը, — միայն մէկը, —  
կրկնեց նա, — ուղեղն ասած՝ ես նրա մօտ չէի  
էլ ուղում գնալ, միայն, ինչպէս կասեն, քթի  
տակից անցնելու համար գնացի, այն էլ զլիսա-  
ւորապէս, Առիւծեանն ուղարկեց, չգիտեմ, այդ  
մարդու կինը Վարդուհու հետ գնալ-գալ ունի  
ինչ է:

— Ո՞վ է:

— Մի ոմն Մտիկեան:

— Ճանաչում եմ, ինչ մարդու մօտ ես տա-  
րել, լաւ չես արել, ես այնտեղ ըսկի ոտ կինէի  
որ, — մըթմըթաց Գէորգի Միխայլիչը, և ձեռքը  
տանելով իր աջ ականջի ետեր աւելի կենտրո-  
նացրեց իր ուշագրութիւնը:

— Դուք էլ մի և նոյնն էք ասում, ինչ որ  
իմ հօրելքայրը զգում եմ, որ սխալված եմ,—  
բայց ինչ նշանակութիւն ունի մէկի չստորա-  
զրելը:

— ի հարկէ, ի հարկէ, ևս այնպէս ասացի,  
որ նա մարդ չէ—այդ Մտիկեանին լաւ եմ ձա-  
նաշում, արև լինի, մարդու վրա չի ընկնիլ:  
— Բայց տես թէ ով է ստորագրել ինքը  
Զիրիշեանը:  
— Միթէ, շատ ուրախալի է, ասա դէ որսի  
աչքին խփել ես էլի...  
— Հապի: Ասենք սրա մօտ հօրեղայրս տա-  
րաւ:  
— Լաւ, լաւ, եղայր, ինչ ասեմ—ածա, մի  
մի բաժակ էլ խմենք:  
Նրանք դատարկեցին բաժակները:  
— Ահա տեսէք, — կուլ տալով վերջին ում-  
պերը ու մի քառածալ թերթ հանելով ծոյից,  
ասաց Ղազարը:  
— Այո, այո, — զլուխը թափ տալով անտղեց  
քարտուղարը, — բանդ լաւ աջող գնում է՝ ար-  
դէն 20 ստորագրութիւն կայ...  
Եւ նա սկսեց իր բոյթ մատի ծայրով համա-  
րել թերթի վրա խղզած ստորագրութիւնները:  
— Էլի չստորագրողներ եղան:;  
— Բացի զրանից ոչ մէկը:  
Նրանք նորից խմեցին. Ղազարը մի առանձին  
ախորժակով ծծեց հեղուկը:  
— Պէտք է ասած պատուական զինի է, —

դովեց խմելիքի յատկութիւնը նա: Թալաշ, —  
կանչեց զինետիրոջը Ղազարը, — ե՞կ այստեղ ուր  
ես կուչ եկել  
Թալաշը հեռւում նստած էր խորասուզված  
մի ինչ որ մոքերի մէջ. նա աջ ոտը դրել էր  
ձախի վրա և ձեռքերն էլ կենտրոնացրել էր փորի  
առաջ, կանխապէս նրանց ծափի բնի ձև տալով:  
Այզպիսի զիրք նա ընդունում է այն ժամանակ,  
երբ պատրաստվում է բարձրանալ. Պառնաս և  
Կաստալեան աղբիւրից ոյժ և զգացմնանք վեր-  
ցնել իր պօէզիայի համար: Այժմ երբ նա լսեց  
Ղազարի ձայնը, այնպէս վայր թռաւ, կարծես  
մի հարուած գլխին իջեցրած լինեն:;  
— Ի՞նչ կասէք, — մօտեցաւ նա, — զինին չէք  
հաւանում, — հարցրեց նա:  
Նրա արտասանութեան մէջ լսվում էր մի  
օտարոսի և անորոշ եղանակ: Նա աշխատում  
էր խօսել զրականական լեզուով. բայց Ղարա-  
բաղի հնչմանքը և ժողովրդական մի քանի  
ձևերը նրա ոճին ու լեզուին մի տեսակ առանձ-  
նայատկութիւն էին պարզեել: Դա բացատրվում  
էր նրա աստանղական կեանք վարելուց: Ամեն  
տեղի, ամեն ոճի գծեր ու հնչմունքներ կարելի  
է նկատել Թալաշի խօսակցութեան մէջ:  
— Եթէ վատն է, — կրկնեց նա, — ուրիշը բերեմ:

— Ոչ, ոչ, այդ չէ, — գովեց զինու յատկութիւնն իր բերանի արտայայտութեամբ Ղաղարը, — ևս միայն ուզում էի իմանալ ինչու ևս այնպէս հեռուում հանգարտ նատել — ոտանաւոր ևս գրում ի՞նչ է...

— Զէ, չէ, — ամաչեց թալաշը իր կրութիւնից, — այնպէս աչքս մի քիչ քուն էր գնացել:

— Աա ո՞րտեղի գինի է, — Հալցըց Լազարը, —  
Ղյարի է... օ օ

— Բա՞... զարմացաւ Թալաշը, — Ղղլարը  
ըսկի իր էրաղում այդպիսի գինի տեսել ավեօր,  
սա վեօր կեայ Մաղրասի կասեն սրան, իսկական,  
անարատ, «Հայ արջկայ մատներով քամած  
գինի է»... — Համեմեց Թալաշն իր խօսակցու-  
թիւնն բանաստեղծի խօսքերով, — այդ գինուց  
— շարունակեց նա, — 50 տակառ այս ամառո  
Պետերուրդ եմ տարել և մի շաբաթվայ մէջ

— Տիմա դու կասես հա, — հանաք արաւ

Քարտուղարը:  
— Խոյեցի է ախր \*), — նոյնապէս հանաքով  
նկատեց Ղազարը, — այդ խոյեցիների խօսքին

\*) Ա. քաղաքում գտնվում են շատ եկուր հայեր: Տեղական հայերը մի տեսակ բարձրից են նայում իրանց

Հաւատ չկայ, — շարունակեց նա, — ովկ զիտէ որ-  
աեղի զինի է, ասում է Մադրասի է:

— Զէ, քու արել, — պաշտպանողանական  
զիրք բռնեց թալաշը, — զուտ ճշմարտութիւն է...

— Հաւ, լսւ, որ այդպէս է այդ թղթում մի ձեռք քաշեր, — խօսեց Գէորգի Միխայլիչը:

— Աա ի՞նչ բան է, — թուղթը մօտ քաշելով  
տնտղեց ստորագրութիւնները թալաշը:

— Այդ մարդը քահանայ է ձեռնաղբալում,—  
շարունակեց պաշտպանել իր միսիան քարտու-  
ղարը.—Եթէ դու էլ այդ բանին համաձայն ես,  
ստորագրիր...»

— Հարկաւեօր ա, — եղանակեց Թալաշը իր  
պնչերի ծալքերին մի առանձին կենդանութիւն  
տայսվ, — Եթէ հարկաւեօր ա, բա՛ցուստապ. . .

Թալաշը վերցլեց թերթը, տարաւ, ստորագրեց  
և բերեց դրեց Հաղարի առաջ:

— Ու այդպէս է մի բաժակ գինի, — առա-

Եկուր Եղբայրների վրա և, չգիտենք ինչու, մկրտում են սրանց՝ «խոյեցի» և «անձրեսկ Եկածներ» անմիտ ածականներով։ Ի պատիւ Եկուրների պիտի խոստովանել, որ սրանք միշտ ներողամտաբար են զերաբերվել դէպի տեղացիների անտեղի խորթութիւնները և աշխատել են յարաբերութիւնների մէջ սուր գծեր չմտցնել։

ջարկեց Ղաղարը, — այդ խմիր, գնա՞ մի շեշ էլ  
բեր. . .

Թալաշը վերցրեց բաժակը:

— Ցանկանում եմ, — ասաց նա, — որ արժա-  
ւոր հովիւ դառնաս: Բարով մեր պէս մեղա-  
ւորներին ցոյց տաս այն ուղիղ ճանապարհը,  
ինչ որ ցոյց են տուել մեր ոսկեղար անցեալում  
Մեսրոպ Մականունեալ, սուբն Սահակ,  
Ղեռնդ երեց... Ինչպէս սրանք իրանց հօտի հա-  
մար թափեցին իրանց արիւնը, այնպէս էլ դու-  
դառնաս մեղ համար արժանաւոր հովիւ, Ճըշ-  
մարիս քրիստոնէական հայ լուսաւորչական  
կրօնի պաշտպան. ամէն:

Թալաշն այնպէս ոգեորվեց, որ իր ճառի  
վերջում հարկ համարեց երգել.

Կոռոնկ, ուս-տի կու-զաս ծա-ռայ եմ ծալ-նի-իդ...  
Կոռոնկ, մեր աշ-խար-հէն խաբ-րիկ մի չունիս...

— Շնորհակալ եմ, — կանգնեց ոտի Ղաղարը,  
— Շնորհակալ եմ, խնդրեմ, զնա՞ մի շեշ էլ բեր...  
Թալաշն աճապարեց բոլոր պատուերները  
ճշիւ կատարել:

— Ամենա մէ էդ գինու համն էլ տեսէք. . .

— Չասացի, որ խոյեցի է, տես ինչ օյիններ  
է հանում:

— Խոնդրեմ ասէք, — սկսեց Թալաշը, — ի՞նչ է  
նշանակում, որ մեզ եկորներիս խոյեցի էք ա-  
սում. . .

— Ո՞վ զիտէ, այդպէս լսել ենք մեր պապե-  
րից, ասում ենք էլի՛. . .

— Նեղացած ինչ է, — բարձրացրեց գլուխը  
քարտուղարը, քսու ժպիտն երեսին:

— Զէ, Աստուած մի արասցէ, ամեն յիմար  
բանի վրա նեղանալ չի կարելի — ամա այնպէս  
Հետաքրքրվում եմ: Տասը տարի է որ այստեղ  
եմ, բայց մինչև օրս չիմացայ, թէ ինչու եմ  
խոյեցի. . .

— Մե՞ր քաղաքացի ես, — հետաքրքրվեց քար-  
տուղարը:

— Զէ:

— Ուրեմն խոյեցի ես:

— Բա վեօր Խոյն իսկի իմ պապն էլ չի տե-  
սել այդ հնց եղաւ, որ խոյեցի դարձայ. . .

— Թողէք, — աշխատեց վերջ դնել Ղաղարը,  
— Հանաքով ասացի էլի, բան չունիք, որ այդ-  
պիսի զատարկաբանութիւններով էք պարա-  
պում ես ոսկի ժամանակը զուր տեղը վատնում:  
Ածէք, խմէք. . .

Այդ միջոց ներս մտաւ մի նոր յաճախորդ:  
Ներս մտնողը մի բարձրահասակ, մեծ քթով,

ջլոտ և խոշոր զիմազերով մարդ էր: Սրան մեծաբում էին «Ցեց» մականունով: Սա մի անորոշ պատօնների տէր մարդ էր, բայց և այնպէս եթէ մէկին հարկաւոր լինէր «պրօշենիա» գրել տալ, խորհուրդների զիմել այդպիսի դէպքերում «Ցեցն» անփոխարինելի էր: Սրա գալը նոր հոսանք և աշխայժ մայրեց խմբակի մէջ: — Հա, լաւ ժամանակի եկար, նստիր, — հրաւիրեց Ղաղարը:

— Մի թաս գինի ածա... Հալա բարի սահաթի, հեռու ևս ման գալիս, փէշդ քաշել ես... Մի բան եղաւ, զլուխներդ ձզած «Ցեցի» մօտ էք վազում, բայց հարկաւոր ժամանակ եօթ վերստ հեռու էք վազում:

— Մեղայ Աստուծոյ, ով է փախչում, չի պատահել որ ասեմ, երէկ առաւօտ եկայ մօտդ, տանը չէիր... .

— Առաւօտները մինչեւ 10-ը ժամը ինձ միշտ կարելի է աեսնել Զառի պանդոկում, 10-ից մինչեւ 12-ը կոկորի գնետնում, պալատի առաջ, 12-ին Խաչեկի մօտ խորոված ենք ուտում, յետոյ մինչեւ 2-ը այստեղ-այնտեղ, իսկ այդ ժամանակ միշտ մեր Թալաշի մօտ եմ, — այդ իմացիր, հարկաւոր եղած ժամանակ: Դէ, հիմա գինի ածա... .

Ղաղարը լցրեց չորս բաժակ: Նրանք վերցրին: — Անփոշմանելի լինի, — վերցնելով բաժակը բարեմազմթութիւններ արաւ «Ցեցը», — տե՛ս, լաւ քահանայ եղիր: Մարդ ենք, եթէ բան-ման պատահեց, մօտս արի: Նարական երգել իմանում ես... Ասենք, ումից էլ սովորես: Ողորմի տէր Սարգսին, նրա պէս շարական երգող այժմ չունենք... Հա, մէկ էլ լաւ շարական էր երգում հանգուցեալ տէր Գրիգորը: Սրանք երկու հօգի, մէկը մի գասից, միւսը՝ միւս գասից, որ չէին կլկայնում, որտեղ քո Տարատիօվը, — կոպէկ չեմ տալ: Հիմիկվան քահանաները մարդիկ են, աւետարան կարգալ զրուստ չեն կարողանում... Հիմիկվան քահանաները ճռտով փլաւ լաւ կուտեն — այդ նրանց խելքի բան է, մէկ էլ աղջ... Ե՛հ, թողնենք — գինի ածա... Եթէ հարկաւոր եղաւ, ե՛կ, ես քեզ այնպէս շարական երգել սովորացնեմ, որ քէֆդ դայ... .

«Ցեցը» սկսեց հանդարտ եղանակել:

«Այսօր կանգնեցար»...

Ամենքը մեծ ուշադրութեամբ լսում էին: — Ի՞նչպիսի գինի է, — հարցրեց Թալաշն, երբ որ «Ցեցը» շարականն երգեց, վերջացրեց: — Լաւ է, այդ երեկի նոր տակառ ես բաց արել...

— Ասում եմ, չեն հաւատում:

— Սրանք զինու բան են հասկանում: սրանք որ կան, եախնի ուտող մարդիկ են: Ածա՛, բանդ իմացիր. . .

— Թալաշ, գնա՛, զրիչ-թանաքաման բեր՝ — պատուիրեց Գէորգի Միխայլիչը:

Թալաշը շտապով բերեց և զրեց «Ցեցի» առաջ:

— Ստորագրի՛ր, — նկատեց Քարտուղարը:

— Բերեք, բերեք:

«Ցեցի» վերջրեց զրիչը և ստորագրեց խնդրագրում: Յետոյ աչքը դցեց առղերին ու սկսեց կարգալ:

— Ո՞վ է կազմել — հարցրեց նա:

— Ես, — պարծեցաւ Ղաղարը:

— Զե՞ս, սա քո բանը չէ: Բան ունիս, բան ասա՛, զու մեռել լաւ կթաղես, այդպիսի թուղթ շարագրելը քո բանը չէ:

— Տէր Մակարն է շարագրել բայց արտադրածն իմն է, — շեշտեց Ղաղարը վերջին նախադասութիւնը, կամենալով սրանով «իր արած բանի» նշանակութիւնն էլ վայր չձգել:

— Հա՛, այդ ուրիշ բան է: Բայց այստեղ սխալվել ես... «զարժանս համարեցաք»... «ո» ն բայց ես թողել . . .

Նա վերցրեց զրիչն և ուղղեց:

— Դէ ածա՛, պարապ նստելով բան չի գուրս գալ, — տալով թերթն ասաց «Ցեցի»:

— Խնդրեմ, որքան կկամենաս, ես արդէն բաւականացայ, սա վեցերորդ շին է, որ դատարկում ենք:

— Մեծ բան, — ես երեկ զիշերվանից է, որ խմում եմ: Այսօր առաւօտը, 10 ժամին, երեք հոգի չորս շիշ Միիրնօվ ենք շուռ տուել Ճաշից յետոյ պիվո ենք խմել այս էլ հիմա զինի ենք խմում, — տես բան նկատվում է. . .

— Կեցցե՞ս, — նկատեց Թալաշը: Բա որ գու չխմես, նա չխմէ, մենք մեր ծախսերը որտըզան կհանմենք վեօր... Խանութի, տղայի, թղթի փող ենք տալիս, պիտի խմէք, որ մենք էլ տեղներում դիմանանք. . .

— Այո՛, այո՛, լաւ ասաց Թալաշը, շատ լաւ ասաց — այս շարաթ մի անգամ էլ մօտդ կգանք, այդ զինուղ համը մին էլ կտեսնենք. . .

Նրա վեր կենալուն հետեւ եց և Գէորգի Միխայլիչը:

— Ինչ զարմանք, —ասաց պ. Մտիկեանը, —  
երբ մինչև այսօր մեզանում չեն աշխատել պէտ-  
քերի ու կարիքների արտայայտողներ հանդի-  
սանալ:

— Ինչ էլ լինի, մի՞թէ կարելի է աջ ու ձախ  
ստորագրել մի թերուտի խնդրագրում:

— Այո՛, մենք միշտ սովոր ենք մեղաղրել մեր  
հասարակութեան, բայց մի օրից մի օր հետա-  
քրքրվել ենք արդեօք իմանալ թէ ի՞նչ մէջ է  
կայանում մեր հասարակութեան քաղաքակրթ-  
ված յետամնացութիւնը, աշխատել ենք իմա-  
նալ, թէ ով է այդ բանում մեղաւոր: Ասա՛,  
թէ ի՞նչ է արվել մինչև այսօր հասարակութեան  
մոռաւոր մակերեսյթը բարձրացնելու համար, ով  
է նրան ուղղութիւն տուել, ով է նրան սովո-  
րեցրել ամեն բանին քննական հայեացքով վե-  
րաբերվել: Եղել է դէպք նրա գարեւոր իրա-  
ւունքները պաշտպանելու... Ընդհակառակը,  
մեզանում, գոնէ մինչև այսօր, մոքի ազատու-  
թիւն, ընտրողական սկզբունք և այլ սրտ նման  
պէսպէս իրաւունքներ միայն «երեսանց» են  
գցութիւն ունեցել, իսկ այդ իրաւունքների  
ներքին իմաստը անհասկան: Ան է անիրագործելի  
է մնացել: Ի՞նչու: Որովհետեւ մենք իբրև ասիա-  
ցիներ մեր մէջ մարմնացրել ենք փառասիրական

ԺԴ.

**Q**արմանում եմ, ճշմարիտ, ամեն տեղ  
իրանց ազատ իրաւունքներից,  
ընտրողական սկզբունքից օդ-  
տվել գիտեն, իսկ մեր հասա-  
րակութիւնը չգիտէ իր արդար իրաւունքներից  
օգուտ քաղել, չնայելով որ ազատ իրաւունք-  
ների տէր է:

Այդպիսի արդար յուզմունքով էր գառնում  
տիկինն Սրբուհին իր ամուսնուն, պ. Մտիկեա-  
նին, երբ այդ վերջինը անխախտելի ինքնավատա-  
հութեամբ արդարացնում էր հասարակութեան  
ծուռը բռնած զիրքը Ղազարի ձեռնադրութեան  
խնդրում:

Նրանք նստած էին իրանց սեղանատանը:  
Դուրսը մանր ձիւն էր թափում, եղանակը տրա-  
մազրել էր Մտիկեան ամուսիններին տանը նըս-  
տել, չնայելով որ օրվայ այդ ժամանակը նրանք  
դուրս էին դալիս իրանց սովորական զբօսանքն  
անելու:

և բոնակալական ձգտումներ և այդ ձգտումները  
մենք գործադրել ենք աշխատում ամեն աեղ,  
լինի սա մասնաւոր կամ ազգային գործ, ամեն  
տեղ մեր անձնական «եսը» առաջ ենք տանում:  
Ահա այդ պատճառով մենք աշխատում ենք  
խեղդել մաքի և հայեացքների ազատութիւն,  
պահանջում ենք ուրիշեց հպատակվել մեր  
քմահաճոյքներին... Այս օրվայ ընկածը, այս  
օրվայ ընկճածը իսկցին զլուխ է բարձրացնում  
և ամեն կերպ աշխատում է ինքը Ճնշել ինքը  
խեղդել երբ այդ նրան աջողվել է... Ի՞նչու—  
որովհետեւ նա ինքն այդ ճանապարհով է գնա-  
ցել այդ քուրայից անցել և ինչպէս կարող է  
նա այլապէս լինել: Այդ բոլորի հետևանքն ինչ  
է եղել: Տարիների այդ ուղղութիւնը մեր մէջ  
սպանել է ամեն մի ազատ հայեացք, ինքնուրոյն  
դատողութիւն: Մեր մէջ մշակվել են անձնական  
հայեացքներ: Մի խնդիր, երբ մեր մէջ յարուց-  
վում է, մենք առաջ նայում ենք մեր չորս  
կողմը, արդեօք մեր այդ տեսակ վարմունքով  
չենք շօշափում յայտնի անձնաւորութեան  
պատիւը, չենք վերաւորում մի որ և է «տուղի»  
փառասիրական ձգտումը, նայում ենք, թէ ի՞նչ  
հայեացք ունեն մեր «խնամակալները», «դիտա-  
ւորեալ խորհրդատուները» այդ խնդիրի վերաբեր-

մամբ... Այդ բոլորը լաւ ծանր ու թեթև անե-  
լուց յետոյ միայն մենք կայացնում ենք մեր  
վճիռը... Եւ այդ բոլորից յետոյ մի՞թէ պիտի  
զարմանալ, որ մեր մէջ կան դեռ ևս մնացած  
մութ կէտեր, բայց ասական անձնաւորութիւններ  
ու երեսյթներ: Բայց գոնէ այդքան անմիտիթար  
երեսյթների մէջ կայ և լուսաւոր կէտ, — մի  
քիչ կանգ առնելով նորից շարունակեց պ՝  
Մտիկեանը, — այդ ուրախալի կէտն է հասարա-  
կութեան եռանդը, որ դեռ գոյութիւն ունի մեր  
մէջ: Դեռ ևս վիշայած չէ մեր հոտաւութիւնը...  
Այդ գուցէ մշակվել է տարիների անախորժու-  
թիւնից, չգիտեմ, միայն թէ այդ հոտաւութիւնը  
խոստանում է հասարակութեան վաղ թէ ուշ  
հասկանալ իր սխալը, ձանաչել կեղծաւորին,  
քօղարկված թշնամուն, իսկ այդ բանից յետոյ  
մի քայլ է մնում դէպի քննական կերպով վե-  
րաբերվելը:

— Բոլորը գուցէ ժամանակով, չգիտեմ... .  
— Ամեն բան ունի իր սկիզբը — ծառին ժա-  
մանակ է հարկաւոր աճելու, թիթեռնիկին օրեր  
և աստիճաններ են պէտք իր սկզբնական ձեխ  
կերպարանափոխվելու համար, — մի անդամից,  
յանկարծ ոչ մի բան զլուխ չի գալիս, սիրե-  
լիս... .

Նա լռեց, շունչ քաշեց և շփելով իր լայն  
ձակատը, ընկաւ աթոռի յենակի վրա:

— Մինչև որ մենք կսովորենք դիտակցաբար  
վերաբերվել Ղաղարի պէս մարդիկ շարունակ  
կձեռնադրվեն. . .

— Այդ թէօրիան այս անգամ անտեղի կլինի  
և Ղաղարին չի աջողվել ձեռնադրվել . . .

Մտիկեանն այնպէս շեշտեց այդ նախադասու-  
թիւնը, որ Սրբուհին մի բոպէ լռեց և չգիտէր  
ինչ շարունակել:

— Ինչպէս, — յանկարծ ոկտեց նա, — դու ա-  
սում ես չի աջողվել ձեռնադրվել և այդ այն  
ժամանակ, երբ նրա կողմն են «մարդիկ», իսկ  
այդ «մարդիկ» միշտ պարացրել են հասարա-  
կութիւնը:

— Դու ակնարկում ես Առիւծեանին, բայց  
իմացիր, որ այժմ այդ Առիւծեանը այն չէ, ինչ  
որ մի քանի ամիս առաջ:

— Մի քանի ամազայ մէջ հասարակութեան  
դիտակցութիւնն այն աստիճան սթափից, որ  
հասկացաւ իր խայտառակ դրութիւնը. . .

— Այ՞ս, մի զարմանար: Ոչինչ այնքան անտա-  
նելի չէ, երբ վերաւորված է մարդուս զգաց-  
մունքը, մանաւանդ երբ մենք ունենք մի որ և  
իցէ յարաբերութիւն դէպի այն առարկան, որը

պատճառ է եղել վերաւորանք առաջացնելու:  
Հասարակութեան զգացմունքն այժմ վերաւոր-  
ված է, երբ տեսնում է, որ այն մարդը, որին  
նա հրաւիրել է իր շահերը պաշտպանելու, այդ  
մարդն, այդ իրաւունքները իր անձնական «եսին»  
է ծառայեցնում: Կարծում ես դու, որ հասարա-  
կութիւնը չգիտէ պատճառը, թէ ինչու է աշ-  
խատում Առիւծեանը Ղաղարին քահանայա-  
ցնել: Ամեն մէկը գիտէ .. Եւ ոչ մի ժամանակ  
այնպէս չեն զրդովել, ինչպէս ներկայումն այդ  
դէպքով:

— Այդ հասկանալի է, ես ինքս թողեցի այդ  
մարդու տունն այցելելը, երբ իմացայ, թէ նա  
ինչպիսի ստոր կերպով է տնակոխ անում հա-  
սարակութեան շահերը... Բայց չէ որ քիչ ա-  
ռաջ դու ինքդ ասացիր, որ մեզանում սովոր  
են չվերաւորել ուրիշի զգացմունքը — ուրեմն  
ով կվստահանայ նրա այդ վարմունքն երեսով  
տալ.. Վերջապէս, Հեռուն ի՞նչ ենք գնում  
ստորագրութիւններն ի՞նչ են վկայում:

— Ստորագրութիւնները գեռ ոչինչ չեն վր-  
կայում:

— Ինչպէս: Չէ որ օրինական ձեւակերպու-  
թիւններն արած են. . .

— Դեռ ոչ:

Սրբուհին խիստ զարմացաւ:  
 — Աչքնչ չեմ հասկանում, — ասաց նա վեր  
 քաշելով իր թիկունքը:  
 — Ասեմ, ասեմ: Այս օրերս մենք մի յայտա-  
 րարութիւն ենք տալու կօնսիստօր... և դու  
 կտեսնես, թէ ինչպէս է աջողվում նրա ձեռնա-  
 դրութիւնը:  
 — Ի՞նչ յայտարարութիւն:  
 — Այո, նոր բան է, բոլորովին նոր: Այսինքն,  
 ճիշտն ասած, զարեսոր իրաւունքների վերա-  
 կանգման խնդիր է: Յայտարարութիւն ենք տա-  
 լիս, որ կօնսիստօրը մեղ թոյլ տայ ժողով  
 բանալու, որտեղ մենք կարողանանք քահանա-  
 յական խնդրի վերաբերմամբ մտքերի փոխանա-  
 կութիւն անել և քննել արգեօք հարկաւոր է  
 մեղ քահանայ...  
 — Սա նոր բան է, ինձ չես ասել:  
 — Երեկ գիշեր ենք վճռել:  
 — Եւ դու կարծում ես, որ կօնսիստօրը  
 թոյլ կտայ, այն կօնսիստօրը, որտեղ նստած  
 են տէր Մակար, տէր Մատթոս, — քիչ լոռու-  
 թիւնից յետոյ ասաց Սրբուհին: — Կարծում  
 էի, թէ բան ես ասում, այդ եղանակցութեան  
 էք եկել հա, հա, հա... և Սրբուհին ծի-  
 ծաղեց:

— Կաց, կաց, մի ծիծաղեր... Կօնսիստօրն  
 իրաւունք չունի թոյլ չտալու, իսկ եթէ նա  
 այդպէս կվարվե, մենք կդիմենք էջմիածին, և  
 կբողոքենք Կաթողիկոսին, — ոգեսորվում էր  
 Մտիկիանը իր պաշտպանողական առարկում-  
 ներով:  
 — Լաւ երազ է, թէ կատարվե տեսնենք:  
 Մինչև դուք կշարժվեք, մինչև էջմիածին կգրէք,  
 իսկ Ղազարն արգէն ձեռնադրված կլինի:  
 — Զկարծես, նրա խնդրագիրը դեռ կօնսիս-  
 տօր չի մտել:  
 — Դուք որտեղից գիտէք:  
 — Գիտենք: Նա դեռ շարունակում է ստո-  
 րագրութիւններ ժողովել: Բայցի սրանից մենք  
 այդ առիթով յօդուած էլ ենք պատրաստում:  
 որ իր ժամանակին դուրս գալով՝ իր ծառա-  
 յութիւնը կանի. . .  
 — Ենթադրենք աջողվեց ժողով բանալ, ե-  
 րաշխաւո՞ր էք արգեօք, որ նրան կաջողվե սե-  
 ւացնել...  
 — Եթէ մեր դէմ մի որ և իցէ դեր կարողա-  
 նան խաղալու, մենք ես ուրիշ ելք ունենք:  
 — Օրինակ, — հետաքրքրվեց Սրբուհին, ըն-  
 դունելով լուրջ արտայայտութիւն:  
 — Ցեղականցինք:

— Հա՛, Հա՛, Հա՛... — ծիծաղեց Սրբուհին: —  
Այդ միայն բառեր, բառեր և ցանկութիւններ  
են, որոնք միշտ գոյութիւն են ունեցել յնորք-  
ների աշխարհում և ցանկութիւնների սահմա-  
նում: Հաւատացնում եմ քեզ որ գուք միայն  
ձեզ միփթարում էք, ուրիշ ոչինչ ձեզ կմնայ  
միայն ձեր զուր աշխատանքը, իսկ Ղաղարը  
կձեռնապրվի քահանայ այնպէս, ինչպէս եղել է  
մինչեւ այսօր, ինչպէս եղել են բաղմաթիւ օրի-  
նակներ անցեալում. . .

Կտեսնենք:

Զիւնը զուրսը դադարել էր, սպիտակ սաւա-  
նով ծածկելով փողոցները և կտուրները: Հեռ-  
ում հօրիղոնի վրա մէկը միւսի ետեից զուրս  
թափվեցան աստղերը:

Արդէն վառել էին լապտերներն, որոնք իրանց  
նուազ լցում տալածելով, լուսաւորում էին  
փողոցները: Մտիկեան ամուսինները զեռ շա-  
րունակում էին օրվայ հարցի վերաբերմամբ  
վեճաբանութիւններ անել:

ԺԵ.

**Ա**նցաւ զանդաղաքայլ ու տխրաղէմ  
ձմեռը, հասաւ կենսատու գարունը:  
Առիւծեանի տան զիմաց տղղ-  
մուտ առուտակը կերպարանափոխ-  
վել էր ոչ թէ այն պատճառով, որ նրան մաք-  
րեցին, մի բան, որի վրա տանեակ տարբներ է  
զլուխ են ցաւեցնում, բայց որոնց խմօրը գեռ  
ջուր է որ առնում է: Առուտակը կերպարանա-  
փոխվել էր այն սովորական պատճառով, որ  
գանան ջրերը սկսեցին ասպատակել նրա ափերը:  
Ո՞քան հեշտ է կատարվում բնութեան օրէն-  
քով այն, ինչ որ մարդկութեան ուժից գեռ  
վեր է համարվում: Այդ առուտակն այժմ աշ-  
խոյժ կերպով զլորում էր իր ուռած ալեքները,  
որոնք մի տեսակ պաղպաղիւն փայլ էին ստա-  
ցել գարնան ջերմացնող արեւի ճառագայթնե-  
րից: Պարզ անամպ երկինքը կարծես ժպառում  
էր առուտակի մաքուր մակերեւոյթի հետ և իր  
կապը գոյնը ցոլացնում նրա ջրերի մէջ: Նրա  
ափերի վրա կաղամախները փայլում էին զեղե-

յիկ կանաչով, մի անոյշ բոյր տարածելով շըր-  
ջակայ օդի մէջ: Այնտեղ հեռաւոր հօրիղոնք  
ծածկվել է կապտագոյն ծխով, ամբողջ բնու-  
թիւնը խնդում է և ուրախաղեմ ժապով  
ողջունում այդ բոլորի կերպարանափոխման  
հեղինակին՝ արևին:

Բնութեան այդ կենսաբեր փոփոխութեան  
հետ քաղաքի հասարակական գործերն էլ խոս-  
տանում էին կենդանութիւն ստանալ: Սրա  
պատճառն և հեղինակն այն լուրն էր, որ ստաց-  
վեց էջմիածնից և յետոյ պաշտօնական կերպով  
հաստատվեց: Դա նոր առաջնորդի նշանակվելու  
լուրն էր: Երբէք ոչ մի առաջնորդի նշանակ-  
վելու լուրն այն աստիճանն կենդանութիւն և  
ուրախութիւն չի առաջացրել քաղաքում, ինչ  
պէս ներկայումն: Երիտասարդների կուսակցու-  
թիւնն արդէն համոզված էր, որ վերջապէս  
կսկսն գործադրվել եռանդուն միջոցներ «խնա-  
մակալների» դէմ, իսկ նոր առաջնորդի անկա-  
շառ և անաշառ ուղղութիւնը թոյլ էր տալիս  
մտածելու, որ մօտ ապագայում առաջ կղան  
գորեղ միջոցներ հնի և փոտածի դէմ: Այն յու-  
սահատութիւնն, որ տիրել էր մի քանի նոյն  
իսկ ինտելիգենտ մարդկանց մէջ արդէն ահե-  
տանալու վրա էր:

Բայց և տէրմակարեանները, տեսնելով բոլո-  
րովին հակառակ ուղղութեան առաջնորդի նշա-  
նակվելը, չին յուսահատվում: Նրանք պատ-  
րաստվում էին զիմագրել նոր առաջնորդի ամեն  
մի գործնական քայլին: Սրանք մինչև անդամ  
հաւատացած էին իրանց աջողութեան վրա,  
որովհետեւ իրանց կողմն ունէին այն առաւելու-  
թիւնն, որ իրանց ձեռքն էր գործերի ղեկը և  
պաշտօնական մարզկանց ծանօթութիւնը... և  
այդ բոլոր առաւելութիւնները կարող էին գե-  
րակշեռ դեր խաղալ իրանց հակառակորդների  
վերաբերմամբ: Տէր Մակարը մինչև անգամ  
ծրագիրներ էր կավճում, թէ ինչ միջոցների  
հարկաւոր է զիմել որ կարելոյն չափ կարծատե-  
անել նոր առաջնորդի մնալու խնդիրը:

Եւ հենց հեռագիրը ստանալու օրից կօնսիս-  
տօրիականների կողմից սկսվեց մի տենդային  
գործունէութիւն: Առաջին քայլն սրանց կող-  
մից այն էր, որ նրանք մահուզի տակ գրին այն  
խնդրագիրը, որ պահանջում էր քահանայական  
խնդրի վերաբերմամբ ծխականների ժողով բա-  
նալ և որն արդէն մտել էր կօնսիստօր:

Կօնսիստօրիականների վրփուրը այն աստի-  
ճան էր հասել որ սրանով չբաւականացան,  
այլ սկսեցին մինչև անգամ սպառնալիքներ

կարդալ այն մարդկանց դէմ, որոնք ստորագրել  
էին այդ խնդրագիրը, համարելով ապօրինի այդ  
ձևով ժողոված ստորագրութիւնները: Դժբախտ  
կօնսիստօրիականները կորցրել էին ամեն մի կեն-  
դանութիւն և ամենատարրական օրինականու-  
թիւն: Նրանց արամաբանութիւնն այն աստի-  
ճան եղկելի էր, որ այն թուղթը, որով խնդր  
վում էր միայն ժողովը բանալ և որ ստորա-  
գրած էին քաղաքի ինտելեգենտ, առաջաւոր  
մարդիկ, այդ խնդրը համարվում էր ապօրինի,  
մի և նոյն ժամանակ օրինաւոր էին Ճանաչում  
այն ստորագրութիւններն, որոնք ժողոված էին  
Ղաղարին քահանայացնելով համար:

Բայց հազիւ այդ հրաշամիտ զեկավարները  
իրանց բարձրութիւնից այդ սպառնալիքներն  
էին թափում և մի և նոյն ժամանակ պատ-  
րաստութիւններ տեսնում Ղաղարի թղթերը  
ուղարկել էջմիածին, ինչպէս ստացվում է նոր  
առաջնորդի հեռագիրը, որ անպայման արգե-  
լում էր որ և իցէ քահանայական հարց յա-  
րուցանել մինչև իր գալը:

Այդ առաջին հարուածն էր, որ ստացան  
տէրմակարեանները անսպասելի կերպով: Առիւծ-  
եանը զլուխը կորցրած չդիտէր, ում դիմէր, ի՞նչ  
անէր: Նրա խորհրդատու տէր Մակարն էլ որ

մինչև այժմ ոչ մի արգելքների չէր հանդիպած՝  
իր գործունէութիւնն ամբողջ ընթացքում՝ նա  
ևս սկսեց վախենալ և երկիւղ կրել իրերի ան-  
բարեյաջող ուղղութիւնից:

Նա այդ հանգամանքների շնորհիւ դարձել  
էր չափազանց զիւրագրգիր և բծախնդիր: Նրա  
բարկութիւնն այն կէտին էր հասել որ սկսեց  
իր մաղձը թափել եկեղեցու բեմից, պահարա-  
կել երիտասարդներին, զանգան սպառնական  
ակնարկներ անել խնդրագրողների  
հասցէին: Բանն այնտեղ էր հասել որ ժամա-  
սորները քարոզի ժամանակ եկեղեցուց դուրս  
էին գալիս, իրանց կատարեալ զգուանքը սրա-  
նով միայն արտայայտելով:

Ահա այդ ժամանակներումն էր, որ Առիւծ-  
եանը մի երեկոյ գալով աէր Մակարի մօտ խոր  
հրթակցում էր հանգամանքների մասին:

— Մի՞թէ ոչ մի հնար չկայ, — հարցրեց նա,  
ևս կարծում եմ, որ միակ միջոցը լաւ աջա-  
համբոյրն է:

Տէր Մակարը մի ջղային շարժում անելով  
իր տեղում ընդհատեց Առիւծեանին:

— Դուք ուրեմն չէք ճանաչում այդ եպիս-  
կոպոսին, — ասաց նա, — սա այն հոգին է, որ ոչ  
մի աջահամբոյր չի ընդունիլ: Մէր կատարեալ

դժբախտութիւնն է, որ սա է նշանակվել մեր  
թեմի առաջնորդ: Տարիների աշխատանքը մի  
անգամից կքանդէ:

— Բայց միթէ չի կարելի, տէրտէր, մինչև  
նրա գալը էջմիածին գրել... Դուք այնտեղ ու-  
նիք ծանօթներ... Մենք կարող ենք մինչև նրա  
գալը թշյլտութիւնը ձեռք բերել: Ես բոլոր  
ծախսերը կանեմ:

— Առ այժմ ես ձեզ ոչ մի խորհուրդ տալ  
չեմ կարող: Էջմիածին գրել չի կարելի, քանի  
որ այժմ ունենք թեմական առաջնորդ: Մի  
քիչ սպասեցէք, թողէք այդ մարդը գայ, գործի  
գլուխ անցնի, տեսնենք — նրա բռնած դիրքից  
և ուղղութիւնից կախված է ամեն բան...

— Եթէ լինէր նրան այստեղից ճանապար-  
հել — ընդհատեց Առիւծեանը:

— Այդ բանի մասին ես արդէն մտածում  
եմ, տեսնենք: Նրա վրա վարչական շրջաններում  
լաւ հայեացք չի տիրապետում... Շատ կարելի  
է որ կփոխվի, որովհետեւ ես յիշում եմ և  
շատ եպիսկոպոսներ եմ տեսել, որոնք սկզբում

խիստ են բռնել բայց յետոյ թուլացել: Այն,  
մեր գնացած սրբազնի անունը շատ  
կտանք; Դեռ շատ հայ պիտի ուտեն, որ նրան  
համանեն:

— Նա էլ ակիզը մի քիչ օյխներ հանեց,  
բայց յետոյ, ի հարկէ, հասկացաւ, թէ բանն  
ինչումն է...

— Այո՛, այո՛, խաթրը ճանաչող մարդ էր. մի  
խօսքով բաւական էր, որ մարդու խնդիրն ան-  
տես չանէր: Այսօրվան օրվայ պէս յիշում եմ:  
որ մի խօսք ասացի միայն տէր Մարտիրոսի հա-  
մար և խկզն գրեց — և նա կամիլաւկայ ստա-  
ցաւ: Բա՛ տէր Կարապետի ծաղկեայ փիլիոնը,  
տէր Սիմօնի գաւազանը, ովք է սրանց համար  
բարեխօս եղել... և այդ մարդիկ, շնորհակալ  
եմ, պատահած ժամանակ ոտ զրած տեղս պատ-  
րաստ են գլուխ դնել...

— Ի՞նչ ասել կուզի:

— Պէտք է ասած, ականջը ձայն տայ, ինձ  
շատ սիրում էր. մի օր որ չգայի մօտը, մարդ  
էր ուղարկում ետելիցս... Նրա պէս առաջնորդի  
անունը դեռ շատ կտանք:

— Տեսնում էք, բայց մերոնք էլի չէին հա-  
ւանում:

— Դուք ում խօսքերի վրա էք ուշադրու-  
թիւն դարձնում, այդ դատարկագրապանների վր-  
րա... Մալչիշկի!! Պուլեպչի!! Տաքացաւ Ա-  
ռիւծեանը, թափելով իր փրփուրը երիտասար-  
դութեան հասցեին:

— Զեր հարսանիքի պատրաստութիւններն ինչպէս են գնում, —խօսքը փոխեց տէր Մակարը, կամենալով կարծ կապել:

— Ուղիղն ասած՝ մեզանում արգելք չկայ, այդ դորձի վերջանալուն եմ սպասում:

— Ուրեմն դուք պատրաստ էք:

— Մինչև այն օրն, երբ կարելի է պսակ անել...

— Պատրաստ կլինէք, —հարցրեց տէրտէրը:

Ուրեմն լաւ է: Կարծում եմ, որ որքան էլ այդ եպիսկոպոսը հակառակ մարդ լինի, սրա վերաբերմամբ մի որ և իցէ արգելք լինել չի կարող, որովհետեւ որտ օրինական ընտրութիւնն արդէն եղել է, ստորագրութեան թերթն էլ ձեռներիս է . . .

— Ես էլ այդպէս եմ կարծում: Բայց, տէրտէր, երբ էք սպասում «սրան»:

— Արդէն դուրս է եկել հաշւով մի շաբաթից այստեղ կլինի, եթէ ձանապարհում չմնայ:

— Ուրեմն Զատկվան կգայ:

— Սպասելի է:

Առիւծեանը մի շարժում գործեց իր տեղում, սեռեց իր աչքերը տէրտէրի երեսին և երկար ժամանակ մի զարմացական նշան արտայացտելով իր երեսի վրա, կարծես, սպասում էր մի բաւարար պատասխանի:

— Ասում էք, որ այնքան երկիւղ չկայ, — վեր կենալով տեղից և առնելով տէր հօր աջը, հարցրեց Առիւծեանը:

— Կարծում եմ, կարծում եմ, —թափ տալով իր գիտակները և մինչև գուռը ձանապարհ դնելով իր հիւրին, նկատեց տէր Մակարը, — փոթորիկից վախճանք, ծով պիտի չգնանք, դայլից վախճանք՝ գիւղ պիտի չշինենք, — ժպտալից հայեացքով կցեց նա Առիւծեանի ետևից:

գէպի լայնածաւալ գետը, նրա վրա անց ու  
դարձ անող շոգենաւները, մի նեարդային ցըն-  
ցումով լսում են ամեն մի սլոցը, որ այստեղ  
իւրաքանչիւր րոպէում մարդու ականջն է ծա-  
կում իր սուր ձայնով: Մերթ-մերթ լսվում է  
հանդարտ շշնջիւն, հասնում են կարծ ու կծու  
նկատողութիւններ, լինում են սրախօսութիւն-  
ներ. . .

— Տեսնենք, հիմա տէր Մակարը էլի իր քա-  
րողները կասի՞ . . .

— Ինչ էք ուղում դուք սրանից, — հէզնօրէն  
նկատում էր մի ուրիշը, — տէր Մակարից պիտի  
շնորհակալ լինել որ երկու տարի կառավարել  
է մեզ. . .

Մի ուրիշ տեղ:

— Այդ եպիսկոպոսը կարծեմ, նո՞ր է ձեռ-  
նադրվել:

— Անդրանիկ պաշտօնատեղին է:

— Միթէ մինչև այժմ վարդապետ էր:

— Մինչև անգամ ամեն մի պաշտօնից և գոր-  
ծից հեռացրած էր:

— Խնչու:

— Որովհետեւ, դժբախտաբար, իր մէջ ունի  
մի այնպիսի յատկութիւն, որ ներկայումն խիստ  
հալածվում է:

Կոտրված սիրտ:

**ՃԶ.**

Վերջապէս հասաւ այն օրը, երբ  
սպասվում էր ցանկալի սրբա-  
զանը: Թէև սրբազնն ոչ մի  
լուր չէր յայտնել իր գալու մա-  
սին, բայց եղան մարդիկ, որ գալու օրն իմացան:  
Արդէն նախընթաց օրը շատ-շատերը զիտէին,  
թէ վաղն առաւօտեան պիտի իրանց սպասած  
հիւրը կայ:

Առաւօտը մեծ բազմութիւն խռնվել էր շո-  
գենաւի նաւահանգիստը և սպասում էր սրտի  
մեծ տրոփիւնով: Այստեղ էր և հոգեօրական-  
ների գասը, տէր Մակարին զլուխ ունենալով:  
Այստեղ էին և սրբազնին ճշմարիտ համա-  
կրողները: Տեռւում, ամբողջ ձանապարհի վրա,  
երկու կողմը կանգնած էր ժողովուրդը: Պոլի-  
ցիական պրիստաւը մի քանի պաշտօնեաներով  
կարգ էր պահպանում: Եկել էր և ոստիկանա-  
պետը: Ամենքը սրտատրոփ սպասում էին: Լուռ  
ու մունջ հայեացքները վաղուց ուղղված են

— Այսի՞նքն:  
 — Բարձր ուսում, զործելու եռանդ, անկաշուու ուղղութիւն. . .  
 — Հա՞ . . .  
 Ելրորդ տեղում:  
 — Ամեն քարոզիչ է, հա. . .  
 — Դու որտըղան գիտիս վեօլ. . .  
 — Բա, բա, բա. . . Թիֆլիսում, Բաքւում քանի անգամ լսած եմ:  
 — Հալքաթ տեսնես հիմա մի բան կանէ:  
 — Ի հարկէ:  
 — Տեսնես, Ճառից - բանից պատրաստել են:  
 Կեարապետ, — զարձաւ իր միւս կողքի կանգնածին խօսողը, — Ճառից - բանից լինելու ա, խաբար չես. . .

Այդ միջոցին խիստ շվից ամենքի ուշադրութիւնը զրաւեց դէպի հեռուն. ամենքն իրանց զլուխներն ուղղեցին դէպի գետը: Շոգենաւը փնչալով և ջրի մակերեսիթին ուժգին հարուածներ տալով, մօտենում էր ափին: Ահա նա կանգնեց: Ֆէր Մակարն իր ճանրախոհ քայլերով ուղեռվեց դէպի շոգենաւը, նրան հետեւցին միւս քահանաները, ոստիկանապետը և պրիստաւը: Քանի բոսէից յետոյ սրբազանն իր ուրախ, ժպտալից հայեացքով ողջունելով ժո-

ղովոդի թնդագին կեցցէներին, նստեց կառք և ուղեռվեցաւ եկեղեցի:  
 Փողովրդի ահազին բազմութիւն հետեւց իր առաջնորդին:

մի շնորհալի տեսք են պարզեռում այդ պատմական վայրին:

Գարունը հասնելուն պէս մի գեղեցիկ և սիրուն պատկեր է բացվում այս զօսատեղին այցելողի առաջ: Զմեռվան տաղտկալի և մաշղ օրերից յետոյ մարդ այստեղ առանձին բաւականութեամբ կարողանում է հանգիստ ժամեր վայելել և մի կտոր ժամանակ իր առօրեայ հոգւերից ազատ շունչ քաշել:

Գարնան գեղեցիկ երեկոներից մինն էր, երբ զքօննելու էր եկել այստեղ և Ղաղարն իր նշանաձի հետ:

Այն օրից յետոյ, երբ Ղաղարն իրաւունք ստացաւ Վարդուհու կամքի և սրտի վրա, առաջին անգամն է, որ սրտ հետ գուրս է գալիս միայնակ զքօննելու:

Մի աիրուն գիշեր էր: Թեթև և զով քամին փչում էր նրանց երեսին. գետից հասնում էր կենդանացուցիչ զովութիւն. Վարդուհին բարձրացրեց իր երեսի քողը և քամին սկսեց շշել նրա երեսն ու պարանոցը, խաղալով նրա գեղեցիկ մազերի հետ: Նա դանդաղաքայլ գնում էր իր ուղեկցի հետ թեանցուկ և ուղեղ նայում էր հեռուն. իսկ նրա ուղեկիցը հպարտութեամբ սեղմում էր օրիորդի կուռը և շր-

## ԺԷ.

**Պ**աղաքի արևմտեան կողմում, մեծ գետի առաջ, կայ մի ընդարձակ տեղ, որ մի ժամանակ յայտնի էր իր պատմական նշանակութեամբ:  
Պետրոս Մեծի օրերով այստեղ եղել են ծովային վարչութեան զանազան հիմնարկութիւններ, գործարաններ, որտեղ պատրաստվելիս են եղել ռազմական նաւեր, գործիքներ: Բայց երբ որ Ռուսաստանի սահմանները տարածվեցան զէպի հարաւ, այն ժամանակից այդ տեղի ռազմական նշանակութիւնն էլ ընկաւ, պահպանելով միայն մինչեւ այսօր իր պատմական «Պօրտ» անունը:

Այժմ այդ տեղը, բացի մասնաւոր ընկերութեան նաւահանգիստ լինելուց, կաղմում է և մի փառաւոր զքօսատեղի: Այստեղ ամբողջ տարածութեան վրա գտնվում են հին-հին ծառեր, որոնք իրանց հսկայական բարձրութեամբ

ջապատում էր նրան մեծ ուշադրութեամբ և  
հոգատարութեամբ:

Վարդուհին տխուր էր. նոյն վշաալից աչքերն  
արտայայտում էին անյուսալի վեճակ: Այս,  
եթէ գարունը ամենի համար բերէր ուրախու-  
թիւն և երջանիկ օրեր: Ղազարի սիրային խօս-  
քերը նրա մէջ գրգռում էին աւելի ատելու-  
թիւն: Վարդուհու մէջ ալեկոծում է ինքնա-  
սիրութեան վերաւորանքի զգացմունքը: 0՝  
եթէ նա ստիպված չլինէր այդ բոլորը սառնու-  
թեամբ թաղել իր սրտի մէջ ովկ կհամարձակ-  
վէր դիպչել նրա վերաւորված թելերին և այդ  
թելերը լարել այն զգացմունքով, որպիսին նա  
իր մէջ չի զգում և չի էլ յանկանում. . .

Իսկ այժմ նա պիտի տանէ, պիտի համբերէ  
այդ ամենը. . . Վարդուհին, ամեն մի ակնարկ,  
իւրաքանչիւր հարց ու փորձ կամ անտեղի մի-  
ջամառութիւն Ղազարի կողմից, աշխատում է  
հեռացնել իր յուսահատական լուսութիւնով,  
լուսութիւն, որ նրա սիրուն երեսին պարզեռում  
էր աւելի հետաքրքիր խոհականութիւն, աւելի  
գրաւչութիւն. . .

Անամազ երկնքի վրա մէկը միւսի ետելից դուրս  
թափեցին աստղերը, հեռուից լսվում էին շո-  
գենաւների շվիոցները և անիւների դմբդմոցը,

վրօնողներն արդէն յրավել էին, ամբողջ ծառու-  
ղու վրա գրեթէ մարդ չկար, մի ծանր և եր-  
կիւղալի միայնակութեան երկիւղ էր ազգում  
մարդու վրա ծառուղու ամբողջ ուղղութեամբ,  
— երբ նրանք նստեցին:

— 0՝, որքան ես բախտաւոր եմ,— բացական-  
չեց Ղազարը,— որքան բախտաւոր եմ, որ ար-  
ժանացայ քո ձեռքին. . .

Եւ նա զրկեց նրան ու սկսեց համբուրել:  
Վարդուհին ակամայ լուսութեամբ տարաւ Ղա-  
զարի սիրոյ բռնկումը, Ղազարն աւելի ու աւելի  
մօտեցաւ նրան: Վարդուհին աչքերն իջեցրեց և  
մի փորձ արաւ յետ քաշվելու: Ղազարն այդ  
վերագրեց նրա չափազանց համեստութեան:

— Զես էլ հարցնում, սիրելիս, թէ ինչու այ-  
սօր չկարողացայ մօտդ շուտով գալ— գործնա-  
կան նիւթի դիմեց Ղազարը, կարծելով, որ սրա-  
նով աւելի գուր կդայ օրիորդին: Նրա զզվելի  
երեսը փայլեց մի վայրենի ինքնահաւանութեամբ  
և նա այնպիսի ինքնաբաւական հայեացք զցեց  
Վարդուհու երեսին, որ օրիորդը չդիմացաւ և  
ակամայից խղեց լուսութիւնը:

— Ի՞նչու, — հարց գրեց նա:

— էլ մի հարցուր, — տաքացաւ Ղազարը,—  
այսօր ամբողջ օրը ոտ եմ տուել երկու անգամ

«Ցեցի» մօտ եմ գնացել, հինգ անգամ թալաշի  
մօտ—և կրկին չեմ տեսել իմ ուղած մարդկանց։  
— Ի՞նչ մարդկանց, — զսպելով իր յուղմուն-  
քը, հարցրեց Վարդուհին։

— Այ Աստուած փչացնի, բոլորն էլ այդ  
սրբազնի պատճառով է։

— Ինչպէս։

— Զեռքով բացելու բանը ատամների տակ  
է զցում։ Այդ սրբազնն այն մարդկանցից է,  
որի մասին խօսելն չարժի։ Երեակայիր, — և  
Ղազարը զայրացած շարունակեց, — երկու շա-  
րաթ չկայ եկածը, բայց կօնսիստօրիականների  
զահին արդէն գնացել է, մի թուղթ երեք ան-  
գամ է արտազրել տալիս, էլի չե հաւանում...  
Է՛հ, սպասում եմ ձեռնազրութեան, ոտս այս  
կօնսիստօրից բոլորովին քաշելու եմ։ Դրանից  
որքան փէշդ հեռու պահես, այնքան լաւ է։

— Ինչ կայ որ, խիստ եղածը լաւ է։

— Մարդ չէ, մարդ չէ։ Մեզ այդ տեսակ մարդ  
հարկաւոր չէ։ Այդ տեսակ մարդը հոգեորական-  
ների շահերը պաշտպանել չգիտէ։ Քահանաների  
պատիւը բոլորովին զցում է։ Կիրակի օրվայ  
քարոզն ինչ էր՝ աջ ու ձախ խայտառակեց  
էլի... Սաստիկ կամակոր մարդ է, իր ասածի,  
խօսքն որ ասաց՝ եօթը թոփով գլխից չես հա-

նիլ։ Այդքան տարի քահանայ ձեռնազրվել են,  
ստորագրութեան թերթով են բաւականացել,  
իսկ այժմ սա ասում է, թէ այդպիսի թերթ  
չի ընդունում։ . .

— Զի ընդունում, — մեքենայաբար հարցրեց  
Վարդուհին։

— Ապա՝ ասում է՝ ծխականների ժողովով  
պիտի ընտրութիւններ լինի։ Որքան խնդրեցինք,  
տէր Մակարը ջոկ, հօրեղբայրս ջոկ, քո ազգա-  
կանդ էլ իբրև երեսփոխ, ջոկ խնդրեց—չէ ու  
չէ, իր ասածի վրա կանգնել է ու կանգնել։  
Հիմա պիտի եկող շաբաթ ժողով լինի... . .

— Ես այդ չղիտէի։

— Այժմ այդ բանի համար է, որ երկու օր է  
ման եմ դալիս, ոտ եմ տալիս, որ մեր մարդ-  
կանց տեսնեմ, որպէս զի ժողովում աւելի ըս-  
տուար կողմնակիցներ... Է՛հ, այդ բոլորն, ասենք,  
մանը բաներ են,—խօսքը կրկին փոխեց Ղազա-  
րը, երբ տեսաւ, որ օրիորդի վրա գործնական  
խօսակցութիւնն էլ մի առանձին տպաւորու-  
թիւն չթողեց, — բոլորն աննշան բաներ են։  
Բայց, խօսքը մեր մէջ մնայ, այդ սրբազնին այս-  
տեղեց այնպէս ցանենք, որ ոտը տափ չտեսնի... . .

— Ինչպէս... . .

— Օ՛, դու տէր Մակարին չես ձանաչում։

— Ի՞նչ կարող է որ, չէ որ սա քահանայ է,  
իսկ նա առաջնորդ:

— Տէր Մակարը մեր առաջնորդն էլ է, մեր  
զլուխն էլ է, մինչև այժմ եպիսկոպոս չի եղել,  
որ նրա խօսքից դուրս եկած լինի: Նա եթէ  
ուզենայ, շատ բանի կանի... չի էլ թողնիլ...  
կտեսնես... Այժմ վեր կաց, գնանք, հոգիս: Ա-  
ռանց այդ բաների ոչ մի գործ զլուխ չի գալիս:  
Ասած է մինչև չպղտորվի, չի պարզվիլ... Գնանք,  
արդէն զիշերից բաւականին անցել է, գարնան  
երեկոները սառն են լինում, կարող ես մրսել...

## ԺԷ.



Իկու շաբաթ էր անցել այն օրից,  
երբ սրբազնը ստանձնել էր իր  
պաշտօնը և այդ երկու շաբաթ-  
վայ մէջ նա այն աստիճան գրա-  
ւել էր տեղացիների համակրու-  
թիւնը, որ ամեն տեղ խօսքը  
սրա մասին էր լինում: Առաջ-  
նորդարանի դռները, որ փակ էին մշտապէս  
առաջվան եպիսկոպոսների օրերով և բացվում  
էին միայն տօն օրերին և այն ևս ընտրովի  
մարդկանց առաջ, այժմ բաց էին անխտիր ա-  
մենքի համար: Սրբազնը մեծ բաւականու-  
թեամբ ընդունում էր այցելողներին, լսում էր  
նրանց կարծիքները, միսիթարում էր, այցելու-  
թիւններ էր անում և այդ միջոցով պահում  
էր իր հօտի հետ սերտ յարաբերութիւն: Իսկ  
քարոզներով շանթել էր ամենքի սիրտը, վա-  
ռել էր թմրած ուղեղները: Նրա քարոզի օրը  
եկեղեցու դռներին մօտենալ չէր լինում, բազ-  
մութիւնն ակամայից մնում էր զուրսը և հե-

տաքրքրվում էր եկեղեցուց դուրս եկողների պատմածներով և հաղորդած տպաւորութիւններով :

Սրբազնի գալը հանդիպել էր Զատկի տօներին: Անցան այդ ազմկալից օրերը, կեանքն իր սովորական ընթացքն ընդունեց: Այժմ ամեն մարդ սպասում էր ծխականների ժողովին, որտեղ պիտի հասարակութիւնն ի մօտոյ ծանօթանար սրբազնի ուղղութեան հետ, նրա դէպի եկեղեցական - հասարակական խնդիրները բռնած դիրքի հետ:

Հասաւ և այդ օրը:

Կանաչ կիրակին դուրս եկած շաբաթը նշանակվեց ժողով: Այդ ժողովը մի կատարեալ դարագլուխ կազմեց տեղական հասարակական գործերի վերաբերմամբ: Այդ ժողովում պիտի խորհրդածութեան նիւթ տրվէր Ղաղարի քահանայանալու խնդիրը, համաձայն այն յայտարարութեան եղանակին, որ տրված էր կօնսիստոր մինչև սրբազնի գալը և որն արժանացել էր կօնսիստորիականների կատարեալ արհամարհանքին:

Սրբազնն այդ թղթի գոյութեան մասին տեղեկացել էր իր մօտ այցելողներից և, ինչ ասել կուզի, ընթացք և ուղղութիւն էր տուել նրան:

Այդ բանը և թէ ծխականների ժողովով քահանացուի հարց դնելը «խնամակալներին» բոլորովին անել դրութեան մէջ դրեց, և նրանք վլուխները կորցրած չղիտէին, թէ ինչ պիտի անէին: Միակ փրկութիւնն այդ դրութիւնից դրուս գալու համար նրանք զտնում էին «իրանց» մեծամասնութեան վրա:

Մի արտակարդ բնաւորութիւն ունեցաւ այդ ժողովը: Դեռ ժողովը չըացված, նշյն տղայոց զպրոցի զահլիճում, որտեղ միշտ ժողովիկել են այնքան ծխականներ, որ հաղիւ օրինական թիւ են կազմել, այսօր խմբվել էր հետաքրքրվողների ահազին բազմութիւն:

Ամենքն անհամեր սպասում էին սրբազնի գալուն, որը պիտի բանար ժողովը:

Ահա բարձրացաւ մի ինչ որ ազմուկ—երեցաւ սպբազանը: Նրա երեսը հանդարտ էր, խաղաղ, հասակը բարձր և կանոնաւոր: Սրբազնի ամեն մի քայլը արտայայտում էր կամքի հաստատութիւն, պարզութիւն և ինքնակամութիւն: Նա ունէր իր մէջ այն շարժուածքը և վարմունքը հասարակութեան հետ, որ իսկոյն ապացուցանում են մարդու բնաւորութեան բարձր յատկութիւնները: Նա մինչև անզամ իր հակառակորդներին վերաբերվում էր առանձին նա-

խաղգուշութեամբ և յարդանքով։ Իսկ նրա ետևից գնում էր գլուխը ցած զցած տէր Մակարը, որ գահին մտնելուն պէս արդէն նախատեսեց ժողովի ընթացքն ու վճիռը...

— Իմ գալուց յետոյ, — սկսկեց սրբազնը, բացելով ժողովը, — ամեն օր մտածում էի, որ բանամ ժողով, բայց միայն այժմ ես կարողացայ այդ անել։ Այստեղ իմ բացակայութեան ժամանակ կօնսիստօր թուղթ է տրվել, որով խնդրվում է քահանայական խնդրի վերաբերմամբ ժողով բանալ։

Եւ սրբազնը գործերի միջից հանեց այդ յայտարարութիւնը և զրեց սեղանի աջ կողմը։

— Կատարելով այդ, — շարունակեց նա, — ես ժողովին առաջարկում եմ՝ քահանայական խնդրի վերաբերմամբ ով ինչ ունի ասելու, բարեհածի իր կարծիքը յայտնել։ Ի դեպ պիտի ասեմ, որ իմ գալուց յետոյ եկեղեցու պաշտօնեաներից, պ. Ղաղարոս Մժեղեանը ստորագրութեան թերթ առաջարկեց, որով խնդրում էր իրան քահանայ ձեռնադրել։ Ես յայտնեցի, որ այսուհետեւ այդպիսի ստորագրութիւններ ընդունելու չեմ, բայց, եթէ կամենում են, խնդրի տան ծխականների ժողովին։ Եւ ահա այդ պարոնը դիմելով ժողովիդ խնդրում է իրան քահանայ ձեռնադրել։

Տիրեց մի միջոց լոռութիւն։  
— Հարկաւոր է ձեռնադրել — լսվեց մէկի երկ-  
չոս ու անվտահ ձայնը։  
— Այո, այո, ձեռնադրել։  
— Նա 10 տարուց աւել է, որ ծառայում է  
եկեղեցուն։

— Սրբազն հայր, — վեր կացաւ պ. Մտիկ-  
եանը, — կարելի է արդեօք մի քանի խօսք ասել  
այդ խնդրի վերաբերմամբ։ Ապա նա իրաւունք  
ստանալով շարունակեց։ Մեր յայտարարութիւն  
տան ունէր երկու նպատակ. մէկն՝ որ վերա-  
կանգնել մեր դարեւոր նախնիների սովորութիւն-  
ներն, այսինքն ընտրութիւն անել ընդհանուր  
ծխականների հաւանութեամբ։ Թէ որ ստորա-  
գրութեան թերթ շրջեցնելը չի ներկայացնում  
ընդհանուրի ցանկութիւնը — այդ արդէն պարզ  
է, իսկ ծխականների ժողովով արած ընտրու-  
թիւնը յարմարութիւն է տրվում ամենին մաս-  
նակցել ուրեմն ընտրութիւն անել ընդհանուրի  
մտսնակցութեամբ։ Այսօր յայտարարութեան  
այդ կեալ կատարված ենք տեսնում։ Գալով  
երկրորդ կետին, ես պիտի ասեմ, որ քահանա-  
յացուն պիտի ունենայ պատշաճաւոր կրթու-  
թիւն և, եթէ չեմ սխալվում, սրա մասին ու-  
նենք էջմիածնի կարգադրութիւնը, թէ քաղաք-

ներում քահանայացուն պիտի հոգեոր դպրոցն աւարտած լինի, ոտ մի պահանջ է, որի դէմ դժուար է բողոքել։ Աչքի առաջ ունենալով այդ բոլորը՝ ես գտնում եմ, որ խնդրի հետ միասին պ. խնդրատուն պիտի ներկայացնէր և իր ուսման վկայականը, բայց քանի որ այսպիսի վկայական չի ներկայացրած, ուստի պարոնի ընտրելու կամ չընտրելու մասին առ այժմ խօսք լինել չի կարող... Նախ պիտի ներկայացնել վկայականը, ապա խնդրել կոչումը. . .

— Ոյ՛, այ՞ո, քահանայացուն պիտի ունենայ պատշաճաւոր կրթութիւն. . .

— Քուէարկել քուէարկել, ի՞նչ էք վախում քուէարկելուց... — լսվում էին միմեանց հակասող ձայներ ամեն կողմից։

Եյդ միջոց վեր կացաւ իր տեղեց մի այլ ծխական։

— Ես կարծում եմ, — ասաց նա, — որ պ. Ղազարոս Մժեղեանին պիտի շնորհակալութեամբ ձեռնազրենք։ Նա 10 տարի է, որ ծառայում է մեր եկեղեցուն և երբ որ մտել էր նա այդ պաշտօնի մէջ, պարոնը յըս ունէր, թէ վաղ կամ ուշ նրա առաջ բաց է լինելու ասպարէվը, ապա թէ ոչ նա գուցէ այդ ծանր լուծը իր վրա չառնէր։ Ես հաւատացած եմ, որ եթէ մենք

այսօր պարոնին մերժենք, վաղը միւս օրը մենք եկեղեցում տիրացու չենք ունենալ։ Ո՞վ պիտի մեղ համար տիրացութիւն անի... — մի պատետիկական շեշտադրութեամբ բացականչեց պարոնը։

— Տիրացուների համար, — խօսեց սրբազնը,

— ես մտածել եմ մի բան, բայց որի մասին առ այժմ ես չեմ ուզում, կանգ առնել քանի որ սրա համար առանձին ժողով եմ նշանակելու։

Այժմ ես առաջարկում եմ, որ խնդրից չշեղվենք և աշխատենք պարզաբանել քահանայական խնդիրը։ Դարձեալ ով ինչ ունի ասելու...

— Ո՞չ ո՞չ — շարունակեց մի և նցն պարոնը,

— այս խնդիրը կապ ունի ներկայ խնդրի հետ։ Մեղ ներկայումն քահանայ է հարկաւոր, եթէ մենք մերժենք խնդրատուին, մեր տիրացուներին, հարց է դալիս, թէ ի՞նչ պիտի անեն սրանք։

— Խօսք եմ խնդրում, — վեր կացաւ մի երրորդը, որի երեսի ծալքերի իւրաքանչիւր շարժումը և ձայնի ել և էջը ապացուցանում էին արդէն, թէ Ղազարի համար աննպաստ հայեցքներ պիտի պաշտպանէ։ Մեղանում մինչեւ օրս, — սկսեց պարոնը, — քահանայ ձեռնազրվել են հետեւեալ կերպով։ տեսնում ենք՝ մէկը գալիս է եկեղեցի, այսօր նա մասնակցում է խըմբին, վաղը միւս օրը մոմ է պահում, երրորդ

կոտրված սիրտ։

օրը քահանաների հետ է շրջում անօրհնանք  
և այն... ինչ ասել կուզե, որ մենք այդպիսի  
սիրող մասնակցողներին ոչինչ չենք կարող ա-  
սել քանի որ եկեղեցում ամեն մեկը մեզանից  
կարող է երգել: Բայց բանը նրանումն է, որ  
այդ մարդիկ մէկ էլ տեսաք ֆառաջայ հագան...  
թէ ով սրանց թոյլ տուեց, ում հաւանու-  
թեամբ է եղել—չզիտենք, միայն այսքանը հաս-  
տատ է, որ ժողովուրդի հաւանութիւն, համա-  
ձայնութիւն մեր մէջ անտես է արվել: Այդպի-  
սով այդ անկոչ ֆառաջաւորները հասել են  
մինչեւ չորս աստիճանի, նոյն իսկ սարկաւագու-  
թեան... Միայն քահանայ ձեռնադրվելու ժա-  
մանակ սրանք մի ինչ որ ստորագրութիւններ  
են ժողովել ու ձեռնադրվել: Այժմ, որպէս զի  
այդ անկոչ ընտրեալների առաջն առնվի, ես  
կարծում եմ, որ դրանց սկզբում չպիտի թոյլ  
տալ որպէս զի վազը միւս օրը չասեն, թէ տի-  
րացուն արդէն պիտի ձեռնադրվի: Հարեանցի  
կերպով կասեմ և տիրացուների մասին՝ քանի  
որ սրանք մեր հաւանութեամբ չեն կոչված,  
ուստի չպիտի պահանջ գնեն, որ հասարակու-  
թիւնը պարտաւոր է սրանց քահանայ ձեռնա-  
դրել... Կարծում եմ, որ նրանք կարող են մնալ  
և տիրացու: Միթէ անպատաւութիւն է տիրա-  
ցու մնալ:

— Ինչո՞ւ այն ժամանակ չէիք բողոքում, երբ  
որ տեսնում էիք, թէ այդ ձեր ատելի մարդիկը  
ֆառաջայ են հագել առանց ձեր զիտութեան,—  
բացականչեց Առիւծեանը, որ երկար ժամանակ  
լուսութիւն պահպանելուց յետոյ չկարողացաւ  
զսպել իր բարկութիւնը:

— Ես մեր յարգելի երեսփոխանին կասեմ,—  
շարունակեց նախկին խօսողը,—որ մենք, սրբա-  
զան հայր, միշտ բողոքել ենք, բողոքում ենք և  
այժմ, բայց մեր մէջ ոչինչ այնպէս անտես չե-  
արվել ինչպէս հասարակական ձայնը: Ես կա-  
րող եմ փաստերով հաստաել որ եղել է  
դէպք, երբ մենք էջմիածին ենք դիմել բայց  
մինչեւ պատասխան ստացվելը մի և նոյն մարդը  
ձեռնադրվել է: Ես չեմ ուզում հեռուն զնալ  
յիշում եմ երկրորդ դէպքը, որ մի քահանայի  
ձեռնադրութեան դէմ բազմասարագիր բողոք  
էինք ուզարկել էջմիածին, բայց պատասխան  
չափանից օր, իրիկվայ ժամերգու-  
թիւնից յետոյ յիշեալ քահանային կոչում են  
տալիս և հետեւեալ օրը ձեռնադրում... Հետա-  
քրքրվաղներին ասում էին, թէ էջմիածնից հե-  
ռուազրով իրաւոնք է ստացված... Յետոյ իմաց-  
վեց, որ այդ հեռազիւր վառ երեակայութեան  
ծնունդ էր... Եւ այդ քահանան մինչեւ այժմ

հանգիստ սրտով՝ հովւում է մեղ մեղաւորներիս: Ես բերեցի միայն երկու դէպք, բայց որքան սյնանման դէպքեր կարելի է գտնել քահանայական անաշառ քրօնիկոնում. . .

— Հարկաւոր է ձեռնազրել, ձեռնազրել. . .

— Քուէարկել, քուէարկել. . .

Տիրեց մի ընդհանուր իրարանցում՝ աղմուկ, գոչեններ, ակնարկներ: Պարզ էր, որ զժուարանում էին մէկմէկու հասկանալ երկու հակառակ ուղղութիւններ, երկու տարբեր հայեացքներ. սրանք, կարծես, երկու հակառակ հոսանքներ էին, որ հանգիպելով մէկ - մէկու, ոչ մինը նըրանցից չէր ուզում յետ մղվել: Մինը չէր ուզում հին ձեռվ ընտրութիւն անել և սրանով կամենում էր սեացնել բոլորովին անհամապատասխան մարդուն և քահանայական խնդրը բարձրացնել ընկած զրութիւնից, իսկ միւսը երկար տարիների ծառայութեան համար ուղղում էր փոխարէն վարձատրութիւն անել: Ո՞վ կարող էր սրանց հաշտեցնել երբ տարիների ուղղութիւնը, բեմիմը հակառակ հայեացքներ է մշակել: Այդ երկու կուսակցութիւնները, չնայելով որ միասին են ապրել մի եկեղեցու պատկանել, բայց մէկ - մէկուց այնքան հեռու էին կանգնած իրանց աշխարհայեցողութեամբ, ինչ-

պէս Աւստրալիայի պապուասը հեռու է եւրոպացի խնտելիգնատից իր մտաւոր զարգացողութեամբ: Եւ ի՞նչ կայ վտանգաւոր, քան հայեացքների անմիտ տարրերութիւնը:

Ո՞վ գիտէ, որքան երկար պիտի աւելէր այդ վիճաբանութիւնն, եթէ չլսվէր նախագահի զանգակի ձայնը:

— Պարոններ,—ասաց սրբազննախագահը, — ես արդէն խնդիրը պարզված եմ համարում և զագարեցնում եմ վիճաբանութիւնները: Այս, ես ևս կրկնում եմ, որ քահանան պիտի լինի կրթված, ուստի բոլորովին օրինական համարելով վկայական պահանջելը, ես կամենում եմ վերջ տալ խնդրին նրանով, որ առաջարկել պ. Ղաղարոս Մժեղեանին ներկայացնել իր ուսման վկայականը. իսկ քանի որ այդպիսի թուղթ չկայ, ես չեմ կարող թօյլ տալ քուէատուփեր դնել. . . և յայտարարում եմ ժողովը փակված:

Մի չտեսնված իրարանցում տեղի ունեցաւ: Տէրմակարեանները ջարդվեցան: Առիւծեանին ձանաչել չէր լինում: Նա կապտել էր, կատաղել էր և մինչեւ անգամ ընկել էր այնպիսի ինքնամոռացութեան մէջ, որ ինքն էլ չէր հասկանում: Թէ ինչեր էր ասում:

— Ես կրողքեմ, Կաթուղիկոսին կղիմեմ, —  
թափում էր իր փրփուրը նա, —ժողովս անկա-  
նոն է. . . Ես քո թողը երկինք կթացնեմ, —ուզ-  
դեց նա սրբազնի հասցեին, նրա գնալուց յե-  
տոյ, —Սոխէծեանը դեռ չի մեռած .. Թու կճա-  
նաչես նրան. . .

ամ Ան զբանաշատ ուժի ոյ և ընթացաւ ուն  
ոյ ընդուն զիման արդ, մաս ուրբախ զեխուր  
- անդամ ըստ գրեալի ուրբաւակ, միջամ  
զը առ պար, մատակարար խոհանուն մազ մի  
- ար ով նազան ընդուն ուրբախ մաս ծաղուն ուն

Որբան բան բոլորվեց այդ կարծ  
ժամանակում, որբան փոփոխութիւններ... Ճիշտ  
է ասած՝ որ կեանքը, կարծես, անիւ լինի, այ-  
սօր ընկածն է բարձրանում, վաղը բարձրից են  
յած գլորվում... Այդպէս եղել է տարիների,  
գարերի ընթացքում, այդպէս էլ լինում է:  
Ո՞վ կարող է բնութեան այդ օրէնքը խանգա-  
րել, ո՞վ կարող է այդ անիւը կանգնեցնել...

Երէկվան անպարտելի Առիւծեանն այնպէս  
զլորվեց, այնպէս ջարդվեց, հասարակութեան  
աչքում այնպէս ընկաւ, որ ստիպված եղաւ  
հրաժարվել երեսփոխանութիւնից, հոգաբար-  
ձութիւնից: Հրաժարական տալով՝ նա յոյս ու-  
նէր, որ նրան կվերընտրէին, կրկին կխնդրէին,  
բայց իր հաշւի մէջ նա չարաչար սխալ վեցաւ...

Նա սխալվեց և իր միւս հաշիւների մէջ։ Նա պսակեց Վարդուհուն, յօյս ունէր նորոգել իր նախին յարաբերութիւնները, բայց Վարդուհին նրան այնպիսի ընդդիմութիւն ցոյց տուեց, որ Առիւծեանն երեք երազել անդամ չէր կարող։ Յուսահատված նա հրաժարվեց իր պաշտօններից և սկսեց քաշված կեանք վարել։

Նրան փոխարիննեցին հասարակական ասպարիզում երիտասարդ, թարմ ուժեր, որոնք լի եռանդով նուիրվեցին հասարակական գործերին։

Տէր Մակարն նոյնպէս ստիպված եղաւ հրաժարվել կօնսիստօրի անդամութիւնից։ Ուրիշ ձար չկար։

Սրբազնը մի անդամից կամեցաւ մաքրել կօնսիստօրը վնասակար մարդկանցից։ Տերթը հասաւ և Գէորգի Միխայլովչին։ Նրան պարտաւորեց սրբազնը երկու շաբաթվայ մէջ գործերը յանձնել նոր քարտուղարի, որպիսին արդէն զլուխ անցած, Գէորգի Միխայլիչի տեղ վարում էր նրա պաշտօնը։ Նախին քարտուղարը այժմ էր նրա պաշտօնը։ Նախին քարտուղարը այժմ էր նոր փորձերը կարգի բերելով։ Նա առազեալված է գործերը կարգի բերելով։ Նա առաւտօնից մինչև իրիկուն թղթեր է ջոկում, գործերին է կացնում և իր անել վիճակի վրա ողբակաց զգացմունքով վերաբերվելով, մեղադում է հասարակութեան, որ նրան թողել է

այդպէս և աչքից դցել։ Երեկոները նա մէկ-մէկ գալիս է Ղազարի մօտ, բայց սրանց մէջ բացակայում է առաջվան աշխոյժ կեր ու խումբ, քաղցր զրոյցը Կարծես, մի բիրտ ձեռքով խլել են սրանց սրտից խօսքն ու զրոյցը։ Ճիշտ է, Ղազարն այնքան էլ տիսուր չէ, նա դեռ ծախսում է օժիտ ստացած հազարները և յօյս է տածում, որ վաղ թէ ուշ կդայ այդ օրն, երբ կփոխվի այդ սրբազնը, կփոխվին հանդամանքները—և նա կձեռնադրվի։

Այդ քաղցր յօյն ունէր իր մէջ և Մկըրտում աղան, որ շատ անդամ պատահելիս յուսազրում էր նրան։

— Յոյսդ մի կտրիր, Աստուած ողորման է, — ասում էր նա, — ինձ նայիր, ես ինքս ևս առաջ ոչինչ էի, հօրդ ձեռքին էի մտիկ տալիս, բայց այսօրվան օրը փառք իրան... Այնպէս էլ դու, կապրես։ Աստուած իր ստեղծած ագուալին էլ անհաց չի թողնում, մրջիւնի հոգաք քաշել է, ուր մնաց որ մարդու... Շատ չէք, ընտանիքով ծանրաբեռնված չես, երկու գլուխ էք, մի կերպ կկառավարվէք։ Երեկի թէ բարին այս է... Մարդ ենք, աշխարհէք է, ժամանակ է, այսօր սա է, վաղը ուրիշն է—ետ ու առաջ կձեռնադրվես... .

Բայց ոչ ոք այնքան չտուժեց, ինչպէս խեղձ  
 Վարդուհին: Անթափանց անորոշութիւնը խուլ  
 Հարուածներ էր հասցնում նրա «կոտրված  
 սրտին»: Սարսափելի անբախտութեան ճնշում:  
 Ների տակ նա դարձել էր անխօս, լուռ: Նա  
 համբերութեամբ տանում էր իր խաչը, նրա  
 ծանրութիւնը: Այժմ ոչ ոք չկայ նրան միսիթա-  
 րող: Նա ծածուկ ամենքից արտասուք է թափում:  
 Այն հոգեկան փոթորիկները, որ ալեկոծում են  
 նրա սիրալ, Վարդուհին հպարտութեամբ աշ-  
 խատում է քօղարկել հետաքրքրվողների աչքե-  
 րից: Երբեմն - երբեմն ակամայ հառաջանք դուրս  
 պրծնելով նրա բեկված սրտից, արտայայտում է  
 նրա ներքին աշխարհի անբուժելի վիշտը, խոր  
 ցաւը և անկարեկից վիճակը . . .

Վ Ե Ր Զ:





